

ՅԱՎԵԼՎԱԾ



ՎԻԼՅԱՄ ՇԵՔՍՊԻՐ

ԱՆՏՈՆԻՈՍ ԵՎ ԿԼԵՈՊԱՏՐԱ.

Թարգմանություն՝
ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՑԻ

Տեսող պատրաստեց
ԼՈՒՄԻԿ Ա.ԹԵՂՅԱՆ

«Ենթապիտականի» առաջին դրույց՝ բնմերցովը կդանի լուսիկ Աբեղյանի հապորդումը Ենթապիտի «Միջարդ Երրորդ» պատմական քանիկի և «Անտանիս և Կլեոպատրա» պատմական սղբերգության Վահան Թոթովինցի կատարած թարգմանությունների մասին։ Հազորդման հետ միասին և Արեգյանը հրապարակմաններից «Միջարդ Երրորդի» համար թարգմանչի գրած անտիպ առաջարանը։

«Ենթապիտականի» արև զրբած հրապարակվում է «Անտանիս և Կլեոպատրայի» թարգմանությունը։

Ենթապիտի այս սղբերգությունը, որ պատկանում է նրա հոսմենական շարքին, մի քանի անգամ թարգմանվել է հայերեն։ Եթե Դամինիկ Յնազյանի թարգմանությունը, որ նախ լույս է տեսել «Անահիտի» էջերում (1909), ապա առանձին զրբավ Փարիզում (1911), Համարգի այդ գործի հայերեն ամրողյական թարգմանությաններից առաջինը, ասպա սա կլինի թվակ երրորդը, քանի որ Յնազյանից հետո և Թոթովինցից առաջ այդ երկը թարգմանել է նաև Հովհ. Մասենյանը, որի թարգմանությունը ի գեղ նույնպես անտիպ է։ Կա նաև շորորդ թարգմանությունը, կատարված է և Դաշտիցի կողմից, որը լույս է տեսել Ենթապիտի երկերի երկշատորյա ժողովածուում (1965, Հատոր երկրորդ)։

Վ. Թոթովինցի թարգմանությունը լույս է տեսնում առաջին անգամ։

Թարգմանության ձեռապիտը պահպամ է Երևանի Ենթապիտյան դրադարանում։ Այս, ինչպես նաև «Միջարդ Երրորդի» թարգմանությունների ձեռագիրը լուսիկ Աբեղյանը նվիրաբերել է Ենթապիտյան դրադարանին։

ԱՆՏՈՆԻՈՍ ԵՎ. ԿԼԵՇՊԱՏՐԱ.

ԳՈՐԾՈՂ	ԱՆՁԵՐԸ
1. Մարկոս Անտոնիոս	<i>Եռապետներ</i>
2. Օլտավիոս Կեսար	
3. Մ. Էմիլիոս Լեպիտոս	
4. Սեբատոս Պոմպեոս	<i>Անտոնիոսի բարեկամները</i>
5. Դոմիդիոս էնոքարքոս	
6. Վենտիդիոս	
7. Էրնո	
8. Ակարոս	
9. Դերկետաս	
10. Դեմետրիոս	
11. Փիլոն	
12. Մեկենաս	
13. Ագրիպպա	
14. Դոլարելլա	<i>Կեսարի բարեկամները</i>
15. Պրոկուլոս	
16. Թիբեռոս	
17. Գալլոս	
18. Մենաս	
19. Մենեկրատես	<i>Պոմպեոսի բարեկամները</i>
20. Վարրիոս	
21. Տավրոս — Կեսարի լեյտենանտ-զորավարը	
22. Կանդիոս — Անտոնիոսի լեյտենանտ-զորավարը	
23. Սիլիոս — մի սպա Վենտիդիոսի բանակում	<i>Կլեոպատրայի հետևորդները</i>
24. Էփրոնիոս — մի ղետպան Անտոնիոսից ուղարկված Կեսարին	
25. Ակեսաս	
26. Մարդիան	
27. Սեւլիոս	
28. Դիոնիսոս	

29. Մի գուշակ

30. Մի զեղումկ

31. Կլեոպատրա — Եգիպտասի թագուհի

32. Օկտավիա — Կեսարի քույրը և Անտոնիոսի կինը

33. Եարժիան

34. Իւսու

} Կլեոպատրայի նաժիշտները

Սպահեր, զինվորներ, պատվամարերներ և ուրիշ հետեւրդներ:

Գործողությունը կատարվում է Հառնեական կայսրության զանազան մասերում:

Ա. Բ Ա. Բ Ա. Ռ Ա. Ռ Ա. Զ Ի Ն

Ա. Պ Ա. Տ Կ Ե Ր

Ալիքսանդրիա. մի սենյակ Կլեոպատրայի պալատում:
Մտնում են Գևմետրիոսը և Փիլոնը:

Փիլոն—Մեր զորագետի այս սերը հիմար
Անցնում է արդեն բոլոր շափերը:
Այն սքանչելի նրա աշքերը,
Որ պատերազմի զորաշարքերի
Եվ կարգի վրա շողջողում էին,
Զրահված Արեսի աշքերը որպես,
Այժմ հակում են իրենց նայվածքի
Պարտականությունն ու նվիրումը
Մի թխաերանդ ճակատի վըրա:
Իր զորավարի սիրտը, որ ահեղ
Մաքառումների շփոթում պատռեց
Զրահն իր կրծքի, արդեն կորցրել է
Իր շրթեղումը և դարձել է մի
Փքոց կամ հովհար զովացընելու
Հեշտասիրությունն մի գնչու կնոշ:

Նվազ ներսից:

Ահա զալիս են: Դիտի՛ր ուշադիր
Եվ դու կըտեսնես աշխարհի երրորդ
Սյունն այլափոխված մի պոռնիկ կնոջ
Ցած խեղկատակի: Լավ դիտի՛ր և տե՛ս:

Մտնում են Անտոնիոսը և Կիելպատրան և իրենց շխախումբը:
Ներդիմիները նովինարում են Կիելպատրային:

Կիելպատրա—Եթե այդ սկը է, ասա՛, ինչքա՞ն է:
Անտոնիոս—Մուրացկանություն կա այն սիրո մեջ,

Որ կարելի է հաշվի ենթարկել

Կիելպատրա—Ռւզում մամ գնել սիրելու շափի.

Մի սահմանակետ

Անտոնիոս—Ռւրեմն զու պիտք է գտնես նոր երկինք
Եվ նոր մի երկիր:

Մտնում է մի սպասալիոր:

Սպասավոր—Էուր կա Հոռմից, ի՞մ բարեսիրա տեր:
Անտոնիոս—Դա խոշտանդում է իմ ականջները:

Ամփոփումն ասաւ

Կիելպատրա—Ո՛չ, Անտոնիոս, լսի՛ր լուրերը,
Միզուցի՝ Ֆուլիան խիստ զայրացել է,
Կամ թե, ո՞վ դիտե, սակավամորուս
Կեսարը հանկարծ չի՝ ուզարկել իր
Պատղամը Հզոր — «Երա՛ այս կամ այն,
Գրավի՛ր երկիրն այս, աղատազրի՛ր այն,
.Գործազրիր զու այդ, եթե ոչ՝ մենք քեզ
Կըգատապարտենք»:

Անտոնիոս—Ինչպէ՞ս, սիրելիս:

Կիելպատրա—Միզուցի, և դա հավանական է,
Այստեղ չես մնա ավելի երկար:
Թերեւ Կեսարն ուզարկել է քեզ
Քո հեռացումը, ուստի մտի՛կ տուր
Նրան, Անտոնիոս:
Ո՞ւր է Ֆուլիայի վկայությունը:
Ռւզում հմ ասել՝ Կեսարի, ո՛չ, ո՛չ,
Երկուսի: Կանչիր սուրհանդակներին:
Այնքան ճշմարտ, որքան թագուհին
Եմ Եղիպտոսի, զու կարմըրում ես,
Անտոնիոս, և այդ արյունը քո է
Հպատակության մի խոր հավաստիք

Կեսարի, և կամ՝ հատուցանում է

Քո այն ամոթը, երբ սրալեղու

Ֆուլվիան սաստում է: Սուրբ Հանդակները:

Անտոնիոս—Եվ թող Հռոմը հալլի Տիբերուամ,

Եվ լայն կամարը մեծշեն կայսրության

Թող ցած տապալվի:

Աչա այստեղ է իմ տիեզերքը:

Արքայություններ կավից են շինված:

Մեր երկիրն աղքոտ սնուցանում է

Հավասարապես մարդուն, գաղանին,

Եվ որ այս կյանքի աղնվությունը

Այս է անելու, երբ որ այսպիսի

Մի փոխադարձ զույգ,

(համբուրում է Կլեոպատրային)

Եվ մի այսպիսի երկյակ կարող է

Անել այդ, որով հարկադրվում եմ,

Հանձըն առնելով պատիժի ցավը,

Ապացուցելու աշխարհին, որ մենք

Անզուգական ենք:

Կլեոպատրա—Ընտիր կեղծություն:

Ինչո՞ւ Ֆուլվիայի հետ ամուսնացամ,

Երբ չէր սիրում նրան:

Թվում եմ հիմար, առանց լինելու:

Անտոնիոսը միշտ նույնը կըմնա:

Անտոնիոս—Բացի հուզելուց Կլեոպատրայից:

Եվ սիրո սիրույն և նրա քաղցըր

Ժամերի սիրույն՝ շփշացնենք

Մեր ժամանակը բիրոտ խոսակցությամբ:

Զեա մի վայրկյան այժմ մեր կյանքի մեջ,

Որ անցնի առանց զվարճանքների:

Ասա՛, այս գիշեր ի՞նչ զբոսանք կա:

Կլեոպատրա—Ո՞չ, ունկնդրություն տալ դեսպաններին:

Անտոնիոս—Ֆի՛... դու վիճասեր Կլեոպատրա,

Որին հարմար է ամեն ինչ սաստել,

Ծիծաղել ու լալ, որի ամեն մի

Կիրքը ճգնում է դարձընել իրեն

Քո մեջ զեղկցիկ և զմայլելի
Ո՛չ մի սուրճանաբակ, բացի քոնիցը,
Եվ բոլորավին մենակ, այս դիշիր
Մենք կթափառենք մոտ փաղոցներով¹,
Մանոթանալու հատկություններին
Այս ժողովրդի ե՛կ, ի՛մ թագուհի,
Երեկ երեկո ինքդ էիր ուզում:

(Սպասավորին)

Մի՛ խոսիր մեզ Հետո

Գուրս են զնում Անտոնիոսը և Կիեսատարան՝ շբախմբի նետ միասին:

Թեմեարիոս—Մի՛ թե Անտոնիոսն այսրան թեթե է
Հարգում Կեսարին:

Փիքն—Այս, երրիմքն, երր նա այլերս
Անտոնիոսը չէ, նա ցած է մնան
Այն հատկություննից, որ պետք է զնա
Անտոնիոսի հետ:

Թեմեարիոս—Խորը ցավում եմ, որ նա դարձնում է
Իրավացի այն խոռվրոսությունները,
Որ ժողովուրդը Հոռմի անում է
Իր անձի մասին, բայց ևս հույս ունեմ
Վաղը ավելի լավ արարքների:
Եղե՛ք երջանիկ:

Գուրս են զնում:

Բ. Պ. Ա. Տ. Կ. Ե. Բ.

Ավեմսանդրիա: Կիեսատարայի պալատի մի ուրիշ սենյակը:
Մտնում են Շարմիանը, Խասը, Ավեմսասը և մի գուշակ:

Շարմիան—Մինչո՞ր Ալեքսաս, քա՛զը Ալեքսաս, ամեն բանից բա՛րձր
Ալեքսաս, զրեթե ամենակատարյա՛լ Ալեքսաս, որտե՞ղ է այն

1 Պլուտարքոսը հիշատակում է, որ Անտոնիոսը երբեմն ժպտվելով իբրև ծառա,
դուրս էր գալիս և թափառում բաղարի փողոցներում՝ կատակելով և զվարճանալով:

գուշակը, որին դուք այնքան ներբռղեցիք թագուհուն: Օ՛, ես
կուզենայի ճանալել նրա ամուսնուն, որ, դուք ասում էիք, պետք
է զարդարե իր եղջրուները ծաղկեպսակներով:

Ալեքսաս—Դուշա'կ...

Գուշակ—Ի՞նչ եք կամենում:

Շարմիան—Ա՛յս է այդ մարդը: Դո՞ւք եք, պարոն, այն մարդը, որ բա-
ներ գիտեք:

Գուշակ—Բնության գաղտնիքների անհուն մատյանում ես կարող եմ մի
քիչ վերծանել:

Ալեքսաս—Ճո՞ւց տուր նրան քո ձեռքը:

Մտնում է էնորագրոսը:

Էնորագրոս—Շո՛ւտ պատրաստոցեք ճաշկերույթը և բավականին զինի՞
ըմպելու Կիոպատրայի կենացը:

Շարմիան—Բարի պարոն, տո՞ւր ինձ մի բարի բախտ:

Գուշակ—Ես բախտ չիմ շինում, միայն գուշակում եմ:

Շարմիան—Խնդրում եմ, ուրիմն գուշակի' ինձ համար մի բարի բախտ:

Գուշակ—Դու պիտի լինես շա՞տ ավելի շքնաղ, քան այժմ ես:

Շարմիան—Ուզում է ասել՝ մարմնով:

Երաս—Ո՛չ, ուզում է ասել, պետք է շպարվես, երբ պառավես:

Շարմիան—Կնճիռները ծաժկելու համար...

Ալեքսաս—Մի խանգարիր նրա կանխագիտությունը, եղի՛ր ուշադիր:

Շարմիան—Սո՛ւտ:

Գուշակ—Դու պիտի լինես ավելի սիրատեն, քան սիրված:

Շարմիան—Ես նախընտրում եմ խմելով բորբոքել իմ լյարդը:

Ալեքսաս—Մտի՛կ տուր նրան:

Շարմիան—Այժմ մի լավը, մի որևէ ընտիր բախտ: Թող ամուսնանամ
ես երեք թագավորի հետ մի նախակեսօրում և դառնամ բոլորի
այրին: Թող հիսուն տարեկանիս ունենամ մի զավակ, որին
Հրեաստանի Հերովդեսը ցուց տա հպատակություն: Դտիր ինձ
մի բախտ ամուսնանալու Օկտավիոս Կեսարի հետ և ընկեր դառ-
նալու իմ տիրուհուն:

Գուշակ—Դու ավելի պիտի ապրես այն տիրուհուց, որին սպասար-
կում ես:

Նարմիան— Օ՛, սրանցելի է ևս երկար կլանքն ավելի հմ սիրում, քան
թուղթ:

Գուշակ— Դու տեսել ես և ապրել ավելի չքնաղ մի նախկին բախտ, քան
այն, որ մոտենում է:

Նարմիան— Ուրիմն հավանական է, որ իմ զավակներն անուն չունենան:
Խնդրեմ, քանի՞ աղա և քանի՞ աղջիկ պետք է ունենամ:

Գուշակ— Եթե քո ցանկություններից ամեն մեկն ունենար մի արդանդ
և ամեն մի ցանկություն լիներ բեզմավոր, կունենայիր մի
միլիոն:

Նարմիան— Դո՞ւրս կորիր, հիմա՞ր: Ես ներում եմ քեզ, ինչպես մի
վճուկի:

Ալեքսաս— Դու կարծում ես ձիայն քո անկողնի սավաննե՞րը տեղակ
հն քո ցանկություններին:

Նարմիան— Արի՞, այժմ գուշակիր երասի բախտը:

Ալեքսաս— Բոլոր պետք է խմանանք մեր բախտը:

Էնորաբրոս— Եթե և շատերիս բախտը այս գիշեր պետք է լինի—հար-
րած, զիպի անկողի՞ն:

Իրաս— Ահա մի ափ, որ եթե ուրիշ բան չի կանխադուշակի՝ գեթ կկան-
խադուշակի ողջախոճություն:

Նարմիան— Ճիշտ այնպես, ինչպես վարարող նեղոսը, որ կանխանշան
է սովոր:

Իրաս— Գնա՞՛, դո՞ւ վայրագ անկողնակից, դու չես կարող գուշակի:

Նարմիան— Ո՛չ, եթե մի յուղոտ ափ արդասավորության մի գուշակու-
թյուն չէ, ես չեմ կարող քորել իմ ականջը: Խնդրում եմ՝ գուշա-
կի՞ր նրա համար միայն լուր օրվա մի բախտ:

Գուշակ— Զեր բախտերը նման են իրար:

Իրաս— Բայց ինչպե՞ս, բայց ինչպե՞ս, տուր ինձ մանրամասները:

Գուշակ— Ասել եմ:

Իրաս— Ես նրանից մի մատնաշափ ավելի լավ բախտ չունե՞մ:

Նարմիան— Լա՞վ, եթե դու ինձանից մի մատնաշափ ավելի լավ բախտ
ունենաս, որտե՞ղ կնախընտրեիր որ լիներ:

Իրաս— Ոչ իմ ամուսնու քթում:

Հա ակնարկություն է ե. արարում բերված թղի կողովին, որով Կէռոպատրային
բերում են մահապատիժը: Նարմիանն ինքը անդիտակից է դրան, բայց Ենքսպիրը հար-
մարվում է նախնյաց սնոտիապաշտության:

Շարմիան—Երկինքները բարվոքեն մեր ստոր խոհերը... Ալեքսանդր, հկ,
նրա բաշխտը, նրա բաշխտը: Օ՛, թողե նա ամուսնանա մի կնոջ
հետ, որ չի կարող հղի լինել, քաղցր իսիս, աղերսում եմ քեզ:
Եվ թողե այդ կինն էլ մեռնի, և նրան տուր մի ուրիշ ավելի
վատը, և թող վատին հաջորդի ավելի վատը, մինչև բոլորից
ամենավատը հետեւ նրան ծիծաղելով մինչև նրա գերեզմանը,
հիսնապատի՛կ կավատ: Բարի իսիս, լսի՛ր իմ այս աղոթքը,
նույնիսկ, եթե մերժես ինձ ավելի ծանրակշիռ մի բան: Բարի
իսիս, աղերսում եմ քեզ:

Իրան—Ամե՞ն: Սիրելի՛ աստվածուհի, լսի՛ր ժողովրդի այդ աղոթքը,
վասնզի, ինչպես սրտարեկ բան է տեսնել մի վայելակազմ տղա-
մարդ, որ պոռնիկ կին ունի, այնպես էլ մահացու մի վիշտ է
տեսնել մի անդգամ սրիկա, որ դավաճանված չէ: Ուստի, սիրելի՛
իսիս, պահպանի՛ր վայելակությունը և բախտավորեցրո՛ւ նրան
ըստ այնմ:

Շարմիան—Ամե՞ն:

Ալեքսան—Տեսի՛ք, եթե իրենց ձեռքում լիներ ինձ կավատ դարձնելը,
իրենք իրենց բող կդարձնեին, բայց կանեին:

Էնորաբրոս—Ահա զալիս է սինյոր Անտոնիոսը:

Շարմիան—Թե նա չէ, թագուհին է:

Մտենում է Կլեոպատրան:

Կլեոպատրա—Տեսա՞ր իմ տիրոջը:

Էնորաբրոս—Ու, իմ տիրուհի:

Կլեոպատրա—Մի՞թե այստեղ չէր:

Շարմիան—Ո՛չ, ի՞մ տիրուհի:

Կլեոպատրա—Նա հակում ուներ ուրախանալու,

Բայց հանկարծ մի խոհ հռոմեական

Մեխվեց իր մտքում: Հե՞յ, էնոքա՛րրու:

Էնորաբրոս—Ի՞նչ է, տիրուհի՛:

Կլեոպատրա—Որոնի՛ր նրան և շուտ բե՛ր այստեղ:

Ալեքսան ո՞ւր է:

Ալեքսան—Այստեղ, լսում եմ, տերըս դալիս է:

Կլեոպատրա—Մենք չենք կամենում նայել նրա վրա:

Գնա՛նք միասին:

Դուս են զնում Կիոսպատրան, Էնորաբրոսը, Շարմիանը, Խրաբը, Ավելսոսը և գուշակը:
Մտնում է Անտոնիոսը մի պատգամարերի մետ և ննտեղըդեւ:

Պատգամարեր—Յուլյիան, քո կինը, առաջինն եկալ
Իտալմաճակատը³:

Անտոնիոս—Արդյոք իմ եղբոր՝ Լուկիոսի՝ բնդդեմ:

Պատգամարեր—Այս՝ բայց շուտով ուազմն այդ վերջացավ,

Եվ ժամանակի հանգամանքները

Նրանց դարձբրին լավ բարեկամներ,

Եվ միացնելով իրենց ուժերը

Բնդդեմ Կիսարի, որ ուազմի ելքում

Ավելի հաջող, նրանց վոնդեց

Բառիայից գուրս՝ առաջին բախման:

Անտոնիոս—Ունե՞ս սրանից ավելի վատ լուրս

Պատգամարեր—Անպիտան լուրը ապականում է

Նաև պատմովին:

Անտոնիոս—Երբ պատկանում է լուրը տիսմարին
Եվ կամ երկչոտին: Գու շարունակի՛ր:

Այն բաները, որ արդեն անցած էն՝

Ինձ համար արդեն վախճան էն դուել:

Այսպես է — ով որ ինձ ճիշտն հաղորդի,

Եթե զրա մեջ մա՞ն իսկ թար կենա,

Կունկնդրիմ նրան՝ իրեն շոյում է:

Պատգամարեր—Լարիենոսը — սա տիսուր լուր է —

Իր Պարիսական զորաբանակով

Տիրել է Ասիո՛ մինչև Եփրատը,

Դրոշն հաղթական ծածանեցնում է

Սուրբիայից մինչև Լուդիա և Ցոնիա:

Մինչդեռ...

Անտոնիոս—Անտոնիոս՝ պիտի ասեիր:

Պատգամարեր—Օ՛, իմ բարի տեր:

Անտոնիոս—Խոսի՛ր ինձ հետ պարդ, մի՛ նրբացնիր:

Բնդհանուր լեզուն, Կլեոպատրային

Անվանի՛ր այնպիս, ինչպես Հոռմում

3 Այս անցըը ճիշտակված է Պլուտարքոսում:

Նրան կոչում են: Այսպանի՛ր դու ինձ
Ֆուլիալի լեզվով և անարգիր դու
իմ հանցանքները այնպիսի լեցուն
իրավունքներով, ինչպես շարկամը
Եվ ճշմարիտը ունեն զորություն
Արտասանելու:

Օ՛, մենք ուրիմըն աճեցընում ենք
Որուներ, երբ մեր կենարար շոմը
Մնում է անշարժ, երբ մեզ պատմում են
Մեր հոռությունը, կարծես մեր հերկն է:
Առաջման գնաս բարով:

Պատգամաբեր—Ես միշտ պատրաստ եմ ձեր բարձր հաճույքին:

Դուքս է զեռմ:

Անտոնիոս—Ի՞նչ լուր Սիկիոնից, հե՞լ, դո՛ւք, խոսեցի՛ք:
Ա. նետերդ—Սիկիոնից եկա՞ծ... Կա՞ մի այդպիսին,
Բ. նետերդ—Նա սպասում է ձեր հրամանին:
Անտոնիոս—Թողեք երկի:

Ես պետք է քանդիմ այս եզիստական
Արգելանքները, կամ կորչեմ իսպառ
Այս հիմար սերում:

Մանում է Բ. պատգամաբերը:

Ի՞նչ ես դու, ասա՛:
Բ. պատգամաբեր—Ֆուլիան, քո կինը, մեռած է, տեր իմ:
Անտոնիոս—Որտե՞ղ նա մեռավ:
Բ. պատգամաբեր—Սիկիոնում, տե՛ր իմ: Այս նամակում կա
իր հիվանդության տևողությունը,
Եվ դեռ այլ լուրջ բան, որ բերում է քեզ
Մանոթացնելու:

Տալիս է մի նամակ:

Անտոնիոս—Թո՛ղ ինձ և գնա՛:

Եվ ահա մեկնեց մի վսիմ ողի՛,
Ես այդարես գլ այդ ցանկանում էի
Ինչ որ հաճախ մեր արհամարհանքը
Խստիվ մերժում է՝ ուզում ենք կրկին
Մեզ վերադառնաւ ներկա հաճույքը,
Նվաստացրնող շրջափոխությամբ,
Գառնում է իր իսկ հակառակորդը
Բարի է ֆուլվիան այժմ, որ չկատ
Եվ այն ձեռքը, որ հալածեց նրան՝
Պիտի ցանկանար հա կորդել նրանն
Պետք է հետանամ ևս այս կախարդիշ
Թագուհուց: Տասր հազար վնասներ,
Ավելի շարիք, քան թե ես զիտեամ,
Թիսում են ահա իր մեղկությունը:
Հո՞, էնորարբոս:

Վերամտնում է էնորարբոս:

Էնորարբոս—Ի՞նչ եք ցանկանում:

Անտոնիոս—Պետք է շտապով մեկնեմ այստեղից:

Էնորարբոս—Ուրիմն մենք սպանում ենք մեր բոլոր կանանց, մենք
տեսնում ենք, թե ինչպես մի անրարյացակամություն մահացու
է նրանց համար, ևին նրանք կրեն մեր մեկնումի հարվածը, դա
մահ է:

Անտոնիոս—Ես պետք է գնամ:

Էնորարբոս—Մի պարտադրիչ պարագայում թող զոհվեն կանայք: Շատ
ցավալի է նրանց իզուր կորստի մատնել, թեև նրանց և մի մեծ
նպատակի ընտրության մեջ՝ կանայք չպետք է հարգանքի ար-
ժանանան: Կլեոպատրան, եթե այս ժիսորից մի փոքր մասնիկ
հասնի նրա ականջին, վայրկենապես կմեռնի: Ես նրան տեսել եմ
քսան անդամ մեռնելիս սրանից շատ ավելի թեթև քանի համար:
Ես հաստատապես կարծում եմ, որ մահան մեջ կա մի ինչ-որ
դյութիւն ողի, որ նրան քնքորեն ներգործում է, մեռնելու այն-
պիսի՛ հեշտություն ունի նա:

Անտոնիոս—Նա խորամանկ է, ավելի քան մարդս կարող է երեակալելը
Էնոքարոս—Ավաղ՝ ո՛չ, տեր իմ, նրա կռքերը շինված են անարատ
սիրո ամենաշքնաղ մասից: Մենք չենք պարող նրա հովերը և
շրերը կոչել հառաջանքներ և արցոնքներ, նրանք ավելի ահեղ
փոթորիկներ և մրրիկներ են, քան օրացույցները կարող են հա-
ղորդել: Սա չի կարող խորամանկություն լինել նրա մեջ, եթե
այդպես լիներ՝ նա կարող էր բերել տեղատարափ անձրև՝ ինչ-
պես Արամազգը:

Անտոնիոս—Երանի՛ երբեք տեսած չինեի ես նրան:

Էնոքարոս—Օ՛, տեր իմ, ուրեմն դուք շպիտի տեսնեիք մի սքանչելի
գլուխգործոց, և նրանով բախտավորված չինելով, պիտի պա-
կասեցնեիք ձեր ուղևորության արժեքը:

Անտոնիոս—Ֆուլիան մեռած է:

Էնոքարոս—Տեր ի՞մ:

Անտոնիոս—Ֆուլիան մեռած է:

Էնոքարոս—Ֆուլիան:

Անտոնիոս—Մեռած:

Էնոքարոս—Տեր իմ, մատուցի՛ք աստվածներին երախտագիտության
մի զոհ: Եթե հաճելի է լինում աստվածություններին վերցնել
կինը մի մարդուց, դա մատնանշում է մարդուն աշխարհի դեր-
ձակներին, միտիթարելով դրանով, որ երբ հին-հագուստները մաշ-
վում են, կան մարդիկ, որոնք նորն են շինում: Եթե ֆուլիայից
բացի ուրիշ կին չիներ, իսկապես որ սրտարեկ պիտի լինեիք և
դեպքը պիտի լիներ ողբալի: Այս մորմոքը պատկած է միսիթա-
րանքով: Չեր հին զգեստը առաջ է բերում կանացի մի նոր ներք-
նազգիստ: Եվ, իսկապես, այն արցոնքները, որ գոյություն ունեն
մի սոխի մեջ, պիտի զրեն այս վիշտը:

Անտոնիոս—Այն գործը, որ նա բացել է պետության մեջ, չի կարող հան-
դուրժել իմ բացակայությունը:

Էնոքարոս—Իսկ այն գործը, որ դուք եք բացել այստեղ, չի կարող լի-
նել առանց ձեզ, մասնավորապես Կեռպատրայինը, որն ամրող-
ջապես ձեզանից է կախված:

Անտոնիոս—Այլկըս ո՛չ մի թեթև պատասխան:

Մեր սպաները թող տեղեկանան

Մեր նպատակին: Ես կըբացատրեմ

Թագուհուն՝ մեկնման մեր պատճառները,

Կոտանամ նրբա թույլտվությունը
 Քանզի ոչ մխայն Յուզվիայի մահը,
 Նաև ավելի ստիպողական
 Այլ շարժառիթներ մեզ հպորապես
 Հետապնդում են, ուրիշ նամակներ
 Նաև Հոռոմի մեր հնարամիտ
 Բարեկամների՝ աղերսում են մեզ
 Գիպի Հայրենիքու Սեփառոս Պոմպեոսը
 Կմարին մարտի հրավիրել է,
 Այժմ նա իշխում է ծովի կալսության
 Հեղճեղուկ մարով մեր ժողովուրզը,—
 Որի սերն երբեք չօղակավորվեց
 Արժանավորին, մինչև արժերն իր
 Չանցավ,— ոկսել է արդեն խոկ նետել
 Մնձ Պոմպեոսի և բոլոր նրբա
 Շուրն ու պատիվը իր որդու զիսին
 Եվ որը բարձր է անունով, ուժով,
 Ավելի բարձր է, բան թե երկուսը,
 Թե արյամձ և թե կյանքով, կանգնում է
 Իրը ավագ զինվոր, և որի ուժը
 Ավելանալով՝ կարող է լինել
 Շատ վտանգավոր՝ աշխարհի համար:
 Շատ բան է աճում, որ, ինչպես մազը
 Նժույգի, նոր կյանք առած, սակայն դեռ
 Ոչ օձի թույնը⁴: Ասա դու բոլոր
 Նրանց, որոնք մեր հրամանների
 Ներքո են, որ մեր կամքն է շուտափուլթ
 Մեկնենք այստեղից:

Հնորաբրու—ես կասեմ, տե՛ր իմ:

Գնում են դուրս:

⁴ Ակեարկություն այն գին առասպելին, ըստ որի, երբ ձիու բաշը թաթախում էին նեխած շրում՝ փոխվում էր կենդանու:

Ալեքսանդրիա: Մի սենյակ Կլեոպատրայի պալատում:
Մտնում են Կլեոպատրան, Շարմիանը, Խրասը և Ալեքսասը:

Կլեոպատրա—Ուր է նա, Շարմիան:
Շարմիան—Դրանից ի վեր շեմ տեսել նըրան:
Կլեոպատրա—Տես թե ո՞րտեղ է, ո՞վ կա նըրա հետ,
Եվ ի՞նչ է անում, բայց մի ցույց տուր թե
Ես եմ ուղարկել,—թե գտնես տխուր,
Ասա նրան, որ պարում եմ, երգում,
Թե գտնես ուրախ, տեղեկացրու,
Որ հիվանդացա հանկարծ: Շուտ, գնա'
Եվ վերադարձիր:

Դուս է գնում Ալեքսասը:

Շարմիան—Մադամ, թվում է, թե դուք սիրում եք
Նրան խոր սիրով, չեք գործազրում
Այնպիսի մեթոդ, որ բռնադիմատեք
Նույնը նրանից:

Կլեոպատրա—Ի՞նչ պետք է անեմ, ոչինչ շգիտեմ:
Շարմիան—Ամեն մի բանում դուք տեղի տվեք,

Մի՛ հակառակեք և ո՛չ մի բանում:

Կլեոպատրա—Դու դաս ես տալիս տխմարի նման,
Այդ կերպ ես նըրան կը կորցնեմ իսպառ:

Շարմիան—Մի՛ փորձեք նրան այդքան շափից դուրս:

Ես ցանկանում եմ, որ զգուշանաք,

Կզա ժամանակ կատենք այն բանը,

Որից մենք հաճախ երկուող ենք կրել:

Սակայն գալիս է Անտոնիոսը:

Կլեոպատրա—Հիվանդ եմ, տխո՞ւր:

Մտնում է Անտոնիոսը:

Անտոնիոս—Ես ցավում եմ, որ պիտ խոսեմ նրան
Իմ ծրագրի մասին:

Կլեոպատրա—Օգնիր ինձ, Շարմիա՛ն, Հիմա կը նկան հաւ
Սըրան երկար զի յարելի տոկալ,
Թնության ուժերը չեն լինի նկցուկր
Անտոնիոս—Սակայն թափուհիդ իմ ջատ սիրելի...
Կլեոպատրա—Աղջաւամ մաքել, հեռու ինձանից:
Անտոնիոս—Ե՞նչ է պատահել
Կլեոպատրա—Ես խմանում եմ այդ նույն աշքերից.
Որ կա մի լավ լուր եվ վի՞նչ է ասում
Կինն ամուսնացած Կարող եք մեկնել
Երանի թե նա երրեք թույլ շատր,
Որ զայֆր Թող նա չասի, թե ևս եմ
Փառում ձեզ այսահեղ, ես իշխանություն
Չունիմ ձեզ վրա, դուք ողջ նրանն եք
Անտոնիոս—Ամենից բավը զիտեն աստվածները:
Կլեոպատրա—Երբեք շի եղել թագուհի այսրան
Մեծապես խարված ես զեռ սկզբում
Զայֆր զավերը տեսա սերմանված:
Անտոնիոս—Կլեոպատրա...
Կլեոպատրա—Ինչո՞ւ կարծեի, որ դուք կարող եք
Լինել ճշմարիս և իմը, թեն
Դուք երդըմնալիս սարսուցնում եք
Գա՞ն աստվածների, դուք, որ եղել եք
Կեղծավոր ու նենդ Ֆուլլիալի հանդեպ:
Օ՛, խրռովալի մոլեգնություն է՝
Բնկնել—թակարդիկ բերանով ասված
Երդումների մեջ, որ բեկանում են
Հենց իրենք իրենց երդիկու պահին:
Անտոնիոս—Քաղցր թագուհի...
Կլեոպատրա—Ո՛չ, ո՛չ, խնդրում եմ, մի՛ որոնեք դուք
Մեկնման պատրվակ, առեք հրաժեշտ,
Ապա մեկնեցնք: Երբ խնդրում էիք
Դուք ձեր մնալը, այն ժամանակը
Խոսքերն ունեին մի որոշ արժեք,
Այն ժամանակը դուք չէիք զնա,
Հավերժությունն էր թառել մեր շուրջին
Եվ մեր աշքերում, երանությունը

Կամարում հոնքի, ոչ մի մասը մեռ
Զէր այնքան թշվառ, որի արմատը
Զլիներ երկնքից, նրանք մնում են
Այնքան անփոփոխ, որքան որ դու ես,
Ամենախոշոր զինվորն աշխարհի,
Դարձել ստախոս ամենախոշոր:

Անտոնիոս—Այդ ինչպե՞ս, տիկի՞ն:
Կլեոպատրա—Ա՛խ, ունենայի ես քո հասակը՝
Կղիտակցեիր դու, որ կա մի սիրոտ
Եգիպտոսի մեջ:

Անտոնիոս—Լսի՞ր, թագուհի, հզոր կարիքը
Հրամայում է մեր սպասները
Մի քիչ ժամանակ, բայց իմ ողջ սիրոտը
Մնում է այստեղ ձեզ ծառայելու:
Մեր իտալիան փայլատակում է
Քաղաքացիական ուազմի սրերով,
Սեքստոս Պոմպեոս մոտենում է
Նավահանգստին Հռոմի, երկու
Ներքին ուժերի հավասարումը
Ծնում է պահանջկոտ կուսակցություններ,
Եվ որ ատելին, ստանալով ուժ,
Ստանում է սեր, և դատապարտված
Սեքստոս Պոմպեոսն, հարուստ պատվովն
Իր հոր, սողոամ է այն սրտերի մեջ,
Որ չեն օգտվել իրերի ներկա
Վատ կացությունից, և որոնց թիվը
Սպասնալից է: Խաղաղությունը,
Հանգստից հիվանդ, ուզում է զտվել
Հուսահատական մի փոփոխությամբ:
Եվ իմ մասնալոր պատճառը այն է,—
Եվ դա ավելի քեզ կրացատրի
Պատճառն իմ մեկնման,— որ իմ կին Ֆուլիան
Արդեն մեռած է:

Կլեոպատրա—Հասած տարիքն ինձ հիմարությունից
Թեև չի կարող ազատ կացուցել,
Սակայն կարող է՝ մանկունակ մտքից:

Կարո՞ղ է արդյոք Ֆուլվիան մեռնել
Անտոնիոս—Այս, մեռած է: Քո վեհապետի
Պարասպր ժամեր կարդա նամակն այս
Եվ տես, թի նա ինչ փոռվություններ
Զարթեցացին է: Նրա վախճանը
Եղել է ճիշտ այն, ինչ լավագույնը:
Եվ տես, թե որտե՞ղ և ե՞րբ է մեռել:

Կլեոպատրա—Մայրագույն կեզծ սե՞ր:

Ո՞ւր են սրբազն այն սրբակները,
Որոնք գու սփառի լցնեիր արտասմ
Արտասուբներով: Այժմ տեսնում եմ,
Ֆուլվիայի մահվամբ՝ թե ինչպիս իմը
Գու կրնգունեիր:

Անտոնիոս—Այս մի վիճիր, բայց եղի՞ր պատրաստ՝
Մանոթանալու իմ նողատակին,
Որը կախված է քո կարծիքներից:
Հանուն այն հրի, որ գարձրնում է
Հարուստ նեղոսի ափզմն արգասարեր,
Ահա մեկնում եմ քո հայրենիքից,
Իրրե ուազմիկը, իրրե քո ծառան՝
Պատերազմելու, կամ ստեղծելու
Խաղաղությունը, ինչպես քո կամքը
Կցանկանա այդ:

Կլեոպատրա—Կտրի՞ր իմ գոտին, Շարմիա՞ն, արի՞,
Բայց գեռ թող մնա, ես հանկարծ լավ եմ,
Եվ հանկարծ հիվանդ, այսպիս է
Սիրում և Անտոնիոսը:

Անտոնիոս—Անզի՞ն թագու՞ի, էլ հանգստացի՞ր,
Ճշմարտապատում վկայությունը
Տուր սիրուն նրա, որ դիմանում է
Այսքան պատվավոր մի փորձարկության:

Կլեոպատրա—Այդպես ասաց ինձ Ֆուլվիան, քո կինը:
Աղաշում եմ քեզ, շուրջ տուր երեսդ:

Տ Ակնարկություն արտասուբով լի սրվակներին, որ հռոմեացիները երբեմն դնում
էին բարեկամների անյունի սափորի մեջ:

Եվ ողբա նրան, և ապա ասա
 ինձ մնաս բարով, և հայտարարիր,
 Որ եգիպտոսին են վերաբերում
 Այդ արցումքները:
 Խաղա քողարկված մի տեսիլ⁶ ընտիր,
 Ցուց տուր այն որպես կատարյալ պատիլ:
 Անտոնիոս—Դու կվառես իմ արյունը, բավ է:
 Կլեոպատրա—Դու գեռ ավելին կարող ես անել,
 Բայց այս պատշաճ է:
 Անտոնիոս—Սրբվա եմ երդվում:
 Կլեոպատրա—Նաև վաճանով:— Ավելի լավ է:
 Ոչ լավագույնը: Շարմիան, նայի՞ր,
 Աղաջում եմ քեզ, ինչպես Հերկուլան⁷
 Այս Հոռմեացին արդարացնում է
 Մագումն իր բարձըր:
 Անտոնիոս—Մեկնում եմ, տիկի՞ն:
 Կլեոպատրա—Իմ բարեկի՞րթ տեր, միմիայն մի բառ:
 Ես և դուք, պարոն, պետք է բաժանվենք,
 Բայց հարցը դա չէ,
 Ես և դուք, պարոն, սիրել ենք իրար,
 Բայց հարցը դա չէ,
 Դուք շատ լավ գիտեք, կա մի բան, որ ես
 Կցանկանայի՞... Օ՛, մոռացումն իմ
 Բուն Անտոնիոսն է, բոլորը մոռցա:
 Անտոնիոս—Քո արքայությունն եթե շունենար
 Թեթևությունը իբրև մի գերի,
 Կնկատեի ձեզ իբր նույն ինքը՝
 Թեթևությունը:
 Կլեոպատրա—Օ՛, դա բրտնաշան մի աշխատանք է —
 Կրել այսպիսի մի թեթևություն
 Սրտին այնքան մոտ, որքան կրում է
 Այս Կլեոպատրան: Սակայն, ներիր ինձ,
 Քանի որ այն, ինչ ինձ վայելում է՝

6 Scene.

7 Անտոնիոսը հավակնում էր, որ ինքը սերում է Հերկուլեսի որդիներից մեկից:

Ինձ սպանում է մեքո նայվածքին
Ախորժ ջեն թվում⁸: Թո սպատիվը քեզ
Կանշում է հեռու, ուստի խուլ մղիր
Իմ անկարեկից խոլովյան համդիպ,
Եվ զինեն բոլոր ասավածները քեզ հետ,
Թո սրբ վրա բագի՛ հաղթության
Դափնեպսակը և քո ոտների
Առաջ սիրովի սահուն ու դայթուն
Հաջողությունը:

Անտոնիոս—Գնա՞նք:

Մեր բաժանումը այնպիս մնում է,
Ու այնպիս թոշում, որ գու թեպեակ
Այստեղ ես մնում, բայց գարիս ինձ հետ,
Եվ ես սուրալով, մնում եմ քեզ հետ:
Գնա՞նք:

Դուրս են զնում:

Դ. Պ. Ա. Տ Կ Ե Ր

Հռոմ: Կեսարի տունը:

Մտնում են Օկտավիոս Կեսարը, Լեպիտոսը և նետեղիներ:

Կեսար—Կարող եք տեսնել, ահա, կեսի՛ տռոս,
Եվ այսուհետեւ լավ իմանալ, որ
Մեր մեծ մրցակցին ատելը երբեք
Կեսարի բնական մոլությունը չէ:
Ալեքսանդրիայից Ֆեած լուրն այս է,—
Նա ձուկ է որսում, խմում և վատնում
Լամպերն գիշերվա խրախճանքի մեջ,
Նա չէ ավելի առնական, քան թե
Կլեոպատրան, ոչ էլ թագուհին
Պտղոմեոսի ավել կանացի,

8 Հստ Ստիվենսի՝ սրանով Կլեոպատրան ակնարկություն է անում Անտոնիոսի՝ իրեն ովիճասեր թագուհի՝ անվանելուն:

Քան նա է, հազիվ մի ունկնդրություն
Տալս է, կամ թե շնորհք է անում
Մտածելու, թե ունի ընկերներ:
Դուք պիտի գոյնեք նրա մեջ մի մարդ,
Որ ամփոփումն է ամբողջ մարդկության
Թերությունների:

Անձիտու—Զեմ կարող կարծել, որ այդ մեղքերը

Բավարար լինեն խավարեցնելու
Բարությունն իր ողջ, թերությունները
Նրա անձի մեջ թվում են ինչպես
Երկնքի աստղեր*, որոնք թվում են
Ավելի շողջող գիշերվա և կից,
Նրանք ավելի ժառանգական են,
Քան թե ձեռք բերված,
Ինչ որ չի կարող փոփոխել, քան թե
Ինչ որ ընտրում է:

Կեսար—Օ՛, դուք շափականց ներողամիտ եք:

Համաձայնենք, որ գոեհիկ բան չէ
Թավալվել մահճում Պտղոմեոսի,
Եվ շընորհել մի թագավորություն
Փոխարեն ինչ-որ մի խրախճանքի,
Նստել և կոնծել մի ստրուկի հետ,
Եվ ցերեկները գայթել փողոցում,
Եվ կոփամարտել ժառաների հետ,
Որոնք հոտում են գարշելի քրտինք:
Ասենք սազում է նրան բոլորն այս
(Ճի խառնը վածքը պետք է որ լինի
Անշուշտ հազվագյուտ, որին բաներն այս
Չեն կարող ավելի), բայց այսուհանդերձ
Անտոնիոսը շի կարող ոչ մի կերպ
Արդարացնել իր արատները,
Երբ մենք կրում ենք մի մեծ ժանրություն
Իր թեթևամիտ վարքի պատճառով:
Եթե նա լցնի պարապո ժամն իր

* Բնագրում քուտ (բժիր), որ ակնարկություն են պարզապես աստղերի:

Հեշտասիրությամբ, հափրացումները
եվ սսկորների ցամաքությունը
Կըստառժեն նրան, բայց վշացնել
Մի թանկ ժամանեակ, մըր իր խաղերից
Թի իր սեփական, թի մեր վիճակը
Կանչում են նրան զուրս թմրուկներով,
Բարձր դոսոցով՝ անգոսնելի է,
Խնչպիս սասառմ ենք մենք մանուկներին,
Որոնք վնելով թեև խելամիա,
Գրալ են զնում փորձառությունը
Ներփառ հաճուքին, ըմբռստանում են
Դատողության դեմ:

Մտնում է մի պատգամաբեր:

Լեպիտոս—Ահա նոր լուրեր!
Պատգամաբեր—Հրամանները ձեր կատարովեցին,
Եվ ամեն մի ժամ, գերազնիվ Կեսար,
Քուր լուր կստանաք արտասահմանի
Գործերի մասին։ Պոմպեոսն հզոր է
. Սովերի վրա և երեսում է՝
Նրան սիրում են, նրանք, որ միայն
Երկյուղ են կրում հզոր Կեսարից,
Եվ դժողովները ապաստանում են
Նալակայքերում, իսկ շշուկները
Հասարակության՝ տալիս են նրան
Մի գեր խորապես անիրավվածի։
Կեսար—Սպասում էի ես այդ բոլորին։
Պետությունների ծագումից ի վեր
Ուսուցանել են մեզ, թի ուզում ենք
Իշխանության գլուխ տեսնել մի մարդու՝
Մինչև նրա անցնելն իշխանության գլուխ,
Եվ ընկած մարդը, երբեք չսիրված
Մինչև լինելը սիրո արժանի,
Երբ պակասում է, զառնում է սիրելի,
Խնչպես ծփացող մի մորաշուշան

Առվակի վըրա, որ ետ ու առաջ
Միշտ տատանվում է հլու, հաղանդ
Մակընթացության՝ փշացընելով
Իրեն շարժումով:

Պատգամաբեր—Կեսար, բերում եմ ահա քեզ պատգամ —

Մենիկուտեսը, նաև Մենասը,
Այս հոչակավոր ծովահենները,
Ծառայեցնում են ծովն իրենց կամքին,
Հերկում են ծովը և պատառուում
Ամեն տեսակի իրենց նավերով,
Քանի կատաղի ասպատակություն
Գործում են ափը մեր Խուլիայի,
Եվ ծովահայաց մեր սահմանները
Դժգունում են նրանց մասին խորհելով,
Եվ շառագումած երիտասարդությունն
Ապստամբում է, չի կարող մի նավ
Երեալ մեջտեղ՝ շուտ նշմարվում է,
Զի Պոմակեռսի անունն ազդում է
Ավելի սարսափ, քան թե իր ռազմը
Կարող է տոկալ:

Կեսար—Օ՛, Անտոնիոս, լքիր քո շվարտ
Կերուխումները: Երբ որ մի անգամ
Պարտը ված փախար դու Մոդենայից,
Որտեղ մորթեցիր հյուպատոսներին՝
Հերտիոս ու Պանսա, քո կրունկներին
Առվը հետեւց, որի դու ընդդեմ
Մարտնչեցար հույժ, քան թե վայրենին
Կարող է տոկալ, թեև քնքշորեն
Մեծացել էիր⁹: Եվ դու խմեցիր
Զիերի մեղը, կամ տղմուտների
Զուրը ոսկեզօծ¹⁰, որից անասունն
Խսկ պիտի հազար: Այն ժամանակ քո
Քիմքը զիջում էր ամենակոպիտ

9 Պլուտարքոսից վերցված:

10 Երբեմն կանգնած շրերի մակերեսին երեսում են մի տեսակ՝ ոսկեգույն օղակներու-

Դժնեկի վրայի ամենաբրտին
Հաստապտուղին Եղնիկի նման,
Երբ սալվանում է ձյունը արոտը,
Սառի կեղեր գու ճարափեցար,
Եվ Ալյաններում, ասում են, կերար
Տարօրինակ միս, որին նայելիս
Շատերը մեռան: Եվ այս բոլորը,—
Վիրավորում է քո այն պատիվը,
Որի մասին ես այժըմ խոսում եմ,—
Տարիր այնպես լավ, մի դինվորի պես,
Որ քո այտերը, զեթ թհթեորեն,
Զնի՞արեցան:

Լեպիտոս—Ավտոս է, ավտոս:

Կեսար—Թող արագործն իր ամոթանը
Հոռմ գշի նրան, ճիշտ ժամանակն է,
Որ մենք՝ երկյակս՝ ցուց տանք մենք մեղի
Ռազմաճակատում, այդ նպատակով
Եվ անմիջապես դումարենք խորհուրդ,
Պոմպեոսն աճում է մեր մեղկությունից:

Լեպիտոս—Հենց վաղը, Կեսար, կլինեմ պատրաստ,
Տեղեկացնելու ձեզ ճշգրտորեն,
Ինչով կարող ենք դիմաճակատել
Այս ներկա պահին թե ծովի վրա
Եվ թե ցամաքի:

Կեսար—Եվ մինչև մեր այդ դիմադրավումը՝
Գործն իմ թող լինի խորհել այդ մասին:
Մնաս բարով քեզ:

Լեպիտոս—Տե՛ր, զնաս բարով, ինչ որ իմանաք
Նույն այդ միջոցով արտասահմանի
Հուզումների շուրջ, ես կխնդրեի,
Ինձ էլ դարձնել ձեր մասնակիցը:

Կեսար—Մի տարակուսիր, գիտեմ իմ պարտքը:

Գնում են դուրս:

Ալեխանդրիա: Մի սենյակ պալատում:
Մտնում են Կիեվացարան, Շարմիանք, Խրազը և Մարդիանք:

Կիեվացարա—Շարմիան:

Շարմիան—Տիրուհի:

Կիեվացարա—Հայ, Հայ...

Տվյալ ինձ մի քիչ լոշտակ¹¹ խմելու:

Շարմիան—Ի՞նչո՞ւ, տիրուհի:

Կիեվացարա—Որ կարողանամ քնով անցկացնել

Այն ժամանակի լայներախ վիճը,

Երբ բացակա է իմ Անտոնիոսը:

Շարմիան—Դուք նրա մասին շատ եք մտածում:

Կիեվացարա—Դա մատնություն է:

Շարմիան—Տիկին, Հուկա ունիմ, որ դա այդպիս չէ:

Կիեվացարա—Ներքինի Մարդիան:

Մարդիան—Ի՞նչ է հաճուքը ձերդ բարձրության:

Կիեվացարա—Չեմ կարող լսել քո երգը Հիմա,

Եվ մի ներքինի իմ մեջ չկ կարող

Զարթեցնել հաճուքը, քեզ համար լավ է,

Լինելով անսերմ, Եգիպտոսից դուրս

Չեն կարող թռչել ավելի աղատ

Քո խորհուրդները: Մարդիան, ունե՞ս

Դու ցանկություններ:

Մարդիան—Այո, տիրուհիս:

Կիեվացարա—Իսկապէ՞ս:

Մարդիան—Ոչ իսկականում, տիկին, Վասնզի

Չեմ կարող ոչինչ ես անել, բացի

Ինչ որ իսկապէս պարկեշտ է անել,

Բայց այսուհանդերձ ես ցանկություններ

Ոճեմ կատաղի, և երազում եմ,

Թե Արեսի հետ Աստղիկն ի՞նչ արակ:

11 Թնագրում մանդրագորա՝ (mandragora), հայերեն լոշտակ բառն է, «թաղթ կամ արանց ծաղիկ կտշված բույսը, լոզ կամ լոշտակ, մանրագոր, begonia alba» (տե՛ս Ամայան, Արմատական բառարան): Այս բույսը համարվում էր քնարեր, որ Հարավային Եվրոպայից տարվելով Անգլիա աճեցրել էին:

Կլեոպատրա—Օ՛, իմ Շարօնիան, ի՞նչ ես կարծում դու,
 Ո՞ւր է նա հյումա, կանգնա՞ծ, թի նստած,
 Քայլո՞ւմ է արդյոք, թի ձիռու վրա,
 Օ՛, երջանիկ ձի, որ կրում է հար
 Թեսն Անտոնիոսի Քաջ ընթացիք, ձի,
 Արդյոք դու դիտե՞ս, թի ումն ևս տանում,
 Կիս-Աստղասը այս աշխարհի, երկրի,
 Սազավարաը և բազուկը մարդկանց:
 Այժմ նա խոսում է, կամ մրմնջում է.
 «Ուրախ՞ղ է օձը իմ հին նեղոսի»:
 Քանզի աբրահաս էր նա ինձ անվանում:
 Եվ այժմ ևս ինձ սնուցանում եմ
 Քաղցրահամ թույնով! Օ՛, երադիր ինձ,
 Ես, որ սեցած եմ Յերոսի տարիիկ
 Կամիթներովը և խոր կնճռոտված
 Ժամանակի մեջ: Լայնճակատ Կիսար,
 Երբ որ դու այստեղ էիր երկրի վրա,
 Ես ինքնակալի մի պատառ էի,
 Եվ Պոմպեոսը մեծ կանգ էր առնում
 Եվ իր աշքերը չեր կարողանում
 Ճնուացնել ինձնից, և նա ուզում էր
 Խարիսխ նետել և մեռնել դիտելով
 Նրան, որ կյանքն էր:

Մանում է Ալեքսանդր:

Ալեքսաս—Ողջո՞ւն, վեհապե՞տ դու Եգիպտոսի:
 Կլեոպատրա—Ինչքա՞ն քիչ նման ես Անտոնիոսին,
 Սակայն և այնպես՝ զալով նրանից,
 Այդ մեծ բժիշկը քեզ իր երանդով
 Բոկեզօծել է¹²: Ինչպե՞ս են գործերն
 Քաջ Մարկ Անտոնիոսի:
 Ալեքսաս—Վերջին բանն, որ նա արավ, թագուհի,
 Նա պինդ համբուրեց, — վերջինը բազում

¹² Ակնարկություն այն փիլիսոփայական քարին, որ ոսկի էր դարձնում, ինչի ոք դիպլեր:

Պինդ համբույրների, — արևելյան այս

Ճինչ մարդարիտը, նրա խոսքերը

Փակել են սիրութ:

Կիեվապատրա — իմ ականջները պետք է կորզեն այդ

Համբույրն այդտեղից:

Ալեքսաս — «Բարի բարեկամ, — ասաց, — դու ասա՛,

Որ հաստատամիտ Հռոմեացին

Սեծ Եգիպտացան ուղարկում է այս

Գանձր ոստրեի, և ավելացրու,

Ուր իր ոտեներին, նոխացնելու

Այս փոքրիկ ձոնը, ես պիտի կցեմ

Իր փարթամ զամին նոր տերություններ,

Ողջ Արևելքը, ասա՛ դու նրան,

Պիտի կոչի նրան իր մեծ տիրումին»:

Եվ այսպես գլխով նա նշան արակ

Եվ զգաստորեն հեծավ ասպազին

Մի ձի, որ այնքան բարձրը խրխչեց,

Որ անասնորեն պատպանձեցըրեց,

Ինչ որ կուզեի ես ասած լինել:

Կիեվապատրա — ինչպե՞ս էր, ասա՛, տիսո՞ւր, թե ուրախ:

Ալեքսաս — Նման էր տարվա այն ժամանակին,

Երբ տաքի և ցրտի ծայրակետումն է,

Ո՛չ տիսուր էր նա, և ո՛չ էլ ուրախ:

Կիեվապատրա — Տրամադրություն սքանչելիորեն

Բարեկցըռոված, նկատի՛ր, Շա՛րմիան,

Դա է մարդը, բայց նկատի՛ր նրան,

Զի եղել տիսուր, քանզի նա պիտի

Շողար նրանց վրա, որ նայվածքն իրենց

Հարմարեցնուած են նրա նայվածքին,

Զի եղել ուրախ, որպեսզի նրանց

Ասած լիներ, թե իր ուշքն ու միտքը

Եգիպտոսումն է իր հրճվանքի հետ:

Երկուակ մեջտեղ: Երկնային խառնուրդ,

Լինես գու տիսուր, թե լինես ուրախ,

Որեէ մեկի հույժ սաստկությունը

Վայելում է քեզ, ավելի քան թե.

Որևէ մարդու

Հանդիպեցա՞ր իմ սուրհանդակներին:

Ալեխաս—Այո՛, տիրուհի՛, մի քան տարբեր

Սուրհանդակների, ինչո՞ւ այդպիս խիստ

Իրար հաւեց:

Կիենպատրա—Ով որ ծնվել է այն օրը, երբ ես

Չուղարկեմ մի ժարդ իմ Անտոնիոսին:

Կրմեռնի իրրեմ մի խեղճ մաւրացկան:

Շարմիան, յեր ինձ թուղթ և նաև թանաք:

Բարով մու հկել, բարի Ալեքսաս,

Երբեցին ևս սիրե՛լ եմ, Շարմիա՛ն,

Կիսարին այսքան:

Շարմիան—Օ՛, քաջ Կիսարը!

Կիենպատրա—Այգարսի մի այլ բացականչությամբ.

Ճեղձարմա՛ լինեմ, ասա՛ դու միայն

«Քաջ Անտոնիոսը»:

Շարմիան—Քաջարի՛ Կիսար:

Կիենպատրա—Իսիսը վրկա, քո ատամները

Արյունը կանեմ ես, եթե նորից

Հավասար զատեմ դու Կիսարի հետ

Արի արանցն իմ:

Շարմիան—Ամենարարի քո թույլտվությամբ՝

Ես այժմ կրկնում եմ միայն քո երգը:

Կիենպատրա—Տհաս օրերիս, երբ ես խակ էի

Թատողության մեջ.—արյունըս սառած

Պիտի լիներ, որ ասեի այն, ինչ

Ես ասում էի դեռ այն ժամանակ:

Գնա՛նք, հեռանա՛նք, բե՛ր ինձ թանաք, թուղթ,

Նա ամեն մի օր պետք է ստանա

Ողջույն ինձանից, թե ոչ եղիպտոսն

Անմարդարնակ ես կըդարձնեմ:

Դուրս են զնում:

ԱՐԱՐ ԵՐԿՐՈՐԴ

Ա. Պ. Ա. Տ.

Մեսինա: Մի սեյակ Պոմպեոի տանը:
Մանում են Պոմպեոսը, Մենեկրատեսը և Մենարը:

Պոմպեոս—Եթե արդար են մեծ աստվածները,
Կաջակցեն արդար մարդկանց գործերին:
Մենեկրատես—Հարգելի! Պոմպեոս, գիտցի՛ր, որ նրանք
ինչ ուշացնում են, իսպառ չեն մերժում:
Պոմպեոս—Մինչդեռ մենք նրանց գահին հայցող ենք,
Կործանվում է այն բանը, որին մենք
Հայցող ենք դառնում:
Մենեկրատես—Մենք, անգիտակից մեր իսկ անձերին,
Հաճախ հայցում ենք մեր իսկ շարիքը,
Սակայն իմաստում զորությունները
Մերժում են մեր իսկ բարիքի համար,
Եվ գոնում ենք շահ այսպիս՝ կորցնելով
Մեր աղոթքները:
Պոմպեոս—Իմ գործերը լավ պիտի ընթանան,
Եվ ժողովուրդը ինձ շատ սիրում է,
Եվ ծովն էլ իմն է, իմ ուժն ամում է
Եվ իմ գուշակող հույսն ասում է, որ
Կըհասնի լրման: Մարկոս Անտոնիոսն
Եգիպտոսի մեջ նստում է ճաշի
Եվ ուզգմ չի մղի Եգիպտոսից գուրս,
Կեսարը ձեռք է բերում փող այնտեղ,
Որտեղ կորցնում է թանկագին սրտեր,

Ղեղիասոն երկսին շաղսքարթում է
Եվ յրկուսը Քլ ջողոքորթվում են,
Թայց նա չի սիրում որևէ մեկին,
Որևէ մեկն էլ չի սիրում իրեն։

Մենեկրատես—Կեսարը նաև և կեալիտոսը
Ռազմադաշտումն են հզոր բանակով։
Պոմպեոս—Որտեղի՞ց ասիր այդ գուրը։ Սուա է։
Մենեկրատես—Միլվոսից, առ' իմ։
Պոմպեոս—Նա երազում է։ Գիտեմ միասին
Նրանք Հռոմում են և սպասում են
Անտոնիոսին թայց սիրո բոլոր
Թովքությունները, ցոփ Կեռավատրա,
Թող քնքշացնեն քո նովազած շուրթը,
Կախարդությունը միախառնրովի
Թո՛ղ զեղեցկության, իսկ ցոփությունը՝
Երկուսի էլ հետ։ Արդեւափակի՛ր
Այդ վատշվերին խրախճանքների
Մի շրջանակում, մշուշուիր հար
Նրա ուղեղը, թո՛ղ էպիկուրյան
Խոհարարները անհագ համեմով
Սրեն, զրուեն իր ախորժակը,
Որսկեսի քոնը և կիրուխումը
Ետ կացուցանեն նրա պատիվը՝
Մինչև լեթեական խոր թմրությունը։

Մտնում է Վարրիոսը։

— Ի՞նչ կա, Վարրիո՞ս։
Վարրիոս—Ինչ հաղորդում եմ՝ ամենաստույգն է, —
Անտոնիոսին ամեն մի ժամու
Սպասում են Հռոմում։ Եթե մենք հաշվենք,
Թե երբ է մեկնել նա Եգիպտոսից,
Վաղուց նա Հռոմ պետք է որ հասներ։
Պոմպեոս—Նվազ կարեռ մի լուր ավելի
Ես կունկընդրեի։ Մենաս, ես երբեք

Զէի կարծում, որ այս սիրատարփիկ
Հափրացողն դնի իր սազավարտը
Այսպիսի չնշին մի ռազմի համար,
Սա մի ռազմիկ է, որի արժեքը
Կրկին է, քան թե մյուս երկյակի,
Բայց արի մենք մեղ կարծենք ավելի
Բարձըր ուժի տեր, որ մեր հուզումը
Կարողացել է Եգիպտոսի այդ

Այբի կնոջ գոգից պոկել հեշտանքից
Անպարտասելի Մարկ Անտոնիոսին:

Մենաս—Չեմ կարող կարծել, որ Անտոնիոսը
Եվ Կեսարն իրար ողջունեն բարի
Տրամադրությամբ: Կինը, որ մեռավ,
Հանցանքներ գործեց Կեսարի հանդեպ,
Նաև եղբայրը կովեց նրա դեմ,
Թեև, կարծում եմ, նրան չէր դրդել
Անտոնիոսը:

Պոմպեոս—Ես չեմ իմանում, թե ինչպիս, Մենաս,
Ավելի նվազ թշնամություններ
Կարող են դիշել ավելի մեծին:
Եթե երբեք մենք կանգնած Ահնեինք
Երկուսի ընդդեմ, պարզ է, որ նրանք
Պիտի կովեին իրարու ընդդեմ,
Վասնդի նրանք ունեն բավական
Պատճառ քաշելու իրենց սրերը,
Եվ սակայն ինչպիս մեղնից սպասած
Ահը կարող է շաղախել նրանց
Պառակտուաները՝ մենք դեռ չգիտենք:
Թող լինի ինչպիս մեր աստվածները
Ցանկանում են այդ: Միայն կախված է
Մեր գոյությունից ի գործ դնելու
Ամենահզոր մեր միջոցները:
Դնա՛նք:

Դաստիարակություն:

Հոռմ: Մի սենյակ Լսդիտոսի տանը:
Մտնում են կնորարքոսը և Լսդիտոսը:

Լսդիտոս—Քաջ էնորարքոս, գուշելի գործ է

Եվլ վաքերուշ քեզ, խրախուսելու

Քո գորսարձատին, որ մեղմ ու աղնիով

Լեզու գործածին

Էնորարքոս—Պիտի համազիւմ, որ տա պատասխան-

Նա այնահետ, ինչպես ինքը կը դատի:

Եթե Կեսարը զայրացնի նրան,

Թող Անտոնիոսը Կեսարին նայի:

Գլխի վրայից և խոսի այնքան

Բարձրածայնորեն, որքան Արքուր:

Արամադդ վկա, թե ես կրեի

Երկար մորուքը Մարկ Անտոնիոսի¹³:

Զէի ածիրի այդ մորուքն այսօր:

Լսդիտոս—Ժամանակը շէ անձնական ոխիւ:

Էնորարքոս—Ամէն ժամանակ ծառացում է նա:

Այն խնդրի համար, որը նույն պահին

Ծնունդ է առել:

Լսդիտոս—Սակայն ավելի մեծ խնդիրներին

Պետք է տեղի տալ:

Էնորարքոս—Ոչ եթե փոքրը կանխում է մեծը:

Լսդիտոս—Խոսում ես կրթոտ, բայց, խնդրում եմ քեզ,

Մի խառնըշտկիր անթեղված հուրը:

Ահա զալիս է քաջ Անտոնիոսը:

Մտնում են Անտոնիոսը և Վենտիդիոսը:

Էնորարքոս—Եվլ Կեսարն ահա:

Մտնում են Կեսարը, Մեկենասը և Ագրիպպան:

Անտոնիոս—Եթե մենք այստեղ խոր համաձայնենք,

Կը գնանք շուտով դեպ Պարթևաստան,

13 Հստ Պլուտարքոսի՝ Մոդենայի պարտությունից հետո Անտոնիոսը թողեց, որ մորուքը երկարի:

Մտիկ անո՞ւմ ես դու, Վենսիդիուս:

Կեսար—Ես շեմ իմանում, Մեկինա՛ս, Հարցրո՞ւ

Դու Ազրիպալային:

Վավիտոս—Թա՛զ բարեկամներ, այն, ինչ մեզ այստեղ

Միավորեց՝ էր ամենավախմն,

Եվ թող ավելի ամուլ մի գործոն

Չպառակտի մեզ, ինչ որ սխալ է,

Թո՛ղ մտիկ արվեն ազնիվ մեղմությամբ:

Երբ շռնդալից վիճաբանում ենք

Մեր սին մտքերի տարբերությունը,

Ոչիր ենք գործում՝ բժշկելու տեղ

Մեր խոր վերքերը, ուրեմքն, ազնիվ

Ընկերակիցներ, նախամեծարի

Համար խորապես աղաշում եմ ձեզ՝

Շոշափեցեք դուք դառնագույն կետերն

Քաղցրագույն լեզվով, ոչ թե ավելցնեք

Դառնություն խնդրին:

Անտենիոս—Խոսեց իմաստում:

Եթե լինեինք մեր քանակների

Առաջ՝ կովելու, կանեի այդպես:

Կեսար—Բարի եկար Հռոմ:

Անտենիոս—Շնորհակալ եմ:

Կեսար—Խորեմ, նստեցե՛ք:

Անտենիոս—Նստեցե՛ք, տեր իմ:

Կեսար—Լավ:

Անտենիոս—Խմացել եմ ես, որ դուք գտնում եք

Մի շարք բաներ վատ, որ երբեք վատ չեն,

Իսկ եթե վատ են, ձեզ չեն պատկանում:

Կեսար—Ես պետք է լինեմ առարկա ծաղրի՝

Առանց պատճառի կամ թե մի թեթև

Պատճառի համար՝ եթե ես ասեմ,

Որ վշտացել եմ գլխավորապես

Զեղնից աշխարհում, ավելի ծաղրի

Ենթակա լինեմ, եթե մի անգամ

Անպատված լինեմ ես ձեր անունը,

Երբ ձեր անունը արտ……գելու

Ո՛չ մի շահ լունեմ:

**Անտոնիոս—Իմ Եղիպատոսամ լինելու մասին,
Ի՞նչ էիք կարծում:**

**Կեսար—Ոչ ավելի քան ներկայությունն իմ
Այստեղ, Համբամ, և կամ թե ձերը
Եղիպատոսի մեջ, բայց այսուհանդերձ,
Եթե գուք այնունզ դավեր նյութեիք
Իմ պետության գեմ՝ ներկայությունը
Զեր Եղիպատոսամ կարող էր դառնալ
Խնդրի առարկաս:**

Անտոնիոս—Ի՞նչ եր հասկանում—դավեր նյութելը:

**Կեսար—Եթե ուզենար՝ գոյց հասկանար
Իմ միաբը, եթե նկատի առնեք
Թե ինչ պատահեց այստեղ իմ զլխին:
Զեր կինը՝ Յուլիան և ձեր եղբայրը
Պատերազմեցին իմ գեմ և նրանց
Կադ ու կոփի նյութը դուք էիք,
Դուք էիք նաև սազմի կարդախոս:**

**Անտոնիոս—Գուք սխալվում եք, իմ եղբայրն երբեք
Զի ծառայեցրել անոնս այս սազմում:**

**Հարցումիորձ արի և տեղեկացա
Մի քանի անկեղծ լրատուներից,
Որ նրանք ձեր գեմ սրեր են քաշել
Արզո՞ք ավելի շվարկաբեկեց
Նա իմ, նաև ձեր իշխանությունը՝
Մզմբով սազմեր ընդդեմ իմ կամքի:
Երբ ձեր զատը էր իմ զատի նման:
Այս խնդրի մասին իմ նամակները
Սրանից առաջ քավարարել են:
Եթե ուզում եք նորոգել մի վեճ՝
Սրանով չեր կարող պատճառաբանել:**

**Կեսար—Գուք ձեզ գովում եք և զատողության
Թերությունները իմ կողմն եք թողնում
Եւ պարտկում եք ձեր շքմեղանքը:**

**Անտոնիոս—Ո՛չ, ո՛չ, այդպես չէ: Ես իմանում եմ
Եւ վստահ դրան, որ չէիք կարող**

Դուք շունենալ այն կարևոր միտքը,
Որ ես, լինելով ձեր կողմնակիցը
Այն դատի շուրջը, որի գեմ եղբայրս
Պատերազմով էր, չէի կարող, ո՞ւ
Նայել համակիր այն կոփներին,
Որ իմ հանդիսաբ վրդովում էին:
Գալով իմ կնոշ՝ ես կուզենայի,
Որ նրա ոգով դուք ոմենայիք
Այդպես մի այլ կին: Աշխարհի երրորդ
Մասը ձեր ձեռքն է, որը մի սանձով
Թերես վարեք, բայց ո՛չ այդպես կին:
Էնորագրոս—Եթե բոլորս էլ այդպիսի կանայք
Մենք ոմենայինք՝ բոլոր այրերն էլ
Դուցի գնային գոռ պատերազմի
Այդ կանանց ընդդեմ:

Աճառնիոս—Նրա չափից վեր անզսպությունը,
Որ առաջացած էր իր անհամբեր
Վարքից ու բարքից (թեակետ և զուրկ չէր
Եվ քաղաքական իմաստությունից),
Ես մորմոքելով՝ ընդունում եմ, որ
Զեղ պատճառեցին շատ վրդովություն,
Որի գեմ, դուք էլ կհայտարարեք,
Ես անզոր էի:

Կեսար—Ես ձեղ գրեցի, երբ խռովահույզ
Կյանք էիք վարում Ալեքսանդրիայում,
Դուք գրպանեցիք իմ նամակները,
Եվ ծաղրանքներով ձաղկեցիք դուք իմ
Պատգամաբերին՝ մերժելով շնորհել
Մի ունկնդրություն:

Աճառնիոս—Նա վրաս ընկավ դեռ շընդունած նրան
Իմ ունկնդրության, նոր էի տվել
Երախճանք երեք թագավորների
Եվ առավոտյան շէի զգում ըստ
Սովորականի, բայց հաջորդ օրը
Նրան պատմեցի իմ դրությունը,
Որ հավասար էր նրանից խնդրելու

Մի ներողություն, թո՛ղ այդ ընկերը

Արժեք չունենա մեր այս վիճի մեջ,

Մեր մաքասամից գուրա հանիր նրան,

Կեսար—Դուք զրժել եք ձեր հրդման պայմանը,

Մի բան, որով գուր իրավունք շունեք

Ինձ մեղաղբեկու

Լեպիտոս—Մե՛քմ խոսիր, Կեսա՛ր!

Անտոնիոս—Ո՛չ, ո՛չ, Լեպիտո՛ս, թողե՛ք, որ խոսիր

Սուրբ է պատիվը, որի մատին նաև

Այժմը խոսում է, կարծելով գրանում

Վրիպած վենեմ, բայց շարունակի՛ր,

Կեսա՛ր, ինչ որ խմ երդման պայմանը...

Կեսար—Ու դուք ինձ պիտի ընձեռեիք զենք

Եվ օգնական զորք, երբ որ ձեզանից

Ես պահանջեի, սակայն երկուսն էլ

Դուք մերժեցիք ինձ:

Անտոնիոս—Նախընտրելի է ասել՝ զանց արի,

Երբ թունավորված ժամերն ինձ էին

Կորզել սեփական դիտակցությունից:

Այնքան շուտ որքան կարելի է, ևս

Հայտնում եմ ձեզ իմ պաշավը, բայց

Պարկեշտությունն իմ չպետք է դարձնի

Մեծությունն իմ՝ խեղճ, ոչ էլ իմ ուժը

Չպետք է զործե և առանց դրան:

Ճշմարիտն այն է, որ իմ կին Յուլյան,

Ինձ Եփուատոսից հանելու համար,

Այստեղ մղել է ուղմեր, որոնց ևս

Հանդիսացել եմ անդիտակ առիթ:

Ահա խնդրում եմ ես ներողություն,

Այնքան որքան իմ պատվին է վայել

Զիջել այսպիսի մի պարագայում:

Լեպիտոս—Ահա ազնիվ խոսք:

Մեկենաս—Եթե ձեզ թվա հաճելի, որ դուք

Չմղեք առաջ ձեր գանգատները,

Որ կան ձեր միջեւ, իսպառ մոռանալ

Այդ զանգատները՝ նշանակում է

Հիշել, որ ներկա խոր հարկադրանքը

Կոչ է անում ձեռ համաձայնելու:

Լեպիտոս—Ահա արժանի մի խոսք, Մեկենաս:

Էնորաբոս—Կամ, եթե գուք վայրկենապես իրար սեր փոխանակեք—
կարող եք, եթե այլևս ո՛չ մի բառ չեք լսի Պոմպեոսի մասին,
նորից վերադարձնել այն, որուք կունենաք ժամանակ իրար դեմ
բանակոփիլ մղելու, երբ տրիշ ոչինչ չեք ունենա անելու:

Անտոնիոս—Դու լոկ զինվոր ես, այլևս մի՛ խոսիր:

Էնորաբոս—Թե ճշմարտությունը պարտական է լուս լինել, ես գրեթե
մոռացել էի:

Անտոնիոս—Անիրավում ես դու ներկաներին,

Ուստի մի՛ խոսիր այլելս երկար:

Էնորաբոս—Ուրեմն, շարունակեցեք, ես կլսեմ համր, ինչպես մի բար:

Կեսար—Այնքան չեմ խորշում ես նյութից, որքան

Նրա լեզվի ոճից, քանզի չի կարող

լինել, որ մնանք մենք բարեկամներ,

Մեր վարքագիծը տարբեր է գործից:

Սակայն և այնպես, թե ես իմանամ

ինչ զոդ կարող է մեզ կապել ամուր՝

Կորոնեմ ես այն երկրի մի ծայրից

Մինչև մյուսը:

Ագրիպպա—Կեսա'ր, թույլ տուր ինձ:

Կեսար—Խոսի՛ր, Ագրի'պպա:

Ագրիպպա—Դու մի քույր ունես մոր կողմից, Կեսար,

Զքնաղ Օկտավիան, մեծ Անտոնիոսն է

Այժմ մի այրի:

Կեսար—Այդպես մի՛ խոսիր, Ագրի'պպա, եթե

Կլեոպատրան լսեր քո խոսքը,

Կհանդիմաներ արժանի կերպով

Հանդինությունը:

Անտոնիոս—Ամուսնացած չեմ, Կեսա'ր, թո՛ղ լսեմ

Թե ուրիշ ինչ է ասում Ագրիպպան:

Ագրիպպա—Որպեսզի կապենք ձեզ հավերժական

Բարեկամությամբ, դարձնենք եղբայրներ,

Հյուսենք սրտերը անլույծ հանգույցով,

Մարկ Անտոնիոսը թող ամսի փրհն
Կին՝ Օկտավիային, մի աղջիկ՝ որի
Գևդեցկությունը պահանջում է մի
Ամսափն ոչ նվազ, քան լավագույնը
Մարդկանց և որի արիությունը
Եվ շնորհները ամցնուած են ամեն
Արտահայտություն:

Այս ամուսնությամբ բոլոր վաճարի
Մասխամերները, որ այժմ թվում են մեծ,
Եվ բոլոր խոշոր երկյուղները, որ
Հանդես են քրուս վատանդներն իրենց,
Կընկնեն արժեքից, ճշմարտություններ
Կրառնան միայն դատարկ գրուցներ,
Մինչդեռ ներկայիս կես պրույցներն են
Ճշմարտություններ Եվ Օկտավիայի
Ունեցած սերը գեղի երկուսը,
Յուրաքանչյուրի ունեցած սերը
Իրարու հանդեպ, բոլոր սերերը
Գեղի երկուսը՝ նա պիտի քարշ տա
Իր հաւելց, բայց ներկայի քինչ որ
Արտահայտեցի, բանզի այդ երկար
Մտածված խո՞ էր, ոչ թե այս պահին
Որոճված՝ իրրե պարտականություն:

Անտոնիոս—Ուզ՞ո՞ւմ է խոսել Կեսարն այս մասին:
Կեսար—Ռ' չ, մինչեւ լսի, թի Անտոնիոսը
Որքան աղջրվեց արդեն խոսվածից:
Անտոնիոս—Եթե ասեի, «Այդպես թող լինի,
Ազրիպապա», և ի՞նչ զորություն ունի
Ազրիպապան՝ զլուխ բերելու գործն այս:
Կեսար—Եվ զորությունը Կեսարի, նաև
Իմ զորությունը գեղի Օկտավիան:
Անտոնիոս—Երբեք շերագեմ խոշընդոտելու
Այսքան մի պայծառ զիտավորության:
Տուր ինձ քո ձեռքը, առաջ մղիր գու
Գործն այս շնորհալի, և այս իսկ ժամից
Սիրտն եղբայրների թո՞ղ կառավարի

Մեր սերն և իշխահ մեր մեծ ծրագրերին:
Կեսար—Ահա իմ ձեռքը, մո կտակում եմ

Քեզ մի քույր, որին ոչ մի հատ եղայր
Չի սիրել այնքան թանկագին սիրով,
Թող ապրի երկար և միանա մեր
Տերություններին և մեր սրտերին,
Եվ երբեք, երբեք մեր այս սերերը
Չանցատվեն նորից:

Լեպիտոս—Բարեբախտորեն ասում եմ՝ ամեն:
Անտանիոս—Զէի մտածում քաշել փմ սուրը

Պոմպեոսի դեմ, քանզի վերջինըս
Լիացրել է ինձ մեծ ազնվությամբ,
Ես պետք է միայն շնորհակաւ լինեմ,
Որպեսզի հուշն իմ տառապանք չզգա
Հոռի համբավից: Դրան վերջ տալով՝
Կկանչեմ կովի:

Լեպիտոս—Եվ ժամանակը մեզ կոչ է անում,
Որ անմիշապես մենք հետապնդենք

Պոմպեոսին, թե ոչ՝ նա կկանխի մեզ:

Անտանիոս—Ո՞ւր է նա այժըմ բանակատեղած:

Կեսար—Միսենում լեռան կողմերն, Անտոնիոս:

Անտանիոս—Որքա՞ն է ուժը ցամաքի վրա:

Կեսար—Մեծ է և աճում, իսկ ծովի վրա

Բացարձակ տեր է:

Անտանիոս—Հոլակն այսպիս է: Ես կուզենայի
Խոսել նրա հետ: Օ՞ն, աճապարենք:
Սակայն և այնպես նախքան զինվելը,
Վերջ տանք այս գործին, որի մասին մենք
Այստեղ խոսեցինք:

Կեսար—Մեծ ուրախությամբ: Հրավիրում եմ
Չեզ տեսնել քույրն իմ, որի մոտ ուղիղ
Այժմ տանում եմ ձեզ:

Անտանիոս—Գնա՞նք, Լեպիտոս, մեզ մի լքի՛ր դու:

Լեպիտոս—Ազնի՛վ Անտոնիոս, հիշանդությունը

Միայն կարող էր ինձ ետ կեցընել:

Նվազածուրյուն: Դուրս են գնում Կեսարք, Անտառիոսը և Վայիտոսը:

Մեկենաս—Բարի ևս նկել դու Եղիսպատոսից:

Էնորացրոս—Գու Կեսարի սրտի կես, արժանավայել Մեկենաս, իմ
պատվավոր բարեկար Ազրիալպա:

Ազրիալպա—Բարի՛ էնորացրոս:

Մեկենաս—Մհերք պատճառ ունենք տւրախանալու, որ խնդիրներն այս-
պես լավ կարգավորվեցին, հույս ունիմ լավ անցկացրիք ձեր ժա-
մանակը Եղիսպատոսով:

Էնորացրոս—Այո՛, պարո՞ն, ցերեկն ամոթից քննցինք, իսկ զիշերը լու-
սացրինք խմելու:

Մեկենաս—Ութը վարազ խորոված նախաճաշին տասներկու մարդու
համար,— ճի՞շտ է այս:

Էնորացրոս—Մի ճանճ մի արծովի համա՞ր, մենք շատ ավելի հրեշացին
րանիր ունենք խնջույքի համար, որ արժանի մն հիշատակու-
թյան:

Մեկենաս—Նա մի փառահեղ տիկին է, եթե շահումը համապատասխա-
նում է նրան:

Էնորացրոս—Եթե նա առաջին անգամ հանդիպեց Մարկոս Անտոնիո-
սին Կյուղնոս գետի վրա՝ բատկեց նրա սիրաբ:

Ազրիալպա—Իսկապես այնուեղ էր, որ նա հանդես եկավ, եթե ոչ իմ
աեղեկատոն հնարքներ պատմեց նրա մասին:

Էնորացրոս—Ես կպատմեմ ձեղ,—

Զրոսանավը՝ ուր նստած էր նա,
նման էր բոցեղ զա՞րի, որ զրի
վրա վառվում էր, և հետնակողմը
Սեծած ոսկի էր, առազաստները՝
Եիրանի, այնքան բուրումնավետված,

Որ հողմերն էին տոշորում սիրուց,
Թիերն արծաթից, որոնք սրինդի
Զայնին համազարկ, և իրենց ծեծած
Զուրն շտապեցնում էին հետևել
Ավելի արագ՝ իբրև սիրահար
Համազարկերին: Գալով իր անձին՝
Որևէ տեսակ նկարագրություն
Աղքատ կղառնար: Նա պառկած էր իր

Տաղավարի մեջ — Հյուսված ուկեթել —

Ավելի շքնաղ, քան այն Աստղիկը,

Որ մենք տեսել ենք, մի գլուխործոց՝

Վեր բնությունից: Կանգնած էին նրա

Շուրջը տղաներ՝ սիրուն փոսիկով,

Նման ժպտացող կուպիդոնների,

Զանազան գույնի հովահարներով,

Որին, թվում էր՝ հողմը վառում էր

Փափուկ սրտերը և գովացնում,

Եվ նորից վառում:

Ազրիպպա—Օ՛, ինչ հազվագյուտ Մարկ Անտոնիոսին:

Էնորաբրոս—Իր նաժիշտները, ներեազների պես,

Սովանույշների՝ հակած աշքերին՝

Հավելում էին նոր գեղեցկություն

Նրա շնորհքին, ղեկը, թվում էր,

Ղեկավարում էր մի ծովապարիկ,

Եվ մետաքսահյուտ նավի սարքերը

Ուռչում էին ծաղիկից ավելի փափուկ

Չեռքի հպումից, որոնք աշխույժ են

Իրենց գերի մեջ: Զբոսանավից

Մի տարօրինակ, անտեսանելի

Թուրմունք զարնում էր ծովի ափերին

Մերձակա: Քաղաքն, իր ժողովուրդը

Ամբողջ հանում էր նրան զնդառաջ,

Իսկ Անտոնիոսը, նստած գահի վրա,

Հրապարակում, բազմած էր մենակ՝

Շվեյցընելով: Եթե լիներ

Ահավորությունն այդ դատարկության,

Նույն այդ շվեյցը պիտի լքաներ

Անտոնիոսին և պիտ գնար ընդառաջ

Կլեոպատրային:

Ազրիպպա—Օ՛, եգիպտութի շքնա՞ղ ու անգի՞ն:

Էնորաբրոս—Կեռպատրան, նրբ ցամաք իշավ,

Անտոնիոսը մարդ ուղարկեց նըրան,

Եվ հրավիրեց նըրան ընթրիքի:

Նա պատասխանեց խոր թախանձանքով՝

Ավելի լավ է, որ Անտոնիոսը
կիմի իր հյուրը Մեր ասպետական
Մարդկանիոսը, որից ո՛չ մի կին
Չի լսել «ոչը», և ածիրվելով
Տասն անգամ, զնաց նրա խնջույքին,
Ել իրքն նրա սովորությունը,
Վճարեց սիրաբ փոխարեն, միայն
Ինչ որ աշքերը իր կիրել էին:

Ազրիպատ—Արրայական բող, նա մեծ Կիսարին
Պառկեցնել տվեց սուրբ անկողնում,
Կիսարը հերկեց և նա էլ հնձեց:
Էնորաբրոս—Մի անգամ տեսա, ոսանեց քառասուն
Քայլ հասարակաց փողոցի միջից,
Ծնչասպառ նղաձ՝ նա ջանք էր թափում
Խոսել և հեալ, այսպիս դարձրեց
Թերությունը մի կատարելություն,
Թեև շնչասպառ, բայց ներշնչեցում:

Մեկենաս—Այժմ Անտոնիոսը պետք է լրի նրան
Բացարձակապետ:

Էնորաբրոս—Երբեք չի անի:
Հասակը երբեք չի կարող թողնել
Կլեոպատրակին և ոչ էլ երբեք
Սովորությունը կսպառի նրա
Անսահման, անհուն պիստիսությունը,
Մինչեռ այլ կանայք հագեցընում են
Ախորժակները, որոնց սնում են,
Բայց Կլեոպատրան բաղցածացնում է
Ամեն նրանց, որ ամենից շատը
Բավարարում է, բանզի ամենից
Վայրադ բաները փոխվում են նրա մեջ
Այն աստիճան, որ սրբազն քուրմերն
Օրհնում են նրան այն պահին, երբ նա
Իրեն հանձնում է:

Մեկենաս—Թի, էնորաբրոս, գեղեցկությունը,
Իմաստությունը, համեստությունը
Կարող կիննեն հանգստացնել

Սիրտն Անտոնիոսի՝ Օկտավիան նրան

Օքնաված մի բախտ է:

Ազրիպպա—Գնա՛նք, ուռ բարի իմ էնորարբոս,

Քանի այստեղ ես՝ եղիր իմ հյուրը,

Էնորարբոս—Խոնարհարար, տե՛ր, շնորհակալ եմ:

Դուրս են գնում:

Գ. Պ Ա Տ Կ Ե Ր

Հոսմ: Մի սենյակ Կեսարի տանք: Մտնում են Կեսարը, Անտոնիոսը,
Օկտավիան մեջտեղում, և նեալորդներ:

Անտոնիոս—Աշխարհն ու իմ մեծ պաշտոնը պետք է

Բաժանեն երբեմն ինձ քո ջերմ կրծքից:

Օկտավիա—Այդ ժամանակի բոլոր միջոցում

Ես ծնկի եկած պիտի աղոթեմ

Ասովածներին քո բախտի համար:

Անտոնիոս—Բարի գիշեր, տեր:—Իմ Օկտավիա,

Հանցանքներն իմ մի' կարդա աշխարհի

Հովատեսրերում, ես չեմ պահել իմ

Չափը, բայց ինչ որ նոր պիտի լինի՝

Պիտի լինի ըստ կարգ ու կանոնի:

Բարի գիշեր քեզ, թանկագի՞ն տիկին:

Օկտավիա—Բարի գիշեր, տե՛ր:

Կեսար—Օ՛, բարի գիշեր:

Դուրս են գնում Կեսարը և Օկտավիան: Մտնում է գուշակը:

Անտոնիոս—Է՛հե՛յ, քեզ հետ եմ, ուզո՞ւմ ես լինել

Դու եգիպտոսում:

Գուշակ—Երանի՛ երբեք եկած լինեի

Այնտեղից, ոչ էլ դուք լինեիք

Գնացած այնտեղ:

Անտոնիոս—Ասա՛ պատճառը՝ եթե կարող ես:

Գուշակ—Ես այդ տեսնում եմ իմ հուզմունքի մեջ,

Սակայն չեմ կարող իմ լեզվով ասել,

Բայց շտապեցեք նորից Եգիպտոս:

Անտենիոս—Ասա՛ դու ինձ պարզ՝ ո՞ւմ բախտն ավելի:

Պիտի բարձրանա — Կեսարի՛ թե իմ:

Գուշակ—Կեսարի, տե՛ր իմ, ուստի, Անտոնիոս,

Մի՛ մնա կոտքին, քո գեր, այսինքն՝

Քեզ պահող տղին աղնիվ է և քաշ,

Բարձր, անքուղական այն տեղերում, որ

Կեսարը զկա, սակայն նրա մոտ

Քո հըրեշտակը դառնում է երկչուա;

Ինչպիս որ զգար գերանվաճված,

Ուստի ձեր միջն բացի՛ր, Անտոնիոս,

Մի տարածություն:

Անտենիոս—Այս մասին այլևս դու մի՛ գրուցիր:

Գուշակ—Ոչ ոքի՛ բացի քերանից, միայն

Քո ներկայության: Եթե դու խաղաս

Մի խաղ նրա հետ՝ դու պիտի լինես

Կորցնողն ստուգ, քնական բախտից

Կհաղթանակի նա բեզ անպարհան,

Նսեմանում է քո փայլը, երբ նա

Շողում է կողքիդ: Ասում եմ նորից:

Քո ողին ամբողջ գառնում է երկչուա

Կառավարելու քո կամքը, երբ նա

Քո կողքին է միշտ, երբ նա գնում է՝

Ոգիդ դառնուեմ է բաշարի ու վեհ:

Անտենիոս—Հեռացի՛ր: Ասա՛ Կենտիդիոսին,

Որ ուզում եմ ես խոսել նրա հետ:

Գուշակը գնում է:

Պետք է գնա նա Պարթևաց երկիրն: —

Լինի դա արվեստ կամ մի պատահմունք: .

Այս մարդը խոսեց ճշմարտությունը,

Անգամ զարերը նրան¹⁴ են լսում,

14 Կեսարին:

Եվ մեր խաղերում իմ ավելի լավ
Ճարպիկությունը աղոտանոամ է
Նրա շող բախտից, թե վիճակ քաշենք՝
Նա կհաջողի, թե մեր աքլորներն
Հավասար ուժով իրար դեմ կովեն,
Նրա աքլորներն ընդմիշտ կհաղթեն,
Նրա լորերը անվրեսդորեն
Հաղթում են իմը:
Օ՛, ես կդնամ դեպի Եգիպտոս,
Թեև կնքեցի ամուսնությունն այս
Հաստատելու իմ խաղաղությունը,
Արևելքումն է իմ խոր հաճույքը:
Մանամ է Վենտիդիաը:
Արի՛, Վենտիդի՛ դիոս, դու պետք է զնաս
Երկիրն Պարթևաց, քո արտոնագիրն
Արդեն պատրաստ է, այժմ հետեւի՛ր ինձ
Եվ ստացի՛ր այն:

Դուրս են զնում:

Դ. Պ. Ա. Տ Կ Ե Ր

Հոռմ: Մի փողոց:
Մանում են Լեպիտոսը, Սեկենասը, Ագրիպպան:

Լեպիտոս—Այլմըս դուք ձեզ նեղություն մի տաք,
Եվ ինդրում եմ ձեզ շոապել զնալ
Ետեկցը ձեր զորապետների:
Ագրիպպա—Հենց որ համբուրի Մարկ Անտոնիոսը
Օկտավիային՝ մենք կհետեւենք:

Լեպիտոս—Է՛ս, մնաք բարով՝ մինչև երկուսիդ
Տեսնեմ գինվորի զգեստում, որը
Զեզ պիտի վայլի:
Սեկենաս—Ինչպես որ ես եմ ըմբռնում ճամփան՝

Կլինենք լեռան մենք ստորոտը
Քնզանից առաջ:

Ավալիտու—Զեր ճանապարհը ավելի կարճ է,
Իմ ծրագրերը բաշխում են ինձ
Դես-դեն, Մեկենաս: Խնձանից երկու
Օր առաջ այնտեղ դուք կժամանեք:
Մեկենաս և Ազրիվապա—Հաջողություն, տեր:
Ավալիտու—Օ՛, զնաք բարով!

Դուքս են զնում:

Ե. Պ. Ա. Տ Կ Ե Բ

Ալեբանդրիա: Մի սենյակ պալատում:
Մտնում են Կլեոպատրան, Շարմիանք, Խրաօք, Ալեքսանդ և հետևողներ:

Կլեոպատրա—Տվե՛ր ինձ նվազ, մի քիչ ինձ նվազ,
Թախծոտ սնունդը՝ սիրով զբաղված
Մեր հոգու համար:

Մի հետևորդ—Նվա՛զ, Հե՛յ, նվա՛զ:
Կլեոպատրա—Թո՞ղ մնա, զնա՛նք զնդակ խաղալու:
Արի՛, Շարմիան:
Շարմիան—Թելս ցալում է, լավ կանեք խաղաք
Մարդիանի հետ:

Կլեոպատրա—Մի կնոջ համար նույնն է խաղ անել
Մի ներքինու հետ կամ թե մի կնոչ:
Արի՛, ուզո՞ւմ ես խաղ անել ինձ հետ:
Մարդիան—Ինչքան կարող եմ, շնորհալի՛ տիկին:
Կլեոպատրա—Երբ ցուց է տրվում մի բարեսիրտ կամք,
Թեև շափազանց թերի և սակավ՝
Դերասանն ունի իրավունք ներման:
Ես էլ չեմ ուզում: Տուր ինձ իմ կարթը,
Գնանք գետափը, այնտեղ նվազն իմ
Կորորի հեռվից, և ես կխաբեմ
Թխորակ թեռվ ձկներ և իմ կեռ

Կարթը կծակի նրանց լպուծուն
Մնութը և երբ վեր քաշեմ նրանց՝
Պիտի համարեմ մի-մի Անտոնիոս,
Եվ պիտի ասեմ. «Հա՞ , Հա՞ , բռնվեցիր»:

Նարմիան—Մի ուրախ օր էր, երբ գրավ դրիբ
Քո ձկնորսության վրա, երբ որ քո
Լուղակն անցկացրեց մի աղած ձկնիկ
Նրա կեռ կարթին, որ վեր քաշեց նա
Ջերմեռանդությամբ:

Ալեռպատրա—Այդ ժամանակը, —օ՛, ժամանակներ...—
Ես ծիծաղեցի՝ հանելով նրան
Համբերությունից, և այդ գիշերը
Ես ծիծաղեցի՝ նորոգելով նրա
Համբերությունը, և առավոտյան
Իններորդ ժամից առաջ խացրի
Նրան՝ մինչ մահիճ, ապա նետեցի
Իմ հագուստները, վերարկուա վրան,
Եվ կապեցի ես սուրն իր Փիլիպպի:

Մտնում է մի պատգամաքեր:

Օ՛, հտալիայի՛ց... մխրճի՛ր դու քո
Բերրի լուրերը իմ ականջներին,
Որոնք եղել են երկար ժամանակ
Անբերրի, ամուլ:

Պատգամաքեր—Տիկին, օ՛, տիկին:
Ալեռպատրա—Անտոնիոս մեռա՞ծ...

Եթե ասում ես դու այդպիս, սրիկա՛,
Օ՛, սպանում ես դու քո տիրուչուն,
Իսկ եթե նրա առողջ և ազատ
Լինելու մատին դու ինձ հաղորդես՝
Ահա քեզ տակի, նաև կապտագույն
Իմ երակները, որ դու համբուրես,
Եվ մի ձեռք, որին հպել են շուրթով
Թագավորները, և համբուրելիս
Դողդողացել են:

Պատգամարեր—Նախ, տիկին, լավ է:

Կլեոպատրա—Ավելի սոկի, բայց, ուշադրություն,

Մենք ստվորություն տնենք ասելու,

Որ մեռենաեր լավ են և եթե

Քո մյօնքը այդ է, այն սոկին, որը

Ես քեզ եմ տալիս, կհաղցրնեմ,

Եվ կապարակիմ քո խարսդ կոկորդը:

Պատգամարեր—Տիրու՞նի, լսի՞ր

Կլեոպատրա—Լս'վ, շարունակի՛ր, ևս լսում եմ, բայց

Բարություն չկա քո գեմքի վրա,

Եթե Անտոնիոսն ակատ է, ասողը,

Ինչո՞ւ այդպիս մութ մի գեմք՝ այդպիսի

Հաջողակ լուրիր ինձ ավեաելու

Եթե ասողը չէ, զու պետք է զայիր,

Որպես մի ջազու օձերով պսակված,

Եվ ոչ թե որպես մի ծանրախոռն մարդ:

Պատգամարեր—Հաճիլի՛ է ձեզ՝ լսել ինձ, տիկին:

Կլեոպատրա—Մարից անցնում է Հարվածներ տալ քեզ,

Նախքան խոսելո, բայց այսուհանդերձ,

Եթե ասես զու, որ Անտոնիոսը

Ապրում է ասողը, կամ բարեկամ է

Կեսարի հետ, և ո՞չ նրան գերի,

Քեզ կնսուեցնեմ ոսկու տարափում,

Գլխիդ կթափիմ ճոխ մարդարիտներ՝

Ինչպիս մի կարկուտ:

Պատգամարեր—Տիկին, առողջ է:

Կլեոպատրա—Ի՞նչ լավ ասացիր:

Պատգամարեր—Նա բարեկամ է Կեսարի հետ:

Կլեոպատրա—Դու պարկեցած մարդ ես:

Պատգամարեր—Կեսարը և նա ավելի խորը

Բարեկամներ են, քան երրիք եղած:

Կլեոպատրա—Շինի՛ր քո բախտը իմ նվերներով:

Պատգամարեր—Բայց, սակայն, տիկին...

Կլեոպատրա—Ինձ դուր չի դալիս այդ ոբայց, սակայնը,

Դա մեղմացնում է լավ նախընթացը,

Գրողը տանի այդ բայց, սակայնը,

Այդ բայց, սակայնը մի բանտապահ է,

Հանդես կրերի նա հրեշտային

Մի շարագործի, աղերսում եմ քեզ,

Բարեկամ բարի, թափի՛ր ականջիս

Լուրերի պարկը, բարին և շարը՝

Երկուսը միասին, նա բարեկամ է

Կեսարի հետ և առողջ վիճակում

Դու ասում ես ինձ, ասում ես՝ աղատ...

Պատգամաբեր—Ազա՛տ: Ո՛չ, տիկին, ես այսպիսի լուր

Զհաղորդեցի: Այժմ կապված է

Օկտավիայի հետ:

Կլեոպատրա—Ի՞նչ բարի գործով:

Պատգամաբեր—Տիկին, անկողնում, լավագույն գործով:

Կլեոպատրա—Շարմիա՛ն, նվազում եմ:

Պատգամաբեր—Տիկին, Անտոնիոսն ամուսնացած է

Օկտավիայի հետ:

Կլեոպատրա—Ամենանեխած ժանտախոր գլխիդ:

Խփում է նրան և վայր զցում:

Պատգամաբեր—Համբերիր, տիկին:

Կլեոպատրա—Ի՞նչ ես ասում դու, հեռացի՛ր աշքից:

Նորից է խփում:

Սոսկալի՛ սրիկա, թե ոչ կհանեմ

Աչքերդ, գնդակի նման կնետեմ

Իմ ոտների տակ, կփետեմ գլխիդ

Մազերը, սրիկա՛:

Նրան վերովար է քաշեցում:

Պետք է մտրակել քեզ, երկաթ թելով,

Եփել աղջրամ, կսկծացընել

Երկար ժամանակ թթվաշրի մեջ:

Պատգամաբեր—Ազնի՛վ տիրուհի, ես որ բերեցի

Լուրն ամուսնության, ես չկնքեցի

Կապն ամուսնության:

Ալեռպատրա—Սամ' այդպիս չէ, քեզ կնպիրեմ

**Մի ամբողջ գավառ և կրարձնեմ
Քո բախտը շրեղ, այն հարվածները,
Որ դու ստացար՝ քո հաշառությունը
Կառաջացրնեն ինձ կատաղության
Մզկլուկ համար, կհատուցանեմ
Քեզ փոխարեն ինչ նվերով որ քո
Համհստությունը կարող է խնդրել:**

**Պատգամարեր—Նո պատկիստ է, բարի տիրուհին
Ալեռպատրա—Ստորոտ սրիկա, օ՛, դու ապրել ես
Զափականց երկար:**

Քաշում է դաշույնը:

**Պատգամարեր—Ուրիմըն փախչեմ: Ի՞նչ է ձեր միտքը,
Ես հանցանք չունեմ:**

Դուրս է գնում:

Շարմիան—Բարի տիրուհի, դուք ձեզ զսպեցեք,

Այս մարդն անմեղ է:

Ալեռպատրա—Եվ կան անմեղներ, որ չեն խուսափում

Շանթի հարվածից:—

Թո՞ղ եգիպտոսը կորչի նեղոսում,

Եվ արարածներ բարեզութ ու մեղմ

Թո՞ղ դառնան օձիր: Կանչի՞ր ստրուկին,

Թիկ զժված եմ, չեմ խածնի նրան,

Կանչիր դու նորից:

Շարմիան—Վախճնում է՝ զա:

Ալեռպատրա—Վատ բան չեմ անի:

Շարմիանը գնում է դուրս:

Չեռներն այս շոնեն ազնվությունը,

Որ հարվածում են ավելի ստոր

Մի անձի, առանց ուրիշ պատճառի,

Քան որ ես եմ ավել իմ անձին:

Մոտ արի, պարոն, թեև պարկեշտ է,
Բայց երբեք բարի — բերել վատ լուրեր,
Տուր բարի լուրը բյուր լեզուներով,
Բայց չար լուրերը թող իրենք իրենց
Զգացընել տան:

Պատգամաբեր — Ես կատարել եմ իմ պարտքը, տիկի'ն:
Կլեոպատրա — Ամուսնացած է, բարի՝ տիրուհի:

Ասել ավելի, քան թե ատում եմ՝

Թե կրկին անգամ դու այս ասես:

Պատգամաբեր — Ամուսնացած է, բարի՝ տիրուհի:

Կլեոպատրա — Օ՛, աստվածները քո տոմնը քանդեն:

Էլի պնդո՞ւմ ես:

Պատգամաբեր — Սո՞ւս խոսեմ, տիկին:

Կլեոպատրա — Այո՛, երանի՛: Կեսն Եգիպտոսի

Ջրամույն լիներ, դառնար ջրամբար

Թեկուու օձերի: Գնա՛, Հեռացի՛ր,

Թե ունենայիր Նարկիզի դեմքը՝

Դու կերևայիր ամենատգեղն

Իմ աշքին դարձյալ: Ամուսնացած է:

Պատգամաբեր — Ես աղերառում եմ ձերըդ բարձրության

Ներուզությունը:

Կլեոպատրա — Ամուսնացած է:

Պատգամաբեր — Սի վշտանաք դուք, երբ ես չեմ ուզում

Վշտացընել ձեզ: Պատժել այն բանի

Համար, ինչ որ դուք ուզում եք անեմ,

Ծատ անարդար է: Ամուսնացած է:

Օկտավիայի հետ:

Կլեոպատրա — Նրա հանցանքն է, որ դարձընուամ է

Քեզ մի արիկա: Ամուսնացած է,

Վստա՞հ ես դրան: Գնա՛, Հեռացի՛ր:

Այն ապրանքները, որ դու բերել ես

Հոռմից՝ չափազանց թանկ ինձ համար,

Պահիր քո ձեռին և դրանցով էլ

Կործանվես ինքըդ:

Պատգամարերը զնում է դուռ:

Եարմիան—Բարձրու տիրուհի, սրբար է Համբերիս:
Կլեպատրա—Գովարանիլով Անտոնիոսին՝

Պարապել եմ ևս Կիսարին, Շա'րմիան:

Եարմիան—Եվ շատ անդամներ, բարի' տիրուհի,
Կլեպատրա—Այժմ ստանում եմ իմ Հատուցումը:

Տար ինձ այսակից, ևս նվազում եմ:
Իրա՛ս, Շարմիան,— ոչինչ, Ալեքսա՛ս,
Գնա և գտիր այդ մարդուն, ասա՛
Թո՛ղ տեղեկություն առ Օկառավիայի
Գեմբի, տարիքի, Հակոբամի մասին,
Թող չմոռանա մազի երանդը.
Լուր բե՛ր ինձ արագ:

Գնում է Ալեքսար:

Թող ընդմիշտ գնա, օ՛, թող շզմա,
Շարմիան, մի կողմից նա նկարված է
Նման Գորդոնի, իսկ մյուս կողմը
Մի Արես է նա: Թող Ալեքսասը,

Մարդիանին

Ինձ տեղեկացնի, թե նրա Հասակն
Ինչքան է բարձրու Կարեկից եղի՛ր,
Շարմիա՛ն, և ինձ հետ մի խոսիր, միայն
Տար ինձ սհնյակը:

Գուս են զնում:

Զ. Պ. Ա. Տ Կ Ե Ր

Միսենումի մոտ:

Նվազ: Մանում են մի կողմից Պամպեոսը և Մենասը բմբուկով և փողերով, մյուս
կողմից Կեսարը, Անտոնիոսը, Լեպիտոսը, Էնորաբրոսը, Մեկենասը՝ զինվարեներով:

Պոմպեոս—Ես ունեմ ինձ մոտ ձեր պատանդները,
Իսկ դուք՝ իմինը, մենք պետք է խոսենք
Կովելուց առաջ:

Կեսար—Շատ պատշաճ է, որ մենք խոսում ենք նախ:
Այս նպատակով մեղանից առաջ

Մենք ուղարկել ենք քեզ մեր զրավոր
Առաջարկները: Դրանք քննե՞լ ես:
Նրանք ունե՞ն այն բնույթը, որ քո
Դժգո՞ն սուրբ վար դնես ու տանես
Ետ դեպ Սիկիլիա բոլոր գեռատի
Եվ հասակագեղ մարդիկը, որոնք
Ուրիշ կերպ այստեղ պիտի կործանվեն:
Պոմպեոս—Հայտարարում եմ ահա երեքիդ,
Ո՞վ սենատորներ այս մեծ աշխարհի,
Ո՞վ աստվածների ավագ միջնորդներ,—
Ես չեմ իմանում, թե ինչո՞ւ համար
Իմ հայրը մնա վրեժի կարոտ՝
Երբ որ նա ունի ահա մի որդի
Եվ բարեկամներ, և ահա՝ մինչդեռ
Հովհաննես—Կեսարը, երբ Փիլիպպիում,
Քաջ Բրուտոսին երեաց իբրև
Մի սե ուրվական, նա տեսավ այնտեղ
Չեզ, որ իր համար ճիզ էիք թափում:
Ի՞նչն էր, որ դրդեց դժգույն Կասիոսին
Դավադիր լինել, ի՞նչն էր պատճառը
Բոլորից հարգված, պարկեշտ հռոմեացուն,
Քաջ Բրուտոսին, միասին զինված
Կուսակիցների—շողոքորթիչներ
Պերճ ազատության — որ արյամբ իմեղեց
Մեր Կապիտոլը և այս արարքը
Այն բանի համար, որ ուզում էին
Նրանք լոկ մի մարդ մի մարդու համար:
Եվ ահա այս էր պատճառը, որ ինձ
Մղեց կազմելու ուղմատորմիղն իմ,
Որի ծանրության ներքո զայրացած
Օվկիանն է փրկուամ: Ես այդ տորմիղով
Նպատակ ունեմ պատժի ենթարկել
Ապերախտ գործն այն, որը չարակամ
Հռոմը թափեց ազնիվ հորս վրա:
Կեսար—ինչպես որ կուզեք:
Անտոնիոս—Դու չես կարող մեղ վախցնել, Պոմպե՞,
Քո նաևի երով, կիսունք քեզ հետ

Մովկերի վրա, ցամաքի վրա
Գու գիտես, Պամպի', քանիսատիկ քեզ
Գերակշռում մնիր

Պոմպեոս—Յամաքի վրա, խեկատիս, դու ինձ
Գերակշռում ես իմ հորը տնով,
Բայց քանի կկուն բույն չի կառուցում
Ինքը իր համար, մնա՞ դու այնուեղ
Ինչքան կարող ես

Լեպիտոս—Բարեհաճեցեր մեղ պատասխանել
(Զի գա դուրս է մեր ներկայի վեճից),
Ի՞նչ վերաբերմում դուք ցույց մեր տալիս
Առաջարկներին, որ արել մնի ձեզ

Կեսար—Ահա ճիշտ կեսար:

Անտոնիոս—Եվ գու կարող ես մերժել բոլորը,
Բայց կշռեմի, թե որն է արժանին

Որդեզրելու

Կեսար—Եվ հավանական հետևանքները՝
Փորձ կատարելու մի ավելի մեծ
Բախտավորության:

Պոմպեոս—Առաջարկել եք ինձ Սիկիլիան
Եվ Սարդինիան, ապա ես պետք է
Մարդեմ ծովերը ծովանեններից,
Հոռոմ ուղարկեմ այսրան շափ ցորեն,—
Սրանց շուրջ եթե մենք համաձայնվենք՝
Պետք է բաժանվենք շկոտրած սայրով
Եվ ետ տանինք մեր ասպարներն անխոց:

Կեսար, Անտոնիոս, Լեպիտոս—Եվ այդ է եղել մեր առաջարկը:
Պոմպեոս—Ուրիմն իմացե՛ք —

Ես եկա այստեղ իբրև մի մարդ, որ
Պատրաստ է, հոժար ընդունելու ձեր
Առաջարկները, բայց Անտոնիոսը
Պատճառեց մի քիչ ինձ սրտնեղություն,
Թող կորցնեմ ես զրա արժեքը
Լոկ պատմելով այդ, պարտ եք իմանալ,
Որ երբ Կեսարը և ձեր եղբայրը,
Անտոնիոս, իրար դեմ էին կռվում,

Քո մայրը եկավ դեպի Սիկիլիա
Եվ այնտեղ գտավ Հյուրասիրովթյուն։
Անտոնիոս—Լսել եմ, Պո՛մպե, և ես պատրաստ եմ
Հայտնել վեհանձն շնորհակալություն,
Որ ես պարտ եմ ձեզ։
Պոմպեոս—Տվիք ձեր ձեռքը, ես չեի կարծում,
Որ կհանդիպենք մենք իրար այստեղ։
Անտոնիոս—Արևելքի մեջ անկողինները
Կակուղ են, փափուկ: Ես պարտական եմ
Ձեզ, որ կանչեցիք ինձ ավելի շուտ
Իմ մտածածից, քանզի դրանով
Ես օգտըլեցի։
Կեսար—Վերջին անգամ ձեղ տեսնելուց ի վեր՝
Դուք շատ եք փոխված։
Պոմպեոս—Ես չեմ իմանում, թե դաժան բախտը
Ի՞նչ ունի արդյոք ինձ վերապահած,
Բայց իմ կրծքի մեջ նա երբեցէ
Մուտք չի գործելու՝ դարձնելու սիրտս
Մի ստորին ճորտ։
Լեպիտոս—Լավ հանդիպեցինք:
Պոմպեոս—Ճուամ, Լեպիտոս,
Ահա մենք այսպես համաձայնվել ենք,
Ես ցանկանում եմ, որ մեր դաշինքը
Լինի գրավլոր՝ նաև կնքըլած
Բոլորիս միջև։
Կեսար—Արանից հետո այդ ենք անելու։
Պոմպեոս—Մենք իրար պետք է խրախնք նախքան
Մեր բաժանումը, վիճակ զցինք թե
Ո՞վ է սկսում։
Անտոնիոս—Առաջինը ե՛ս պետք է սկսեմ,
Պոմպեոս—Ո՛չ, Անտոնիոս, քաշի՛ր վիճակը,
Առաջինն լինես կամ թե վերջինը՝
Քո եգիպտական պերճ խոհանոցը
Պիտի հոչակվի:
Ես լսել եմ, որ Հովիոս Կեսարը
Գիրացավ այնտեղ ուտել-խմելով։

Անտոնիոս—Շատ բան եք լսելու
Պոմպեոս—Մարդկար բարի ենու
Անտոնիոս—Բարի մարդկարին և բարի բառեր
Պոմպեոս—Ուրեմն լսածն իմ միայն այսքան է,
Եվ լսել ամ, որ Ասպոլոգոսը
Տարել է...
Էնորաբրոս—Այդ մասին այդքան, այո՛, տարել է...
Պոմպեոս—Ի՞նչ, խնդրում եմ ձեզ
Էնորաբրոս—Ումն թագուհու տարել Կեսարին
Մի անկողնի մեջ:
Պոմպեոս—Զինվո՛ր, քեզ այժմը ևս ճանաշում եմ,
Գործերդ ինչպէ՞ս են:
Էնորաբրոս—Լավ, և այդպիս էլ կշարունակիմ,
Զի նշշարում եմ Հենանկարում
Չորս խրախճանքներ
Պոմպեոս—Թո՛ւյլ տուր ինձ սեղմեմ քո ձեռքը, երբեք
Ես քեզ չեմ ատել, և ես տհսել եմ
Քո մարտնչումը, նախանձել եմ քո
Քաջասրտության:
Էնորաբրոս—Պարո՛ն, ես երբեք ձեզ շատ շեմ սիրել,
Բայց ես երգել եմ ձեր ներբողները,
Երբ արժան էիր տասն անդամ ավել,
Քան ասում էին
Պոմպեոս—Օ՛, զու ըմբոշխնիր քո պարզությունը,
Գա քեզ կվային:
Իմ ցոկանավի վրա բոլորիդ
Հրավիրում եմ: Աղնվականներ,
Կանցնե՞ք դուք առաջ:
Կեսար, Անտոնիոս, Լեպիտոս—Ցուց ավեր ճամփան:
Պոմպեոս—Խնդրեմ, համեցեր:

Բոլոր դուրս են գնում, բացի Մենասից և Էնորաբրոսից:

Մենաս—(Մեկուսի)՝ Քո հայրը, Պոմպե, երբեք այս դաշինքը չէր կնքի:
Գուք և ես իրար ծանոթացել ենք, պարո՛ն:
Էնորաբրոս—Հավանականորեն՝ ծովի վրա:

Մենաս—Այո՛, պարո՞ն:

Էնորարբու—Դուք լավ գործ տեսաք ծովի վրա:

Մենաս—Իսկ դուք էլ՝ ցամաքի վրա:

Էնորարբու—Ես կզովեմ որևէ մեկի, որ ինձ գովում է, թեև ինչ որ ես
արել եմ ցամաքի վրա՝ չի կարելի ուրանալ:

Մենաս—Ո՛չ էլ՝ ինչ որ ես արել եմ ծովի վրա:

Էնորարբու—Կա մի բան, որ դուք կարող եք ուրանալ ձեր աեփական
օգտի համար, դուք մի մեծ ավազակ եք եղել ծովի վրա:

Մենաս—Եվ դուք էլ՝ ցամաքի վրա:

Էնորարբու—Այդ պարագային ես կուրանամ իմ ցամաքի ժառայու-
թյունները: Բայց տվեք ինձ ձեր ձեռքը, Մենա՛ս, եթե մեր աշքերը
իշխանություն ունենան, հենց այստեղ կարող են ձերբակալել
երկու ավազակներ, որոնք համբուրփում են:

Մենաս—Բոլոր մարդկանց դեմքերը անկեղծ են, ինչ էլ որ նրանց ձեռ-
քերն անեն:

Էնորարբու—Բայց երբեք չկա մի գեղեցիկ կին, որ անկեղծ դեմք
ունեն:

Մենաս—Զարախոսություն չէ, նրանք արտեր են գողանոամ:

Էնորարբու—Մենք այստեղ եկանք ձեզ հետ կովելու:

Մենաս—Ինձ հարցնես՝ ես ցավում եմ, որ դա վերածվեց մի կերուխու-
մի: Պոմպեոն այսօր կորցնում է իր բախտը ծիծաղելով:

Էնորարբու—Եթե կորցնի, վստահորեն, ողբալով չի կարող ետ ստա-
նալ նորից:

Մենաս—Դուք լավ ասացիք, պարո՞ն: Մենք Մարկոս Անտոնիոսին այս-
տեղ չեինք սպասում: Նա ամուսնացած է Կլեոպատրայի հետ:

Էնորարբու—Կեսարի քրոջ անոնց Օկտավիաս է:

Մենաս—Ճիշտ է, պարոն, Կայոս Մարցելոսի կինն էր նա:

Էնորարբու—Բայց նա այժմ Մարկոս Անտոնիոսի կինն է:

Մենաս—Ի՞նչ ասացիք:

Էնորարբու—Ճշմարիտ է:

Մենաս—Ուրեմն Կեսարը և նա հավիտենապես կապված են իրար:

Էնորարբու—Եթե ես պարտական լինեի այս միացումի մասին գուշա-
կություն անելու, ես այլ կիրապ կմարգարեանայի:

Մենաս—Ես կարծում եմ, որ քաղաքականությունը այդ ամուսնության
մեջ ավելի դեր խաղաց, քան կողմերի սերը:

Էնորարբու—Ես էլ եմ այդպես կարծում: Բայց դուք պիտի տեսնեք, որ

այս կապը, որ թվում է թե նրանց բարեկամությունն իրար է ամ-
րացրել, կզառնա միենուին հեղձամահ անողը նրանց բարեկամու-
թյան։ Օկտավիան մաքրաբարտ, սառը և անշարժ մի կհնակից է։
Մենաս—Ռ' վ շէր ուզենա, որ իր կինն ալդպիս լիներ։
Ենորարքոս—Ռ' նա, որ ինքն ալդպիս չէ, ինչպիսին Մարկոս Անտո-
նիոսը նա նորից պիտի վազի իր եղիպատական պնակին, այն
ժամանակ Օկտավիայի հաստաշանքները պիտի փշեն և արծար-
ծեն կրակը Կիսարի սրառում, և, ինչպիս առաջ առացի, ինչ որ
նրանց բարեկամության ուժն է՝ պիտի հանգիսանա անմիշական
հեղինակը նրանց անհամաձայնության։ Անտոնիոսը պիտի օդ-
տագործի իր սերն այնտեղ, որտեղ նա է։ Նա ամուսնացալ
Կիսարի քրոջը միայն պատահաբար։

Մենաս—Եվ ալդպիս էլ կարող է լինել նավ կդա՞ր, պարո՞ն, ես մի
կինաց ունեմ ձեզ համար։

Ենորարքոս—Կրնզունիմ, պարո՞ն, մենք սովորեցրել ենք մեր կոկորդ-
ները Եղիպատոսում։

Մենաս—Գնա՞նք

Գուրս են զնում։

Է. Պ Ա Տ Կ Ե Բ

Պոմպեոսի ցոլանավի վրա, որ կանգնած է Միսենումի մոտ։
Նվազ։ Մանում են երկու կամ երեք սպասավորներ¹⁵ աղանդերով։

Ա. սպասավոր—Այստեղ պիտի լինեն, մա՞րդու նրանց տնկերից շատերն
արդեն արմատից խախտված են և աշխարհի մի թիթեւ հով նրանց
դետին կտապալի։

Բ. սպասավոր—Լեպիտոսն ամրողովին կարմրել է։

Ա. սպասավոր—Նրանք խմեցրին մնացորդները։

Բ. սպասավոր—Երբ նրանք իրար են կմշտում, ըստ տրամադրության,
նա ճշում է՝ հերիք է, համաձայնեցնում է նրանց իր թախան-
ձանքներով, ինքն էլ օգուտ է քաղում խմելու։

¹⁵ Բնագրում բառը նապատակ է, որ Ծերսպիրի ժամանակ պարզապիս նշանակում էր աղանդեր (dessert)։

Ա. սպասավոր—թայց դա առաջ է բերում ավելի մեծ պատերազմ նրա
և իր բանականության միջև:

Բ. սպասավոր—Հը՛, այս բոլորը մեծ մարդկանց ընկերակցության մեջ
հոշակ ձեռք բերելու համար է: Ես ուրախությամբ ձեռք կրերեմ
մի եղեգ, որն ինձ ոչ մի ժառայություն չի կարող մատուցանել,
քան մի գեղարդ, որը շեմ կարող վերցնել:

Ա. Սպասավոր—Հըրավիրմել խոշոր շրջանում և ջտեսնել, որ մարդ մեջը
շարժվում է, նման է լինել կույր աշքերի խոռոշներում, որոնք
ողորմելիորեն փշացնում են դեմքը:

Լսում է նվազի ձայն: Մտնում են Կեսար, Անտոնիոս, Լեպիտոս, Պոմպեոս,
Ագրիպպան, Մեկնասը, Էնորաբրոսը, Մենասը՝ ուրիշ զորապետների նետ:

Անտոնիոս—(Կեսարին) —Այսպես են անում, — Նրանք չափում են
Հորդը նեղոսի բուրգերի վրա
Նշանագրված շափանիշներով,
Նրանց բարձրությամբ, նրանց ցածրությամբ
Կամ միշտակությամբ, նրանք կիմանան
Չափն առատության կամ բերած տիղմի,
Որքան բարձրանա նեղոսը, այնքան
Խոստումներ կտա, երբ տեղի կտա՝
Սերմնացանները հատիկներն իրենց
Ցանում են տիղմի և սիկի վրա,
Եվ անմիշապես կհասնի հունձքը:

Լեպիտոս—Դուք այնտեղ ունեք տարօրինակ օձեր:

Անտոնիոս—Այո՛, Լեպիտոս:

Լեպիտոս—Եգիպտոսի ձեր օձը ծնվում է այժմ ձեր ցեխից, ձեր արևի
ներգործության ներքո, այսպես և ձեր կոկորդիլոսը:

Անտոնիոս—Այդպես են:

Պոմպեոս—Նստեցե՛ք: Գինի՛... Լեպիտոսի կենա՛ցը:

Լեպիտոս—Ես այնքան լավ շեմ զգում, որքան պետք է զգայի, բայց
երեք խելքս չեմ կորցնի:

Էնորաբրոս—Մինչև որ քնիք, բայց վախենում եմ, մինչև քնելը՝ ձեր
գործն արդեն պրծած լինի:

Լեպիտոս—Ես լսել եմ, որ Պտղոմեոսների բուրգերը շատ գեղեցիկ բա-
ներ են, առանց հակածառության, ես այդ լսել եմ:

Մենաս—(Մեկուսի Պոմպեոսին) —Պոմպեի՛, մի բառ:
Պոմպեոս—(Մեկուսի Մենասին) —Ասա՛ ականջիս, ի՞նչ էտ
Մենաս—(Մեկուսի Պոմպեոսին) —Թող աթոռող, աղաշում ևմ քեզ, զո-
րապիս, և լսի՛ր քեզ մի բառ առեհիմ:
Պոմպեոս—(Մեկուսի Մենասին) —Ազատ թո՛ղ ինձ մի բիշ ժամանակ:—
Լեպիտոսի կենա՛ցրի
Լեպիտոս—ի՞նչ անսակ բան է ձեր կոկորդիլոսոր:
Անտոնիոս—Նա կազմված է, ինչպես իր կազմը, պարոն, նա այնքան
լայն է, արքան լայնք ունի, նա այնքան բարձր է, որքան որ
բարձր է, նա շարժվում է իր անփական օրդաններով, նա ապրում
է ինչով որ սնվում է, և երբ ատրերքը հետանան նրանից, նա
հոգեփոխվում է:
Լեպիտոս—ի՞նչ գույն ունի:
Անտոնիոս—Հենց իր գույնը:
Լեպիտոս—Տարօրինակ մի օձ է:
Անտոնիոս—Այսպես է, եվ նրա արցումքները թաց են:
Կեսար—Այս նկարագրությունը կրավարարի՛ նրան:
Անտոնիոս—Այն առողջաթյամբը, որ Պոմպեն կմաղթի նրան, այլա-
պես նա մի անհատ էպիկորյան է:
Պոմպեոս—(Մեկուսի Մենասին) —Գնա՛, կորի՛ր, պարո՛ն, կորի՛ր,
ինչի՞ մասին ես ինձ խոսում: Կորի՛ր, արա, ինչ որ կարգադրում
եմ քեզ: Ո՞ւր է այն բաժակը, որ ես պահանջեցի:
Մենաս—Ի փոխարենն իմ արժանիքների՝ դու սիետք է լսես ինձ և վեր
կենաս քո աթոռից:
Պոմպեոս—Ես կարծում եմ դու զժվել ես: Պատճա՛ռը:

Վեր է կենում և բայլում է մի կողմ:

Մենաս—Ես հավետ ողջունել եմ քո բախտավորությունները:
Պոմպեոս—Դու ինձ ծառայել ես խորը հավատարմությամբ, ուրիշ ի՞նչ
ունես ասելու: Ուրախացե՛ք, պարոննե՛ր:
Անտոնիոս—Այս սուրզող ավազներից հեռու կաց, լեպիտոս, կխռվես:
Մենաս—Ուզո՞ւմ ես լինել արար աշխարհի տերը:
Պոմպեոս—ի՞նչ ես ասում:
Մենաս—Ուզո՞ւմ ես լինել արար աշխարհի տերը: Երկրորդ անգամն եմ
հարցնում:

Պոմպեոս—ինչպէ՞ս:

Մենաս—Միայն ընդունի՛ր, ինչ որ ասում եմ,

Թեև դու ինձ մի խեղճ մարդ ես կարծում,

Թայց ես այն մարդն եմ, որ քեզ պիտի տա

Արար աշխարհն:

Պոմպեոս—Լա՞վ ես դու կռնծել:

Մենաս—Ո՛չ, ինձ պահել եմ հեռու բաժակից:

Դու ես Արամազդն երկրային, եթե

Հանդգնես լինել, ինչ որ օվկիանը

Ծրջապատում է, ինչ որ երկինքը

Պարածածկում է՝ քոնն է, թե ուզես:

Պամպեոս—Ցույց տուր թե ինչպես:

Մենաս—Աշխարհի երեք բաժնեկիցներն այս,

Այս մրցորդները՝ քո նավի մեջ են,

Թո՛ւզլ տուր ինձ կտրեմ նավի պարանը,

Եվ երբ դուրս կգանք դեպի բաց ծովը,

Իսկույն կշռեմ նրանց կոկորդը,

Դրանից հետո ամեն ինչ քոնն է:

Պոմպեոս—Ո՛չ, դու այս բանը պետք է անեիր,

Եվ ոչ խոսեիր: Այդ բանն իմ կողմից

Մի լրբություն է, սակայն քո կողմից՝

Մի ծառայություն: Պետք է գիտենաս,

Որ շահը չէ ինձ առաջնորդողը,

Այլ իմ պատիվը առաջնորդում է

Իմ շահը, Մենա՛ս:

Զղջա՛, որ լիզուդ մատնեց քո գործը,

Եթե գործվեր ինձանից անհայտ,

Ես, հետագայում, կհամարեի

Լավ գործադրված, բայց պարտական եմ

Ես դատապարտել այդ բանը հիմա:

Ետ կաց այդ մտքից և խմի՛ր, հարթի՛ր:

Մենաս—(Մեկուսի) Այս բանի համար ես շեմ հետևի

Այլեւս երեք քո ընկրկող բախտին:

Ով որ փնտրում է և չի վերցնում,

Երբ մատուցվում է՝ երբեք չի դանում:

Պոմպեոս—Այս կեպիտոսի կենացն եմ խմում:

Անտոնիոս—Ափ տարե՞ք նրան, վոխարեն նրա՝

Ես կընդունեմ այդ բաժակը, Պոմպե՞ի

Էնորագրոս—Քո կինաց, Մենա՛ս:

Մենաս—Ափով, էնորագրու

Պոմպեոս—Լցրո՞ւ թափնեթափ:

Էնորագրոս—Ահա զորավոր մի մարդ քեզ, Մենաս:

Ցայց է, տալիս այն նետերդին, որ տաճում է Ասյիտոսին:

Մենաս—Ինչո՞ւ, ի՞նչ կա որու

Էնորագրոս—Մա՞րդ, նա տաճում է արար աշխարհի
Մի երրորդ մասը, չե՞ս տհանում դու այդու

Մենաս—Մի երրորդ մասը, ուրիշն հարրած է,
Երանի հարրած լիներ ամբողջը,

Որ հեշտ զլորվեր:

Էնորագրոս—Խմի՞ր, հարթեցի՞ր և արագացրո՞ւ
Այդ զլորումը:

Մենաս—Օ՞ն, էնորագրոս:

Պոմպեոս—Սա դեռ չգարձակ Արեսանդրյան

Մի խրախություն:

Անտոնիոս—Մերձենում է դրանու Հե՞յ, Հե՞յ, դարձկեցի՞ք
Զեր բաժակները, Կիսարի կինա՞ց:

Կիսար—Շատ լավ կլիներ հրաժարվեի,

Մի աշխատանք է սա հիեշացին:

Երբ լվանում եմ ևս իմ ուղեղը,

Ավելի խառնակ նա պղտորվում է:

Անտոնիոս—Եղի՞ր զավակը պարագաների:

Կիսար—Պարպի՞ր բաժակը, կպատասխանեմ,

Բայց նախընտրում մի չորս օր ծոմ պահել,

Քան խմել այսքան միայն մի օրում:

Էնորագրոս—(Անտոնիոսին)՝ Օ՞, քաջանամբավ իմ իմպերատոր,

Զպարե՞նք հիմա Եղիպտյան շվայտ

Պարը բարույան և տոնախմբենք

Մեր գինաբրուքը:

Պոմպեոս—Տեսնե՞նք այդ պարը, քաջարի՞ զինվոր:

Անտոնիոս—Եկե՞ք, բռնեցի՞ք բոլորդ իրար ձեռք,

Մինչև հաղթական գինին սուզի մեր
Զգացմոնքները քնքուշ և նրբին
Լեթեի գրկում:

Էնորարոս—Եկե՛ք, բռնկցե՛ք քողորդ փրար ձեռք,
Ումբակոժեցեք մեր ականջները
Գոռ երաժշտովամբ:
Նույն միջոցին ձեղ կտեղավորեմ,
Ապա այս տղան կերպի՛ ձեղ համար,
Յուրաքանչյուր մարդ կտա հանկերգը
Այնքան գոռ, որքան՝ կողերի ուժը:

Նվազ: Էնորարոսը դասավորում է նրանց ձեռմ-ձեռմի:

Երգ

Արի՛ դու, արի՛, միապե՛տ զինու,
Փքող աշեերով թափուրդ զիրուկ,
Քո հնձաններում մեր հոգսը թաղենք,
Քո ողկույզներով մեր վարսը պսակենք,
Գինի տո՛ւր դու մեզ, զինի տո՛ւր, հարբե՛նք,
Մինչև աշխարհը մի շրջան դառնա,
Գինի տո՛ւր մեզ, զինի տո՛ւր, հարբե՛նք,
Մինչև աշխարհը մի շրջան դառնա:

Վեստ—Ի՞նչ եք ուղում դուք սրանից ավելի:
Բարեկամ Պոմպե, քեզ բարի գիշեր:
(Անտոնիոսին) —Եղբայր իմ բարի, թույլ տուր քեզ տանեմ
Ինձ հետ, ավելի լրջմիտ մեր գործը
Խոժող է նայում այս թիթեռության:
Ազնի՛վ իմ տերեր, բաժանվե՛նք, գնա՛նք:
Դուք տեսնում եք, որ մենք արդեն այրել ենք
Մեր երեսները: Անգամ զորավոր
Էնորարոսը ավելի թույլ է,
Քան թե այս գինին, և իմ իսկ լեզուն
Հերձում է ինչ որ լեզուս խոսում է:
Եվ այս վայրենի գինովությունը
Դարձրեց զրեթե բոլորիս միմոս,

401

Եվլ իմէ կարիք կա ավելի խոսքի,

Զեղ բարի դիշերու

Քաջ Անտոնիո՛ս, տո՞ւր ինձ քո ձեռքը:

Պոմպեոս—Զեղ կրտելիքանամ մինչեւ ծովափը:

Անտոնիոս—Ե՛ս էլու Տո՞ւր ձեռքը:

Պոմպեոս—Օ՛, Անտոնիոս, դու գրավել ես

Իմ հոր տոնն, սակայն ի՞նչէ, ոչինչ,

Բարեկամներ մնք: Իշխանք մակուցիք:

Էնորաբրոս—Օ՛, զգուշացեք, վար շզլորվեք:

Դուրս են զնում Պոմպեոսը, Կեսարը, Անտոնիոսը և նետեռդենքը:

Ես ափ շիմ զնա, Մենա՛ս, կդնա՞ս:

Մենաս—Ո՛չ, զնանք խուցն իմ:

Այս թմբուկները և այս փաղերը,

Եվ սրինգները ինչո՞ւ են լոել:

Թող Պոսիդոնը տախ, թե փնտպես

Բարձրագաղակ մենք ողջերթ ենք մաղթում

Այս մհծ անձերին: Օ՞ն, Հնչեցրե՛ք,

Կորիք-զնացե՛ք, օ՞ն, Հնչեցրե՛ք:

Հնչում են փողերը և բմբուկները:

Էնորաբրոս—Ահա զլխարկն իմ:

Մենաս—Ազնի՛վ զորական, զնա՛նք իմ խուցը:

Դուրս են զնում:

Ա. Ր Ա. Ր Ե Ր Ը Ո Ր Դ

Ա. Պ Ա. Տ Կ Ե Ր

Մի դաշտավայր Սիրիայում:

Մանում է Վենտիդիոսը, հաղթական, Սիլիոսի նետ և ուրիշ նոռմեացիներ,
սպաներ և զինվորներ: Թակորոսի դիակը տանում են առաջից:

Վենտիդիոս—Այժըմ, նետաձիգ ո՞վ Պարթեաստան,

Եղա՛ր նետահար: Եվ հաճո բախտը

ինձ դարձընում է Մարկոս Կրասոսի

Մահվան վրիժառուն: Բերե՛ք մարմինը

Արքայի որդու բանակի առաջ:

Քո թակորոսը, ով գու Օրադես,

Հատուցում է այս Կրասոսի համար:

Սիլիոս—Քա՞զ Վենտիդիոս, քանի քո սուրը

Դեռևս տաք է Պարթեաց արյամբ,

Հետապնդիր դու փախչող Պարթեաց,

Խթանահարի՛ր դու Մարաստանը

Եվ Միջագետքը և ապաստաններն,

Ուր և փախչում են պարտվածները:

Անտոնիոսը, քո մեծ զորապետը,

Կրազմեցընի քեզ իր հաղթական

Շքակառքերում, և կղնի քո

Գլխին դափնեպսակ:

Վենտիդիոս—Օ՛, Սիլիոս, Սիլիոս, մի ստորադաս,

Նշի՛ր, կարող է մեծ գործ կատարել,

Զի իմացիր այս, ավելի լավ է

Այդ գործը չանել, քան մեր արարքով

Զափաղանց բարձր հոշակ ձեռք բերել,

Երբ չկա մարդն այն, որին մենք ահա
Սպասարկում ենք:
Թէ Անտոնիոսը և թէ Կեսարը
Հավեա շահել են իրենց սպաների
Միջոցով ավել, քան անձամբ իրենքը
Օրինակ, Սոսիոսը, նա որ Սիրիաբում
Իմ տեղն էր գրավում, նրա տեղակալն
Եղավ ջնորհազորիկ հոշակի արագ
Կոտակման համար, որ ձեռք էր բերում
Վայրկյանից վայրկյան: Ով պատերազմում
Շատ ավելի գործ է անում, քան թէ
Իր գորապեար, գառնում գորապեան
Իր գորապեախ, և փառքի սերը,
Առաքինությունն այս մի ուազմիկի,
Նա նախընտրում է իր կործանումը
Իր հաղթանակից, մի հաղթանակ, որ
Կսավերի իրեն: Ես կարող էի
Ավելին անել Մարկ Անտոնիոսին,
Բայց զա կարող է վշտացնել նրան,
Եվ նրա վշտում կխորածակվի իր՝
Վսիմ արարք:

Սիլիոս—Դու, Վինտիդիոս, ոնես այն՝ առանց
Որի մի զինվոր և նրա սուրբ
Հաղիվ կարող էն իրարից ջոկվել:
Դու պիտի զրե՞ս Մարկ Անտոնիոսին:

Վենտիդիոս—Կմատնանշեմ ևս խոնարհարար՝

Թէ ինչ ենք արել մենք իր անունով,
Այդ պատերազմի մոգական բառով,
Թէ ինչպես մենք իր դրոշակներով,
Իր լավ վճարված լեզուններով՝
Ուժասպառ արինք և զուրս բշկցինք
Ռազմական դաշտից Պարթևաստանի
Դեռ մինչեւ հիմա անծեծ այրուձին:

Սիլիոս—Ո՞ւր է նա այժմ:
Վենտիդիոս—Եպատակ ունի գնալու Աթենք,
Որտեղ մենք պիտի երևանք իրեն

Այն արագությամբ, որքան մեր բեռը,
Որ մենք կրում ենք, թույլ կտա անել:
Օ՞ն, գնա՛նք առաջ:

Դուս են զնում:

Բ. ՊԱՏԿԵՐ

Հոսմ: Մի ճախասենյակ Կեսարի տանը: Մտնում են Ագրիպպան
և Էնորաբրոսը՝ ճանդիպելով իրաւ:

Ագրիպպա—հ՞նչ, բաժանվեցի՞ն եղբայրներն արդյոք:
Էնորաբրոս—Նրանք վերջացրին իրենց գործերը

Պոմպեոսի հետ, նա մեկնեց արդեն,
Մյուս երեքը կնքում են այժըմ
Համաձայնություն, իսկ Օկտավիան
կաց է լինում, որ մեկնում է Հռոմից,
Կեսարը՝ տիտոր, իսկ Լեպիտոսը,
Ինչպես Մենասն է ատում, Պոմպեոսի
Խնջույքից ի վեր, կանաչախտ ունի:

Ագրիպպա—Ազնի՛վ Լեպիտոս:
Էնորաբրոս—Եվ շատ նրբինը: Օ՛, ինչքա՞ն է նա
Սիրում Կեսարին:

Ագրիպպա—Եվ ինչքա՞ն խորը նա և՛ պաշտում է
Մարկ Անտոնիոսին:

Էնորաբրոս—Կեսա՞րը, Մարդկանց նա Արամազդն է:
Ագրիպպա—Իսկ ուրեմն ի՞նչ է Մարկ Անտոնիոսը:

Դիքն Արամազդի:

Էնորաբրոս—հ՞նչ, դուք խոսում եք Կեսարի՞ն մասին:
Զկա նմանը:

Ագրիպպա—Օ՛, Անտոնիոս, օ՛, Արաբական
Հրաշք թոշում* դու:

Էնորաբրոս—Եթե ուզում եք գովել Կեսարը,

* Փյունիկ:

Ասացեք Կեսար և բավական է:
 Ազրիպպա—Եվ իսկապես նա ընկձեց երկուախն
 Բնտիր գովեստով:
 Էնորաբրոս—Բայց նա Կեսարին ավել է սիրում,
 Նաև սփրոամ է նաև Անտոնիոսին:
 Սրտեր, լեզուներ, թվեր, գովիճներ,
 Նաև երդիշներ և բանաստեղծներ
 Չեն կարող գոտաւ, խռոնի, հաշվարկել,
 Գրել ու երգել և տաղաշափել
 Իր սերը գեսի Մարկ Անտոնիոսը:
 Գալով Կեսարին՝ չորեցեք գետին,
 Չորեցեք գետին և հիացեք դուք:
 Ազրիպպա—Նա սեր է տածում գեղի նրկուսը:
 Էնորաբրոս—Թևերն ին նրանք նրա և ինքն էլ
 Նրանց բզեզը:

Փողեր ներսից:

Սա նշանակում է՝ դեսի ձիերը,
 Մնաս բարով դու, աղնի՛վ Ազրիպպա:
 Ազրիպպա—Բարի հաջողում, բաշարի՛ ուազմիկ,
 Եվ զնաս բարով:

Մտնում են Կեսարը: Անտոնիոսը, Լեպիտոսը և Օկտավիան:

Անտոնիոս—Չդանք, պարո՞ն, ավելի հեռում:
 Կեսար—Առնում եք ինձնից դուք մեծ մասն իմ
 Սեփական անձի, լավ վարվեցե՛ք դուք
 Իմ այն մասի հետ, որ նրա մեջն է:
 Քո՛ւյր, ապացուցիր, որ դու այնպիսի
 Մի կին ես, ինչպես իմ խորհուրդը քեզ
 Պատկերացրել է, ինչպես ամենից
 Մեծ երաշխիքը կգերազանցի
 Փորձովդ իրական: Օ՛, գերազնվական
 Մարկ Անտոնիոս, առաքինության
 Հուշաբձանը, որ դրվեց մեր միջև,

Իբրև մեր սիրո կրաշաղախը,
Պահելու այն պինդ, մի՛ թուլ տուր դառնա
Մի մուրճ ամրոցը սասանեցնելու,
Քանդի ավելի լավ էր, որ առանց
Այս միջնորդի մենք իրար սիրեինք,
Եթե մեր կողմից չպիտի լիներ
Այս՝ գուրգուրանքի մեր վեհ առարկան։

Անտոնիոս—Մի վշտացնե՛ք ինձ ձեր կասկածով։
Կեսար—Արդեն ասացի։
Անտոնիոս—Դուք չեք գտնելու, թեև դրանում
Մանրակրկիտ եք, ամենափոքը
Մի պատճառ անգամ, ինչից թվում է,
Դուք վախենում եք։ Թո՛ղ աստվածները
Զեղ պաշտպան կանգնեն, և թող արտերը
Հոռմեացոց ծառայեցնեն
Զեր նպատակին։ Այստեղ իրարից
Պետք է բաժանվենք։

Կեսար—Գնաս դու բարով, թանկագի՛ն իմ քույր,
Գնաս դու բարով, և թո՛ղ տարերքը
Լինեն բարի քեզ, պահեն քո ոգին
Անվրդով, ուրախ։ Գնա՞ս դու բարով։

Օկտավիա—Իմ ազնիվ եղբա՛յր։
Անտոնիոս—Ապրիլն է բազմել նրա աշքերում,
Սիրո գարունն է, սրանք անձրկի
Տարափներն են, որ բերում են գարուն։
Եղե՛ք դուք ուրախ։

Օկտավիա—Պարո՛ն, հսկեցե՛ք լավ իմ ամուսնու
Տունը և նաև...։

Կեսար—Եվ ի՞նչ, Օկտավիա։
Օկտավիա—Ականջիդ կասեմ։
Անտոնիոս—Նրա լեզուն սրտին չի հնազանդում,
Ո՛չ էլ կարող է սիրու հաղորդել
Լեզով ուզածը, նման կարապի
Աղվափեսուրին, որ կանգ է առնում
Մակընթաց ծովի ալիքի վրա
Եվ ոչ մի կողմը երբեք չի թեքվում։

Էնորարքոս—(Մեկուսի Ազրիպպային) — Արքուք Կեսարը սիմոնի լաց լինի՛:

Ազրիպպա—(Մեկուսի Էնորարքոսին) — Գեմքին մի ամպ կատ:

Էնորարքոս—(Մեկուսի Ազրիպպային) —

Ավելի ժաման՝ նթե ձի լինիր,

Սակայն նա մարդ է¹⁶:

Ազրիպպա—(Մեկուսի Էնորարքոսին) —

Ո՛, Էնորքարքո՞ս, երբ Անտոնիոսը

Հովիտու Կեսարին սպանված զատվ՛:

Նա աղաղակեց մոնշալու պիս

Եվ լաց հղավ, մեր գոտավ Բրուտոսին:

Սպանված՝ Փիլիպպում:

Էնորարքոս—(Մեկուսի Ազրիպպային) —

Այդ տարին, իրավ, նու տառապում էր:

Մի չար հարրութիւնը Ինչ որ կամովին

Նա խորատկել էր, տղրում էր, կոծում,

Եվ հավատաբռվ, ևս էլ լաց հղաւ:

Կեսար—Ո՛չ, քաղցր Օկտավիա, դու դիռ ինձանից

Լուրեր կստանաս, և ժամանակը

Ավելի արագ շտիւթ անցնի

Քո ճամափին տածած իմ խորհուրդները:

Անտոնիոս—Վերջ տվեք, պարո՞ն, ևս կմարտնչեմ

Զեղ հետ իմ ակրու ուժով: Նայեցիր,

Զեղ համբուրում իմ և թողնում մմ, որ

Դնաբ: Հանձնում իմ ձեզ աստվածներին:

Կեսար—Յտեսություն ձեզ, նդի՛ք երջանիկ:

Լեպիտոս—Բոլոր աստղերը թող լուսավորեն

Քո ճանապարհու:

Կեսար—Գնա՞ս դու բարով, գնա՞ս դու բարով:

(Համբուրում է Օկտավիային):

Անտոնիոս—Մնացե՞ք բարով:

Փողեր ներսից: Դուրս են զնում:

¹⁶ Հավատում էին, որ երբ ձիու աշքերի մեջտեղում սև բիծ էր լինում, չարագուշակ:

Ալեքսանդրիա: Մի սենյակ պալատում:
Մտնում են Կիեվացարան, Շարմիանք, Երազը և Ալեքսանը:

Կիեվացարա—Ռ' ւր է այն տղան:
Ալեքսան—Կիսով աարսափած՝ վախենում է գալ:
Կիեվացարա—Օ՞ն, արի՛, պարո՞ն:
Ալեքսան—Վեհափառ տիկին, Հերովդիսն, արքան:

Հրեաստանի, չի համաձայնվում
Նայել ձեզ վրա, բացի երբ որ դուք
Կինեք բարձր տրամադրությամբ:

Կիեվացարա—Այդ Հերովդեսի գլուխը պիտի
Ունենամ ես, բայց փնչպես, քանի որ
Անտոնիոսը մեկնել է այժմ,
Որի միջոցով ես կարող եմ
Հրամայել այդ: Արի՛, մո՛տ արի:

Պատգամարեց—Վեհափառ տիկին...
Կիեվացարա—Արդյոք դու տեսա՞ր Օկտավիային:
Պատգամարեց—Այո՛, ես տեսա, ահե՛ղ թագուհի:
Կիեվացարա—Ռ' ւր տեսար, ասա՛:
Պատգամարեց—Ճռոմոամ, տիկի՞ն, տեսա դիմացից,
Նա գտնվում էր մեջտեղը եղբոր
Եվ Անտոնիոսի:

Կիեվացարա—Բարձրահասա՞կ է այնքան, ինչքան ես¹⁷:
Պատգամարեց—Ռէ, չէ, տիրուհի:
Կիեվացարա—Լսեցի՞ր արդյոք նրա խոսելը,
Ի՞նչպես է ձայնը, արդյոք սո՞ւր, թե մեղմ:
Պատգամարեց—Լսեցի, տիկին, և ձայնը մեղմ է:
Կիեվացարա—Դա այնքան լավ չէ, Անտոնիոսին
Երկար ժամանակ չի կարող դուր գալ:
Շարմիան—Դուր գա՛, օ՛, իսիս, անկարելի է:
Կիեվացարա—Այդպես եմ կարծում, Շարմիա՞ն, ես էլ,
Տաղտկալի ձայնով, գաճան հասակով,

17 Սա մի ակնարկություն է Ելիքաբեթ թագուհու Սըր Ջեյմս Մելվիլին՝ Սկովտիություն մասին արած հարցումներին:

Ի՞նձ վեհապետուն կարող է լինել
Նրա քայլվածքում, հիշի՛ր, եթե դու
Երբեք նայել մս մի վեհության

Պատգամարեր—Նա սոգուկում է, նրա շարժումը

Եվ նրա կանգը միենալոյն բանն են,
Նա ցույց է տալիս ավելի մարմին,
Քան մի կյանք, արձան, քան մի շնչավոր

Կլեոպատրա—Դա ասո՞՞ւց բան է:

Պատգամարեր—Այլապես՝ ևս չեմ մի կարող դիտող:

Շարմիան—Չե՞ կարող երեք մարդ Եղիպատում

Դիտել ավելի նրանից լավը:

Կլեոպատրա—Ես տեսնում եմ, որ նա շատ հմտում է,

Եվ Օկտավիան գեռ ոչինչ չունի:

Այս աղան ունի սուր դատողություն

Շարմիան—Օ՛, Հրաշալի՛:

Կլեոպատրա—Գուշակի՛ր, քանի՛ տարեկան է նա:

Պատգամարեր—Նա մի այրի էր:

Կլեոպատրա—Այրի՛: Շարմիան, մաֆկ առւր սրան:

Պատգամարեր—Եվ ես կարծում եմ, թե երկառում է:

Կլեոպատրա—Հիշո՞ւմ ես զեմքը — Ֆրկա՛ր, թե կլոր:

Պատգամարեր—Կլոր է, նույնիսկ տփեղին համնող:

Կլեոպատրա—Եվ մեծավ մասամբ այդպիսիները

Տխմար կլինեն: Մազը ի՞նչ գույն է:

Պատգամարեր—Թուխ է, տիրուհի, սակայն ճակատը

Այնքան ցած, ինչքան ինչքը կուղենար:

Կլեոպատրա—Ահա քեզ ոսկի: Եվ դու շպետք է

Ոխակալ լինես իմ այն առաջին

Խստության համար: Գործով քեզ նորից

Ես պիտի դրկեմ, դու գործի համար

Շատ հարմար մարդ ես, զնա՛, պատրաստվի՛ր,

Մեր նամակները պատրաստ են արդեն:

Պատգամարերը գեռամ է:

Շարմիան—Շատ ճարպիկ մարդ է:

Կլեոպատրա—Այո՛, այդպես է, շատ եմ զղզում ես,

Որ նրան այդպես նեղություն տվի:

Եվ թվում է ինձ, այդ արարածը,

Հստ սրա բերած տեղեկանքներին,

Մի վսիմ բան չէ:

Չարմիան—Ոչի՞նչ, տիրուհի՛:

Կլեոպատրա—Մարդը տեսել է վեհափառություն,

Պետք է իմանա:

Չարմիան—Մարդը տեսել է վեհափառություն...

Իսիզ պահի, որ լինի այլ կերպ,

Երբ նա եղել է Ֆրկար ժամանակ

Զեր ծառայության:

Կլեոպատրա—Ես գեռ մի բան էլ ունեմ հարցնելու

Նրան, Չարմիան, բայց հարցը դա չէ,

Դու կրերես ինձ նրան այնտեղ, ուր

Նամակ եմ գրում: Թերևս ամեն ինչ

Շատ բավ ընթանա:

Չարմիան—Վստահեցնում եմ ձեզ, ի՞մ տիրուհի:

Դուքս են գնում:

Դ. Պ Ա Տ Կ Ե Ր

Արենք: Մի սենյակ Անտոնիոսի տանը:
Մտնում են Անտոնիոսը և Օկտավիան:

Անտոնիոս—Ո՛չ, ո՛չ, Օկտավիա, ոչ միայն այդ է,—

Եվ դա կլիներ ներելի մի բան,

Այդ և բյուրավոր ուրիշ շատ բաներ,

Բայց նա մղել է նոր պատերազմներ

Պոմպեի ընդդեմ: Եվ նա արել է

Իր կտակը և կարդացել է այն

Հրապարակով, նա կարճ է խոսել

Նաև իմ մասին, անհրաժեշտորեն

Երբ նա չէր կարող չնվիրել ինձ

Պատվավոր մի խոսք, նա այդ արել է

Սառը, հիվանդուտ, շատ նեղ շափկրով,
Երբ որ արվել է նրան լավագույն
Ակնարկությունը ներբողերու ինձ,
Նա շի վերցրել ակնարկությունն այդ,
Իսկ թէ վերցրել է, միայն վերցրել է
Ատամի ծայրով:

Օկտավիա—Օ՛, իմ բարի տեր, մի՛ հավատա դու,
Ինչ որ ատում են, գամ եթե հարկ է
Հավատք ընծայել, դու մի վշտանա:
Եթե պատահի այս պառակտումը,
Զի լինի մի կին ավելի դժբախտ,
Որ կենա մեջտեղ և աղոթք անի
Երկուաի համար Եվ աստվածները
Ինձ վստահորեն պիտի ծանակին,
Երբ ես աղոթիմ. «Օրինեցե՛մ տիրոջս
Եվ իմ ամուսնուն»: Չեզալ համարեմ
Իմ այդ աղոթքը և աղաղակեմ
Նույնքան բարձրագոշ. «Օրինեցե՛մ եղորու»:
Շահի ամուսինս, շահի եղրայրըս,
Եվ մի աղոթքը չնշի մյուսը,
Զկա մի միջին ճամփա այս երկու
Ծայրերի միջև:

Անտոնիոս—Ազի՛վ Օկտավիա, թո՛գ քո լավագույն
Սերը ձգի քեզ գեպի այն կետը,
Որ որոնում է լավագույնն իրրե
Պահպանելու այն: Եթե ես կորցնեմ
Իմ պատիվը, ինձ կորցրած կլինեմ,
Ավելի լավ էր ես չլինեի
Քոնը, քան այսպես լինեի քոնը
Կոտրած ճյուղերով: Սակայն, ինչպես որ
Դու ինքդ խնդրեցիր՝ եղիր դու միջնորդ
Երկուսի միջև, մինչ այդ, տիրուհի,
Ես կպատրաստվեմ մի պատերազմի,
Որ քո եղբորը խավարեցընի:
Շո՛ւտ, աճապարի՛ր, այսպիսով քիչ են
Քո բաղձաները:

Յկտավիա—Գոհ եմ քեզանից, իմ տե՛ր ամուսին:

Հզոր Արամագդն հաշտարար դարձնի

Ինձ տկարագույն:

Եվ պատերազմներ երկյակի միջև

Պիտք է լինեն այն, որ այս աշխարհը

Պիտի հերձուվի, ապանված մարդիկ

Պիտի ագուցեն ահեղ ճեղքվածքը:

Անտոնիոս—Թէ հայտնի լինի քեզ, թէ որտեղից

Մագոամ առավ այս, դարձրո՛ւ կողմն այդ քո

Տհաճությունը, քանզի չեն կարող

Մեր հանցանքները այնքան հավասար

Լինել, որքան քո սերը կարող է

Հավասարապես դրանցից հուզվել:

Պատրաստություն տե՛ս քո մեկնման համար,

Դու ինքդ ընտրի՛ր քո ուղեկիցները,

Եվ հրամայի՛ր ինչ ծախք քո սիրուը

Ուզում է անհլ:

Դուս են զնում:

Ե. Պ Ա Տ Կ Ե Ր

Արենի: Մի ուրիշ սենյակ Անտոնիոսի տանը:
Մանում են կնորարբար և երուր իրար հանդիպելով:

Էնորարբոս—Ի՞նչ կա, բարեկամ էրոս:

Էրոս—Տարօրինակ լուրեր են եկել, պարոն:

Էնորարբոս—Ի՞նչ լուրեր, մարդ:

Էրոս—Կեսարը և կեպիտոսը Պոմպեոսի դեմ պատերազմներ են մդել:

Էնորարբոս—Սա հին լուր է, ի՞նչ է արդյունքը:

Էրոս—Կեսարը, գործածելով կեպիտոսին Պոմպեոսի դեմ մդված պատերազմներում, այժմ ուրանում է նրան հավասարությունը, նրան չի թողնում մասնակից լինել ճակատամարտի փառքին և, կանգ չառնելով այստեղ, նրան ամբաստանում է, որ նա նախապես Պոմպեոսին նամակներ է գրել և իր սեփական ամբաստա-

Յությամբ, ձերքափակնել է նրանու Այսպիս, խեղճ հռապետը բան-
տուամն է, մինչև մահն ընդլայնի նրա բանարք
Էնորացրոս—Ռութեմն, ո՞վ աշխարհ, այժմ դու ունես
Մի զույգ կղակներ և ոչ ավելին,
Եվ եթե նետես նրանց ինչ կեր, որ
Դու ունես, նրանք կիշքրին իրարւ
Անտոնիոսոն ո՞ւր է:
Էրոս—Նա ման է զաղիս պարտեզում — այսպիս,
Ռութ Հրում է առաջը պատկած
Հարօփի շատողիկին և աղաղակում,
«Հիմա'ր Լեպիտաս», և սպառնում է
Կոկորդը խեղզել իր այն սպայի,
Որ սպանել է խեղճ Պոմպեոսին:
Էնորացրոս—Միր մեծ տորմիզը կազմ ու պատրաստ է:
Էրոս—Բնդդեմ իտալիո, ընդդեմ Կիսարի,
Ավելին՝ ընդդեմ Դոմիտիոսի:
Իմ տերն ուզում է քեզ Հիմա տեսնել,
Կարող էի տալ փմ զուրը Հետո:
Էնորացրոս—Պիտր է լինի մի անկարենոր բան,
Բայց չոգ չէ, տա'ր ինձ Անտոնիոսին:
Էրոս—Օ'ն, արի՛, պարո՛ն:

Զ .Պ Ա Տ Կ Ե Ր

Համար: Մի սենյակ Կեսարի տանը: Մտնում են Կեսարը, Ագրիպան և Մեկենասը:

Կեսար—Արհամարհելով Հռոմն արել է
Այս բոլոր զործը, և գեռ ավելին՝
Ալեքսանդրիայում — ահա այս ձեռով —
Հրապարակում, Հանրության առաջ,
Արծաթով շինված բարձունքի վրա
Դրված ոսկեղօծ նստարաններին
Բազմել են ինքը և Կլեոպատրան,
իսկ Կեսարիոնը, որին կոչում են

իմ հորը որդին¹⁸, նստել է ոտին
Եվ բոլոր շարքը, ապօրածինների,
Որոնց ծնել է տոփանքը նրանց:
Կլեոպատրային նվեր է տվել
Նա Եգիպտոսը, արել բացարձակ
Թագուհին Սուրիո և Կիպրոս կղզու,
Նաև Լյուդիայի:

Մեկենաս—Եվ այս բաները հանրության առաջ:
Կեսար—Ընդհանուր ցույցի հրապարակում,

Ուր կատարում են նրանք մաղթանքներ,
Եր զավակներին հոչակել է նա
Արքայից արքայք, մեծ Մարաստանը,
Պարթևաստանը և Հայաստանը
Նվեր է տվել նա Ալեքսանդրին,
Իսկ Պտղոմեային փոխանցել է նա
Սուրիան, Կիլիկիան, նաև Փյունիկեն:
Եվ Կլեոպատրան, այդ օրն, հագնված
Իսիսի նման, ցույց տվեց իրեն:
Ասում են՝ առաջ էլ այդ զգեստով
Տվել է հաճախ ունկնդրություն:

Մեկենաս—Պետք է հաղորդել Հռոմ բոլորն այս:
Ազրիապա—Որ արդեն զգված հոխորտանքից նրաւ,

Ետ պիտի առնի բարի կարծիքը
Նրա վրայից:

Կեսար—Ժողովուրդն արդին իրազեկ է դրան,
Նա ստացել է այժմ իր բոլոր
Մեղադրանքները:

Ազրիապա—Ո՞ւմ է մեղադրում:

Կեսար—Կեսարին, այս՝ այն պատրվակով,
Որ Սիկիլիայում Սեբստոս Պոմպեոսին՝
Ես կողովտել եմ և շեմ տվել նրան
Կղզու բաժինը, և նա ասում է,
Որ փոխ է տվել ինձ մի քանի նավ՝
Զեմ վերադարձել, նաև, վերջապես

18 Այս դեպքը կա Պլուտարքոսի մեջ:

Նա զայրացիկ է, որ Անդիսասը
Ետապետական իր բարձր գիրքից
Վորնոված է և ասքա այն, որ,
Մենք վար մնք դրել իր հկանութը:

Ազրիապատ—Սրան որեւէ չ տալ պատասխան, պարո՞ն:
Կեսար—Ալոքն սորված է մատրանդակը
Մեմբռել է արդին: Ասել եմ նրան,
Որ Անդիսասը շափազանց անգութ
Մի մարդ էր դարձել, Հեղինակավոր
Իր բարձր գիրքը շարմ էր գործ գնում:
Եվ արժանի էր իր փոփոխության,
Քանզի ինչ որ ես նվաճել էի,
Ընորհեցի ես նրան բաժինն իր,
Եվ հետեւրար՝ իր Հայաստանից
Եվ իր նվաճած այլ նրկներից՝
Ես պահանջում եմ ճիշտ միենունը:

Մեկենաս—Դրան Անտոնիոսն երրեք չի գիշի:
Կեսար—Սրանում էլ մենք չենք գիշի նրան:

Մտնում է Օկտավիան՝ իր շնամբով:

Օկտավիա—Ողջո՞ւն, իմ Կեսա՛ր, ողջուն և իմ տե՛ր,
Ողջո՞ւն, ամենին արիլի Կեսա՛ր:
Կեսար—Եբբելից քեզ պիտի կոչեի՝
Լրվա՞ծ ու անտե՛ր:
Օկտավիա—Դու այդ չես արել, պատճառ էլ չունես:
Կեսար—Էնչո՞ւ դու եկար ալգովես թաքնաբար.
Դու չեկար նման Կեսարի բրոջ:
Կինն Անտոնիոսի պետք է ունենար
Մի բանակ, որպես նախակարապետ,
Եվ նժույգների վրնջունները
Պիտ ավետեին իր մերձենալը
Ավելի առաջ, քան երեսումն իր:
Ճամփի ժառերը պիտի լինեին
Սանրաբեռնոված բաղում մարդկանցով,
Սպասողները պիտ նվազեին

Կարոտ այն բանին, որ չէին տեսնում,
Վերջապես, փոշին քո հոծ գնդերի
Կողմից բարձրացված, վեր պիտի ելներ
Մինչև երկնքի կապույտ կտուրը:
Բայց դու եկել ես Հռոմ, որպես մի
Շուկայի աղջիկ, և խափանեցիր
Մեր սիրո ցուցը, որ եթե մնա
Առանց ցուց տալու, հաճախ մնում է
Եվ առանց սիրո, և մենք պետք է, որ
Քեզ հանդիպեինք ծովով, ցամաքով
Եվ յուրաքանչյուր օթևանին մենք
Մատուցանեինք աճող ողջույններ:

Օկտավիա—Օ՛, իմ բարի՛ տեր, այս ձեռվ գալու
Համար ես չէի հարկադրանքի տակ,
Այլ եկա ես իմ ազատ կամքովը:
Մարկ Անտոնիոսը լսելով, որ դուք
Տեսնում եք ուազմի պատրաստություններ,
Այդ մասին հարսնեց և իմ վշտացած
Ականջին, որից ես աղերսեցի
Իմ վերադարձի թույլտվությունը:

Կեսար—Որը շնորհեց, քանզի մի արգելք
Ես դու իր և իր տռիանքի միջև:

Օկտավիա—Ալդաս մի՛ ասեք:
Կեսար—Ես ունեմ աշքեր նրան հետևող,
Լուրերը վարքի իր հասնում են ինձ
Հողմի թևերով:
Այժմ ո՞ւր է նա:

Օկտավիա—Աթենքում, ի՛մ տեր:
Կեսար—Ո՛չ, իմ դառնորեն անիրավված քո՛ւրը,
Կլեոպատրան նրան կանչել է
Նշանով իր մոտ: Իր կայսրությունը
Նա լքանել է հասարակ բողի,
Եվ այժմ նրանք հանում են ուազմի՝
Թագավորները արար աշխարհի:
Նա հավաքել է շուրջը Բոքոսին,
Արքա Լուբիայի, Արքելառուին

Կառպարովիկիայի, Թիրակիւայի արքա.

Աղալլաստին և Արարիացի

Արքա Մադրոսին, նաև Պոնտոսի

Արքացին, նաև Հրեաստանի

Արքա Հերազդին, և Կոմագենի

Արքա Միհրդատին, և Պողկմոնին,

Ել Անինդասին, և Մարատուանի,

Ել կիւսանին թագավորներին,

Ել մի ամենի մեծ շանկ իշխանաց:

Օկտավիա—Ի՞նչ դժբախտ եմ ես, որ բաժանել եմ՝

Սիրտս միջև երկու բարեկամների,

Որ հասդնում են իրար վնասները

Կեսար—Դու քարի եկար, քո նամակները

Ես կեցնել տվյալ մեր ընդհարումը,

Մինչև տեսնեմինք թե ինչը առ էիր

Սուսու առաջնորդված և թե մենք փնչքան

Էլնոք զանցառու, անհոգ վտանգում:

Սիրտգ ուրա՛խ պահիր, գու մի վրդովմիր:

Այս ժամանակից, որ բարդում է այս

Ծանրը հարցերը զո՞ւ կյանքիդ վրա,

Թող կանխորոշված բաները դիմեն.

Անարցունք՝ դեպի ճակատագիրը:

Բարի եկար Հռոմ, չկա ավելի

Բանկը ինձ համար: Անիրավված ես

Դու վեր ավելի, քան միաքն է համում:

Ել աստվածները, քեզ արդարություն

Բերելու համար, գարձըրել են մեզ

Միջնորդներ և նրանց, որ սիրում են քեզ:

Բարձրագույն հանգիստ և բարի գալուստ

Մեր կողմից հավե՛տ:

Ազրիպատ—Դուք բարի եկար, անդի՛ն տիրուհի:

Մեկենաս—Դուք բարի եկար, սիրելի՛ տիկին:

Յուրաքանչյուր սիրա Հռոմում սիրում,

Կարեկցում է քեզ, միայն խարդախող

Անտոնիոսը, շափականցելով

Զզվելի վարքն իր, ուրանում է ձեզ,

Իշխանությունն իր հզոր տալիս է
Մի պոռնիկ կնոջ, այդ պոռնիկ կինը
Իշխանությունն այդ գրգռում է մեր դեմ:

Օկտավիա—Այդպէ՞ս է, պարո՞ն:
Կեսար—Ամենատույգ: Քո՞ւյր, քարի՛ նկար:
Եվ, ինդրում եմ քեզ, թանկագին իմ քույր,
Ցույց տո՞ւր համբերանք:

Դուրս են զնում:

Է. Պ. Տ Կ Ե Ր

Անտոնիոսի բանակատեղը, Ակախոմի նրվաճաճի մոտ:
Մտնում են Կիեոպատրան և Էնորագրոսը:

Կիեոպատրա—Մի տարակուսի՛ր, որ ես քեզանից

Տեղը կհանեմ:

Էնորագրոս—Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ:

Կիեոպատրա—Դու դեմ ես խոսել իմ այս ուզմերի

Մեջը լինելու և ասել ես, որ

Բնավ պատշաճ է:

Էնորագրոս—Մի՞թե պատշաճ է, մի՞թե պատշաճ է:

Կիեոպատրա—Եթե չի եղել հայտարարություն

Մեր դեմ, ինչո՞ւ մենք լինենք անձամբ:

Էնորագրոս—(Մեկուսի) —Ես կարող էի տալ մի պատասխան—

Եթե մենք գործի զինենք միասին

Զին ու զամբիկը, ձին պիտի լիներ

Պարզապես կորած և զամբիկները

Պիտի կրեին զինվորն ու իր ձին:

Կիեոպատրա—Ի՞նչ ասացիք դուք:

Էնորագրոս—Ասում եմ, որ քո ներկայությունը

Աշխարհականի Մարկ Անտոնիոսին,

Կկորզի սրտից, ուղեղից, նաև

Ժամանակից, ինչ որ նա չի կարող

Կորստի մատնել: Նրան արդեն իսկ

Ջրպարտում են իբր մի թեթևութիւն,

Ասոամ ին Հոռմում, որ Փռախնոսը,
 Մի ներքինի, և քո աղջիկները
 Ղեկավաբուժ մն այս պատերազմ¹⁹։
 Կլեոպատրա—Հոռմն ավերվի, և նեխովին բոլոր
 Այդ լեզուները՝ տրոնք խստում ին
 Մեր գեմ։ Մինք տմենք մի զինվորական
 Կիբը պատերազմում և, լինելով իմ
 Տելության պետք, պիտի երեամ
 Երբեք աղամարդ այդ պատերազմում։
 Մի հակաճառիր, չեմ մնա թիկունքում։
 Էնորքորոս—Ես վերջացրի Գալիս է կայսրը

Մասում են Անտոնիոսը և Կանիդիոսը։

Անտոնիոս—Տարօրինակ չէ՞, Կանի՛դիոս, որ
 Բրունդուլիումից և Տարհնտումից
 Կարողանար նա այսքան սրարշավ
 Կորել Հոնիական։ ու գրավիր Տորինը։
 Գու այս լսե՞լ ես, իմ թանկազինը։
 Կլեոպատրա—Արագությունը երրեք չի եղել
 Այնքան հիացման առարկա, որքան
 Սուլյերի համար։
 Անտոնիոս—Մի բավ կշտամբանք, որ կհարժարվեր
 Լավագույն մարդուն՝ ծաղրելու համար
 Դանդաղությունը։ Կանիդիոս, մենք
 Նրա հետ ծովի վրա պիտ կովենք։
 Կլեոպատրա—Ծովի վրա՝, այլ կերպ կարելի՞ է։
 Կանիդիոս—Ինչո՞ւ իմ տերը այդպես է անում։
 Անտոնիոս—Նա գրգռում է մեզ այդպես անելու։
 Էնորքորոս—Ինչպես իմ տերը գրգռեց նրան
 Մենակոիմ։
 Կանիդիոս—Եվ վտանգելու հակատամարտը
 Փարսալիայում, որտեղ Կոսարը
 Մարտնչեց ընդդեմ Պոմպեոսի, բայց

¹⁹ Պլուտարքոսից։

Առաջարկներն այս, որ չեն ծառայում
Նրա օգտին, նա խստիվ մերժում է:
Դուք էլ նույնն արեք:

Ենորագրոս—Մեր նավերը լալ զինավորված չեն,
Մեր նավազները ջորեպաններ են,
Հնձվորներ, մարդիկ հավաքված բռնի
Ջորահավաքով, սակայն Կեսարի
Ռազմատորմիղում նրանք են, որոնք
Հաճախ կռվել են Պտմակոսի գեմ,
Նրանց նավերը գործում են շատ հեշտ,
Իսկ ձերերը՝ ծանր: Ամոթ չի լինի,
Եթե դուք մերժեք ծովի կռիվը՝
Լինելով սրատրաստ ցամաքի վրա:

Աճտոնիոս—Ո՛չ, ծովի վրա:

Ենորագրոս—Իմ մեծահարգ տեր, այդ կերպ կզոհիք
Դուք ձեր բացարձակ ուազմի տաղանդը,
Որ ոմեք անշուշտ ցամաքի վրա,
Տակնուվլա կանեք դուք ձեր բանակը,
Որ բաղկացած է մեծ մասամբ փորձված
Հետևակ գորքից, դուք թողնում եք ձեր
Հմտությունն հայտնի անգործադրված,
Եվ բոլորովին ամստես եք առնում
Այն ճանապարհը, որ ձեզ բերում է
Հաջողություն, դուք ձեզ հանձնում եք
Պարզապես բախտի ու դիպվածների՝
Փոխանակ հաստատ ապահովության:

Աճտոնիոս—Ես պիտի մղեմ ուազմ ծովի վրա:

Կիեռապարա—Ես ոմեմ վաթսուն առագաստանավ,

Կեսարը չունի դրանցից լավը:

Աճտոնիոս—Կրակի կտանք մեր այն նավերը,
Որոնք անպետք են և մնացորդով,
Լավ զինավորված, Ակտիոնի ծայրից
Մի լավ կծեծենք Կեսարին, հենց որ
Սոտենալ փորձի, եթե ձախողենք,
Այն ժամանակ կարող կլինենք
Նույն բանը անել ցամաքի վրա:

Մտնում է, մի պատգամարեւ:

Ի՞նչ լուր ևս փերել:

Պատգամարեւ—Տեր, լույս առավել է, զբահաված է, որ
Կեսարք արդին Տորինն առել է:

Անտոնիոս—Արագյուք ինքն անձամբ այնտեղ է այժմ,
Անկարելի է, և տարօրինակ,

Որ և զարքերը այնտեղ են հիմա:

Կամքիլիոս, մեր լիդեմններին
Թվով տասնեինն և տասը հազար

Հեծելազորին կհրամայիս

Ցամաքի վրա: Դեպի մեր նավը:

Հառաց, ի՞մ թհախ²⁰:

Մտնում է, մի զինվոր:

Ի՞նչոր—Ռ', գերազնիվ կայսր, ծովով մի՛ կավեր:

Մի լստահեք դուք փառած փայտերին:
Տարակուսո՞ւմ եք դուք այս խոհ սրբն

Եվ իմ գերքերին: Եղիպատացիներն
Ու Փյունիկները թող գնան սուզմեն,

Մենք սովորել ենք հաղթելու, գեցած
Ցամաքի վրա՝ կարվ մղելով

Ոտութիւնաց²¹:

Անտոնիոս—Լավ, լավ, հասացի՛ր:

Գուրս են զնում Անտոնիոսը, Կիոպատրան և Էնորաբրոսը:

Զինվոր—Հերակլես վկա, ևս կարծում եմ, որ
Իրավունք ունեմ:

Կանիդիոս—Ունես դու, զինվո՞ր, բայց իր ողջ գործը
Խելքով շի գնում, մեր առաջնորդը
Առաջնորդվում է և մենք դարձել մնք
Կանանց զինվորներ:

²⁰ Գործածված ծովի համար, ծովի աստվածուհի:

²¹ Պլատարքոսից:

Զինվոր—Զեր ձեռքի տակ են լեզեռնները,

Ողջ այրուձին, չէ՛, ցամաքի վրա:

Կանիդիոս—Մարկ Օկտավիոսին, Մարկ Յուստիոսին,

Պուբլիկոլային և Կելիոսին

Վերապահված է ծովի կոփլը,

Խսկ մեղ՝ ցամաքի:

Արագությունն այս Կեսարի վեր է

Ամեն հավատքից:

Զինվոր—Երբ Հռոմում էր նրա բանակը,

Այնպես բաժանված նա ուղարկեց դուրս,

Որ խարեց անգամ մեր լոտեսներին:

Կանիդիոս—Լսե՞լ ես, ո՞վ է տեղակալը նրա:

Զինվոր—Ասում են մի մարդ Տավրոս անունով:

Կանիդիոս—Ես ճանաչում եմ:

Մտեսմ է մի պատգամարեր:

Պատգամարեր—Կայսրը կանչում է Կանիդիոսին:

Կանիդիոս—Երկոմքի մեջ է մեր ժամանակը

Լուրերով, ամեն բոպեն ծնում է

Մի բանի հատ լուր:

Դուս են զնոս:

Ը. Պ Ա Տ Կ Ե Ր

Մի դաշտավայր Ակտիոնի մոտերեսում:

Մտեսմ են Կեսարը, Տավրոսը, սպաներ և ուիշեներ:

Կեսար—Տավրո՞ս:

Տավրոս—Տեր ի՞մ:

Կեսար—Յամաքի վրա մի տա դու հարված,

Պահի՛ր բանակը ամբողջ միասին:

Մարտ մի գրգռի՛ր, մինչև մեր գործը

Վերջացնենք ծովս, այս թղթում գրված

Հրահանգներից դենք մի՛ անցնիր,

Մեր բախտն է կախված այս խիզախումից:

Դուս են զնոս:

Գաղտավայրի մի ուժից մասը:
Մտնում են Անտոնիոսը և Էնոքարբոսը:

Անտոնիոս—Բլիփ այս կողմը տեհդավորենք մեր
Գնդերը վառես Կեսարի գործի,
Որպեսզի տեղից կարող կլինենք
Հաշվել նավերը, և առաջ դնանք
Բատ այդ մեր գրետաման:

Գուրս են զնում:

Գաղտավայրի մի այլ մասում: Մտնում է մի կողմից Կանիշիոսը՝ իր ցամաքային զորին ենու բայլերով, և մյուս կողմից Տավրոսը, Կեսարի լեյտենանտը, իր բանակով: Նրանց մտնելուց ներա լսվում է ծովալին՝ մարտի մի ձայն: Փաղեր: Մտնում է Էնոքարբոսը:

Էնոքարբոս—Ոչինչ, ա՛, ոչինչ չեմ կարող նայել
Ավելի երկար: «Անտոնիադը»²²,
Ծովակալի նավին այս եղիսկատական,
Վաթսուն նավերով, դեկը դարձնելով՝
Լքում, փախչում է: Ի տես այս գեղքին՝
Աչքերս ճոռթվեցին:

Մտնում է Ակարոսը:

Ակարոս—Ո՞ւ դուք, աստվածնե՞ր, և դուք, դիցու՞ի՞ք,
Եվ ամբողջական կաճառը նրանց:
Էնոքարբոս—Ինչի՞ց բխեց քո այս անձկությունը?
Ակարոս—Ամենախոշոր բեկորն աշխարհի
Կորած է, կորած խո՞ր տղիտությամբ,

22 Կլեոպատրայի նավի անունը:

Տարկնուալրա արինք մենք տերություննե՞ր,
 Եվ պերճ գալառներ:
 Էնոքարըս—Ի՞նչպես կլինի կովի վախճանը:
 Սկարըս—Մեր կողմն է նման նշված ժանտախտի²³,
 Ուր մահն է ստուգ:
 Եգիպտոսի այս ցոփեղ զամբիկը,
 Որին ընդգրկի բորոտությունը,
 Մարտի մեջտեղում, երբ պատերազմի
 Առավելությունը երևում էր,
 Մի զույգ երկվորյակ, իրար շատ նման,
 Եվ թերևս մերը ավելի մեծը,
 Նման մի կովի հոմիսի ամսին,
 Բոռից նեղացած, բարձրացնում է
 Առագաստները, խայտառակ փախչում:
 Էնոքարըս—Այդ ես ինքս տեսսա, և իմ աշքերը,
 Զղված այդ դեպքից, չկարողացան
 Տոկալ՝ տեսնելու ավելի դեպքեր:
 Սկարըս—Երբ Կեռպատրան դարձավ քամու կողմ,
 Մարկ Անտոնիոսը, զո՞ն աղնվական
 Նրա թուշանքին, որպես ցնորած
 Մի բադ, տւղեց իր ծովային թևը,
 Թողնելով մարտը գագաթնակետին,
 Լքեց ու փախավ նրա ետեից:
 Երբեք չեմ տեսել այսքան ամոթի
 Խայտառակ մի գործ:
 Եվ փորձառություն, առնականություն,
 Եվ պատիվ երբեք սրանից առաջ
 Արատավորել շէին ինքնիրենց:
 Էնոքարըս—Աւա՛ղ, օ՛, ավա՛ղ:

Մտնում է Կանիդիոս:

Կանիդիոս—Ծովի վրա մեր բախտն է շնչառապառ,
 Եվ ընկղմվում է ողբալիորեն:

²³ Ժանտախտով վարակվածների մահը ստուգ էր այն դեպքում, երբ հիվանդի մորթի տակ առաջանում էին խիստ հատկանշական ուսուցքներ և պայթում էին:

Թե մեր զորապետն աներ այն բանը,

Որին ծանոթ էր, շատ լավ կլիներու

Նա քր սեփական խայտառակալից

Փախուստով՝ տվեց մեղ օրինակրու

Էնորարուս—Օ՛, ա՞յդ հս տպում դու ասած լինել:

Քանի այդպես է, օ՛, քարի գիշերու

Կանիդիոս—Նրանք ճղեցին գեղ Պերեպոնես:

Սկարոս—Դյուրին է զնալ գետի այդ կողմը,

Այնտեղ կապահեմ գալիք գեպքերի:

Կանիդիոս—Կեսարին կտամ լեռեռնները

Եվ իմ այլուձին: Վեց թագավոր ինձ

Ցույց առին ճամփան անձնառավության:

Էնորարուս—Դեռ մհետեւմ ևս վիրավորված,

Եվ ընկած բախտին Մարկ Անտոնիոսի,

Թեև բամին իմ բանականության

Փշում է իմ դեմ:

Դուրս են գնում:

Ժ.Ա. Գ.Ա.Տ Կ Ե Ր

Ավեխանդրիա: Մի սենյակ պալատում:

Մտնում են Անտոնիոսը և նետեղները:

Անտոնիոս—Լսեցի՛ք, հողը հրամայում է

Ինձ՝ է՛լ չկոխեմ վրան, զգում է

Ամոթ՝ կրելու ինձ փր կրծքի վրա:

Օ՛, բարեկամնե՛ր, մոտ եկեք, եկե՛ք,

Ես այնքան եմ ուշ մնացել աշխարհում,

Որ ես կորցրել եմ հավետ իմ ճամփան:

Ես ունեմ մի նավ՝ ոսկով բեռնված,

Վերցրե՛ք այս նավը, բաժանեցի՛ք այն,

Եվ փախուստ տվեք և Կեսարի հետ

Կնքեցի՛ք համետ մի խաղաղություն:

Հետեղներ—Մենք փախուստ տա՛նք, ո՛չ:

Անտոնիոս—Ես ինքս վախել եմ ու դաս եմ տվել
Եվ վախկոտներին՝ խույս տալու և ցուց
Տալու թիկունքը: Օ՛, բարեկամներ,
Եւեք գնացեք: Ես ոլոշել եմ
Թռնել մի ընթացք, որ Կարիք չունի
Չեզ, գնացեք, իմ գանձու գտնվում է
Նավահանգստում, վերցրեցե՞ք այն, օ՛,
Ես հետևեցի այն բանին, որին
Կարմրում եմ նայել, նույնիսկ մաղերն իմ
Ապստամբում են, զի ճերմակները
Հանդիմանրում են խիզախությունը
Թուխ մաղերի, իսկ արանք էլ նրանց
Հանդիմանրում են հիմարությունը
Եվ վառությունը: Օ՛, բարեկամներ,
Գնացե՞ք, և դուք կստանաք ինձնից
Նամակներ՝ գրված բարեկամների,
Որոնք կհարթեն ձեր ճանապարհը:
Եվ խնդրում եմ ձեզ, մի՛ նայեք տխուր,
Եվ ո՛չ էլ տվեք պֆկամ պատասխան,
Վերցրե՞ք խորհուրդը, որ հայտնում է ձեզ
Իմ վիճակն անհույս, լքեցե՞ք նրան,
Որ ինքն է լքում իրեն: Դեպի ծո՛վ:
Ես այնպես կանեմ, որ դուք տիրանաք
Նավին և գանձին: Ես ձեզ խնդրում եմ,
Թողե՞ք ինձ մի քիշ, այժմ ես եմ, որ
Չեզ աղաշում եմ, խնդրեմ, թողե՞ք ինձ,
Քանզի, իսկապես, կորցրել եմ դեկը,
Ուստի խնդրում եմ:
Կարճ ժամանակում ես ձեզ կտեսնեմ:

Նստում է:

Մտնում են էրոսը և Կենպատրան՝ Շարմիանի և Խրասի առաջնորդությամբ:

Էրոս—Ազնի՛վ տիրու՞հի, մխիթարեցե՞ք
Նրան, ա՞հ, նրա՞ն:

Երաս—Միսիթարեցե՛ք, անդի՛ն թագուհին

Շարմիան—Միսիթարեցե՛ք, ի՞նչ կա անհլու

Սրբանից բացին

Կլեոպատրա—Թաղե՛ք, որ ճառակմ:

Օ՛, Հո՛ւնո, Հո՛ւնո

Անտոնիոս—Ո՛վ ս' և ս' և ս' և ս' շ'

Էրոս—Այստեղ նայե՛ք, տե՛ր:

Անտոնիոս—Օ՛, ամո՞թ, ամո՞թ...

Շարմիան—Անդին տիրուհի'...

Երաս—Տիկին, օ՛, բարի, բարի կայսրուհի'...

Էրոս—Մինյոր, օ՛ սինյոր...

Անտոնիոս—Այո՛, տե՛ր, այո՛: Նա, Փիլիպպիում՝

Պահեց իր սուրը պարողի նման,

Մինչ ես խփեցի խորշումակալած,

Վախտ կասիոպիին, և ե՛ս գի, որ

Վերջ ավել կյանքին խոլ թրուառուի,

Նա կովսամ էր լոկ փոխանորդներով,

Չունիր ոչ մի փորձ ուազմի զիտոթյան...

Իսկ այժմ: Զիտսենք:

Կլեոպատրա—Կողքին կանդնեցիք:

Էրոս—Թագուհին, տե՛ր իմ, թագուհին, տե՛ր իմ:

Երաս—Տիկին, զնա՛ նրան, խոսի՛ր նրա հետ:

Ամոթը նրան մոռացրել է,

Որ ինք դինվոր է:

Կլեոպատրա—Օ՛, ինձ օգնեցե՛ք:

Էրոս—Շատ աղնիվ ի՛մ տեր, ոտի ելե՛ք դուք,

Թագուհին ահա ձեզ մոտենում է,

Գլուխը թեքված, կրոնի մահը

Նրան, եթե դուք չաշակցեք նրան

Չեր սփոփանքով:

Անտոնիոս—Անիրավեցի ես իմ պատիվը,

Օ՛, ամոթալի, անարդ ընկրկո՞ւմ:

Էրոս—Մինյոր, թագուհին...

Անտոնիոս—Ո՛ւր ես ինձ տարել, ո՞վ Եղիպտուհի,

Տես, թե ես ինչպես մի կողմ եմ քաշում

Իմ ամոթանքը քո այդ աշքերից,

Նայելով ետե — ինչ որ թողել եմ՝

Խորտակված է խոր անպատվության մեջ:

Կիեռապատրա—Օ՛, տե՛ր իմ, տե՛ր իմ,

Ների՛ր, ների՛ր իմ վախկոտ նավերին,

Քանզի հազիվ թե ես կարծում էի,

Որ իմ ետևից դու պիտի գայիր:

Անտոնիոս—Ո՛վ Եգիպտոսի, լավ ես իմանում

Դու, որ իմ սիրոք կապված էր լարով

Չո զեկին և դու պիտի քաշ տայիր

Ինձ քո ետևից, քաշ ծանոթ էիր

Չո իշխանության իմ հոգու վրա,

Եվ որ նշանը քո մեկ կարող էր

Հնազանդեցընել ինձ աստվածներին:

Կիեռապատրա—Տե՛ր իմ, ինձ ների՛ր:

Անտոնիոս—Այժմ ես պետք է ուղարկեմ խոնարհ:

Համաձայնության առաջարկներ այս

Երիտասարդին, լինել հնարամիտ,

Փախոստ տալ, նենդել և օգուագործել

Ցածողիության ճարտարաբությունը,

Ես, որ աշխարհի կես գանգվածի հետ,

Հստ իմ հաճույքի խաղ էի անում՝

Եինելով քախտեր և կործանելով:

Դու քաշ գիտեիր, թե ինչքան ես դու

Իմ հաղթակալը և որ իմ սուրը,

Ուժասպառ սիրուց, ամեն մի դեպքում

Պիտի հավետ նրան հնազանդ լիներ:

Կիեռապատրա—Ների՛ր, օ՛, ների՛ր:

Անտոնիոս—Երբեք մի թափիր ոչ մի արտասուր,

Նրանից մեկն իսկ, ասում եմ ես քեզ,

Արժե այն, ինչ որ ես ձեռք եմ բերել

Եվ կորսընցըրել: Տո՛ւր ինձ մի համբույր,

Եվ ես կտոնեմ իմ հատուցումը:

Ուղարկեցի իմ հատուկ տառոցչին,

Վերադարձա՞վ նա: Օ՛, իմ սիրուհի,

Էի եմ կապարով: Գինի, կերակուր:

Թախտը լավ գիտե, որ շատ ավելի

Արհամարհում ենք մենք նրան, երբ նա
Սպառում է մեղ շատ հարվածնելով:

Դուս են զնում:

ԺԲ. Պ.Ա.ՏԿԵՐԸ

Եղիպտոս: Կեսարի բնականեղը: Մանում են Կեսարը, Դոլարելլան,
Թիրենոր և ուրիշներ:

Կեսար—Թող ճերմկայանա՞նա: որ մկել է
Մարկ Անտոնիոսից: Ճանաչո՞ւմ եք նրան:
Գոլարելլա—Կեսար, եկողը փր ուսուցիչն է:
Ահա ապացուց, որ նա մկել է
Սաստիկ փետրաթափ, որ ուղարկել է
Այսակ մի խղճուկ փետուր փր թերց:
Նա, որ, գեռիրս մի բանի լուսին
Շրջանը շարած, ուներ արքաներ
իրեւ սուրբանդակ:

Մանում է եկրոնիոսը:

Կեսար—Մոտեցի՛ր, խոսի՛ր:
Էկրոնիոս—Ինչպիսին որ եմ, Մարկ Անտոնիոսի:
Կողմից եմ գալիս: Երա ծրագրերի
Համար քիչ առաջ ես էի այնքան
Փանարի, որքան ցողն առավոտյան
Մրտենու փորբիկ տերեկի վրա՝
Բազգատությամբ իր ընդարձակ ծույնն:
Կեսար—Թո՞ղ այդպես լինի: Ասա՞ թե դու ի՞նչ
Առաքելությամբ եկել ես այստեղ:
Էկրոնիոս—Երբ տերն իր բախտի քեզ ողջունում է:
Եվ խնդրում է, որ թույլ տաս ապրելու
Եղիպտոսի մեջ եթի շնորհես,
Կնվազեցնի նա իր խնդրանքը:

Եվ քեզ կաղերսի՝ թույլ տալու իրեն
Ծնչելու երկնի և երկրի միջև
Աթենքում, փրբե մի սոսկական մարդ:
Այսքանն իր համար, փսկ Կլեոպատրան
Խոստովանում է քո մեծությունը,
Հպատակվում է քո զորությանը .
Եվ աղերսում է, իր ժառանգների
Ի նպաստ, թագը Պաղպմենների,
Որոնց բախտն այժմ քեզնից է կախված:

Կեսար—Ինչ Անտոնիոսին է վերաբերում՝
Ես ականջ չունեմ իր աղերսանքին:
Գալով թագուհում՝ նա ունկնդրություն
Կամ այլ ցանկություն կստանա ինձնից,
Եթե վոնդի նա Եգիպտոսից
Այնքան պղվելի իր սիրահարին,
Կամ վերջացնի նրա կյանքն այնտեղ.
Թե այս կատարի, զուր չի աղերսի:
Այսպես դու ասա՛ նրանց երկուսին:

Էփրոնիոս—Քեզ հետապնդի միշտ բարի բախտը:

Կեսար—Առաջնորդեցեք նրան գոտուց դուրս:

(Թիրեսովին)

Ժամանակն է, որ ապացուցանես
Պերճախոս լեզուս: Շուտափույթ մեկնիր
Եվ խլի՛ր ձեռքից Անտոնիոսի
Կլեոպատրային, խոստացի՛ր նրան,
Եվ մեր անունից, ինչ ցանկանում է,
Եվ ավելացրո՛ւ ինչ առաջարկներ,
Որ դու գտնում ես հարմար այդ գործին:
Բախտավոր պահին կանացք ուժեղ չեն,
Սակայն կարիքը երդմնապանց կանի
Բնավլին անբիծ Վետայան կույսին էլ:
Փորձի՛ր, Թիրեռ՛ս, ճարտարությունըդ:
Ինքըդ որոշի՛ր նեղություններիդ
Արժեքը և այդ մենք կդարձնենք
Իբրև մի օրենք:

Թիրեսոս—Կեսար, զնում եմ:

Կեսար—Դիտի՛ր, թե ինչպես Անտոնիոսը

Տանում է փրա այս կործանումը
Ուստանասիրի՛ր նրա ամեն մի
Շարժումն ու գործը, ասա' թե ի՞նչ է
Արտահայտում այդ
Թիրելու—Կեսա՛ր, ևս կանեմ:

Գուստ են զնում:

ԺԳ. Պ. Ա. Տ Կ Ե Բ

Աղեքանդրիա: Մի սենյակ պալատում:
Մտնում են Կղեպատրան, Էնորաբրոս, Շարմիանը և Խրաբ:

Կղեպատրա—Ի՞նչ պետք է անհնդ, օ՛, Էնորաբրոս:
Էնորաբրոս—Խորհ՛ե²⁴ և մնանել
Կղեպատրա—Ո՞վ է հանցավոր այս խնդրում, մի՞թե
Անտոնիոսը:

Էնորաբրոս—Լոկ Անտոնիոսը, որ ուզում էր, որ
իր կամքը լինի իշխան իր խելքին
Նրան ի՞նչ փուլթ, թե որու փախուստ ավլիք
Փատերադմի մնծ ճակատամարտից,
Որի բազմաթիվ շարքերը իրար
Աչ էին ազդամ, ինչո՞ւ նա պիտի
Հետեւը դրան: Տափանքի եռքը
Ուզնում չպիտի եղծաներ նրա
Ռազմիկի գերը՝ այնպիսի պահին,
Երբ կեսն աշխարհի կովում էր ընդդեմ
Մյուսի, և ինքը լինելով միակ
Վեճի պատճառը՝ նվազ ամոթ չէր,
Քան թե կորուստը նրա՝ հետեւէ
Քո փախստական դրոշակներին,
Եվ թողնել տորմիղն շփոթ վիճակում:
Կղեպատրա—Խնդրում եմ, լոի՛ր:

24 Մի քանի շեքսպիրագետ սրամտորեն կարծում են, որ խորհ՛ել (think—ալսինքն՝ տվյալ գեղբում մոռալ խոհեր ունենալ) պետք է կարգալ խմել (drink),

Անտոնիոս է Անտոնիոսը՝ Եփրանիոսի նետ:

Անտոնիոս—Պատասխանն ա՞յդ է:

Եփրանիոս—Այո՛, այդ է, տե՛ր:

Անտոնիոս—Ուզեմն թագուհին կարժանանա իր

Իրավունքներին, եթե հանձնի մեղ:

Եփրանիոս—Այսպես է ասում:

Անտոնիոս—Կեռովատրան թո՛ղ իմանա այդ:

(Կեռովատրային)

Մանուկ Կեսարին ուղարկի՛ր դու այս

Քլուխն արեհեր, բոլոր իղձերըդ

Մինչև բերանը կագեցընի

Նա երկրներով թագավորական:

Կեռովատրա—Ա՞յդ գլուխը, տե՛ր:

Անտանիոս—(Եփրանիոսին)՝ Վերադարձի՛ր դու ճորից Կեսարին:

Ասա՛ դու նրան, որ նա կրում է

Իր վրա վարդը վարում հասակի,

Որից աշխարհը պիտի նշմարի

Մի եղակի բան: Նրա դրամը,

Նավատորմիղը, լեգեոնները

Մի երկշոտի էլ կարող են լինել,

Եվ այս բոլորի պաշտոնյաները

Կարող են հաղթել զեկավարությամբ

Մի երեխայի, ինչպես Կեսարի:

Կարդում եմ նրան կովի ասպարեզ,

Մեկ կողմ թողնելու մեր գույգ բախտերի

Դիրքն անհավասար՝ չափվելու ինձ հետ —

Արդեն վայրահակ՝ սուր ընդդեմ սրի,

Մենք մեղ միայնակ: Ես այդ կպրեմ:

Հետեցե՛ք ինձ:

Դուրս են գնում Անտոնիոսը և Եփրանիոսը:

Էնոքարքու—(Մեկուսի)՝ Հավանական է, այո՛, Կեսարը,

Վեհորեն իշխող, արժանազրկի

Իր բարձր դիրքը և կազմակերպի

Մի ներկայացում թատրոնի՝ ընդդեմ

Մի արածիդիւ ևս տեսնում եմ, որ
Դաստողությունը և գալուսը մարդկանց.
Մի խառն կույա է և թե արտաքին
Երևույթները տանուամ են իրենց
Ետևից ներքին հասկությունները՝
Եվ սառապոամ մն գոլորն էլ նաման-
Խնչպիս կարող է երազել անգոտ,
Գիտնարար քորոր հանգամանքները,
Որ զի Կեսարը կոփի տա նրա
Դարարեկության դեմ: Կեսարը, օ՛, Կեսար,
Քեզ ևս մնեթարեկել դու նաև նրա
Դաստողությունը:

Մտնում է մի նեանորդ:

Հետեւորդ—Կեսարից մկան մի պատգամագեց:
Կլեոպատրա—Ի՞նչ, ի՞նչ, էլ ո՞չ մի ձեսականություն,
Տեսի՛ք, իմ կանացը, բացված վարդի մհջ
Խցկուամ են իրենց բիթը մրանք, որ
Ծնկի կտային կտկոնի առաջ:
Բնդունի՛ք, պարո՞ն:

Գուրս է զնում նեանորդը:

Էնորաբոս—(Մեկուսի)—Ահա ևս և իմ համեստությունը՝
Սկսում ենք լինելու: Լոյալությունը,
Ամուր կառչելով քթամիտներին,
Դարձընում է մեր հավատքը մի լոկ
Անմիտ խենթություն, սակայն և այնպիս-
նա, որ կարող է հավատարմությամբ
Հետեւել ընկած տիրոջ, կհաղթի
Տիրոջ հաղթողին և կվաստակի
Տեղ պատմության մհջ:

Մտնում է Թիրենոր:

Կլեոպատրա—Ասացե՛ք, ի՞նչ է Կեսարի կամքը:
Թիրենու—Լսեցե՛ք մենակ:
Կլեոպատրա—Ո՛չ մի մարդ, բացի բարեկամներից:

Ասա՛ համարձակ:

Թիրենու—Միգուցի նրանք բարեկամներ են

Եվ Անտոնիոսի:

Էնոքարոս—Եվ նա պետք ունի բարեկամների:

Այնքան, որքան որ Կեսարը ունի,

Այլապիս մեղ էլ նա կարիք չունի:

Եթե Կեսարը կը արեհաճի,

Մեր տերն անձկությամբ կդառնա նրա

Բարեկամն ազնիվ: Գալով մեղ՝ այդ գուք

Լավ եք իմանում, տա հետ մեր տերն է՝

Մենք էլ նրանն ենք, ուրիմն կլինենք

Մենք Կեսարինը:

Թիրենու—Այդպես: Ուրեմն ինձ մտի՛կ արա,

Ո՞վ Երևելիդ, խնդրում է Կեսարն

Նկատի շառնել այն կացությունը,

Որում դու ես այժմ, քան թե այն բանը,

Որ դա Կեսարն է:

Կլեոպատրա—Շարունակի՛ր, դա ալքայական է:

Թիրենու—Նա իմանում է, որ նվիրված ես

Դու Անտոնիոսին ոչ թե քո սիրուց,

Այլ քո սարսափից:

Կլեոպատրա—Օ...

Թիրենու—Ուստի քո պատվին հասած բժերին

Նա կարեկցում է, իբր հարկադրված

Արատներ, այլ ոչ արժանի դատված:

Կլեոպատրա—Նա մի աստված է և իմանում է

Ճշմարտությունը, իմ պատիվն երբեք

Տեղի չի տվել, այլ նվաճվել է:

Էնոքարոս—(Մեկուսի) —Վստահ լիներու համար այդ բանին՝

Ես կհարցնեմ Մարկ Անտոնիոսին:

Օ՛, տեր իմ, տե՛ր իմ, քո նավը՝ այնքան

Զուր է վերցնում, որ պետք է թողնենք

Մենք քեզ, որպեսզի ընկղմվես մենակ:

Զի միրելագույնդ քեզ լքանում է:

Թիրենու—Ասհ՞մ Կեսարին, թե ինչ եք ուզում

Նրանից, քանզի մասամբ խնդրում է

Նա բավարարել քո ըղձանքները:
 Խորը հաճիկի կլինի նրան,
 Եթե մի նեցուկ դարձնես նրա բախտը
 Եվ հենվես վլասն, բայց նրա ողին
 Զերմով կլցվի, որ գսի ինձնից,
 Թե գու լքել ես Անտոնիոսին
 Եվ զրել ես քեզ աշխարհի տիրոջ
 Հովանու ներքու
 Կեռպատրա—Ի՞նչ է անունըդ?
 Թիւեսու—Թիւեսու, արկի՛նու
 Կեռպատրա—Ամենաբարի գու պատգամարեր,
 Ասս Կեսարին մեծ՝ հետելալը —
 Երբեկ նվիրակ²⁵ ևս համբուրում եմ
 Նրա հաղթ ձեռքը, ասա՛ զու նրան,
 Որ անմիջապես կդնեմ թաղըս
 Եր ոտների տակ՝ ծնկի կզամ,
 Եվ ավելացրու, որ ամեն ինչի
 Հաղթող իր շնչից ևս սպասում եմ
 Դատավճիւը այս Եղիպառոսի
 Թիւեսու—Ամենապնիվ քո ընթացքն այդ է,
 Իմաստությունը և բախտը եթե
 Եռլեն փրար գևմ, թե առաջինը
 Հանդգնի անել ինչ որ կարող է,
 Ո՞չ մի առիթ չի կարող ցնցել այն:
 Ինձ շնորհ արա զնել իմ հարզը
 Թռ ձեռքի վրա:
 Կեռպատրա—Եվ հաճախ հայրը քո Կեսարի, երբ
 Խոկում էր զրավէլ նոր-նոր երկրներ,
 Զետեղում էր իր շրթունքները
 Այս անարժան տեղում, որը թվում էր
 Համբուլը անձրև:

25 Ծատերը կարծում են, որ բնազրի in deputation (deputation—պատգամավայրություն, նվիրակների ուղարկում) պետք է կարգալ in disputation, այսինքն՝ վեճի, վիճարանության փոխարեն: Մենք հարեցինք այս տեսակետին, որ կարիք չկա բնազրը փոփոխման ենթարկելու: Միտքը պարզ է՝ Կեռպատրան ուզում է ասել, որ Կեսարին պատվիրակություն ուղարկելու փոխարեն՝ ևս համբուրում եմ նրա հաղթական ձեռքը:

Վերամտնում են Անտոնիոսը և Էնոքարբոսը:

Անտոնիոս—Շնորհիք ու բարի՞ք...

Օ՛, որոտացող Արամազդ վկա...

Ի՞նչ ես դու, ընկե՛ր:

Թիրենու—Մեկը, որ միայն իրագործում է

Հրամանները կատարելագույն

Մի մարդու, որին հնազանդելը

Մեծ արժանիք է:

Էնոքարբոս—(Մեկուսի)՝ Քեզ հարկավոր է մի լավ մտրակել:

Անտոնիոս—Մոտեցիր, էհե՛յ, օ՛, դու գարշելի...

Աստվածնե՛ր, ունե՛ր, իշխանությունը

Փախում է ինձնից, ուրիշ անգամ, երբ

«Հե՛յ» էի կանչում, ինչպես մանուկներ

Բզկտուքի մեջ, արքաներ էին

Վազում ընդառաջ և աղաղակում

«Զեր հրամանը»: Չունի՞ք ականջներ:

Դեռ Անտոնիոսն եմ:

Մտնում են նետեռդեր:

Տարեք միմոսն այս և մտրակեցեք:

Էնոքարբոս—Ավելի լավ է խաղալ առյուծի

Մի քոթոթի հետ, քան թե մեռնող ծեր

Մի առյուծի հետ:

Անտոնիոս—Լուսին և աստղե՛ր: Խարազանեցե՛ք:

Եթե քսան մեծ հարկատուներից,

Որ ճանաչում են Կեսարին իրուն

Գերադաս իշխան, գտնեի այնքան

Համարձակ ձեռքի հետ այս կնոջը...

Ի՞նչ էր անունը, երբ նա դեռևս

Կլեոպատրա չէր: Խարազանեցե՛ք,

Մինչև դուք տեսնեք, որ մանկան նման

Շամածուամ է դեմքը, կաղկանձում

Ողորմածություն: Դո՛ւրս տարեք նրան:

Թիրենու—Օ՛, Անտոնիոս,—

Անտոնիոս— Դուրս քշկցեր դրան և նորի՛ց բերեք
Սեծեղուց հետո Այս Խեղիտատակը
Կեսարի՝ պիտի տանի մեր կողմից
Նրան մի պատկամ:

Դուրս են զնում նետեռդները՝ Թիրենով նետ:

(Կլեպատրային)

Դուք խամբած էիք կիսով չափ, ևրո ես
Զեզ ճաժնաշեցի: Զթողի՛ բարձր
Իմ հարսանեկան՝ Հռոմում անթթար,
Զլքանեցի՛ ևս տմեննալը
Օրինավոր առջևմ մարդարտանման
Կանանցից մեկից՝ լինելու ծաղրի
Առարկա մեկին, որ խոր հարգում է
Փուշ ծառաներին:

Կլեպատրա— Օ՛, վեց բարի տեր:

Անտոնիոս— Եվ գուք նեղել եք Հայկետ տատանվող,
Սակայն երբ որ մեր անտուակ Վյանքում
Մենք պինդ կարծրանանք, օ՛ դժբախտություն,
Կեռուբացնեն մեր այս աշքերը
Իմաստուն դիբը, մեր պայծառագույն
Դատողությունը կը ճնկնի սեփական
Մեր կեղափ մեծը, և պաշտել կտան
Մեր սխալները, կծանակեն մեզ,
Երբ որ մենք դեպի մեր ավերումը
Կսիզանհմենք:

Կլեպատրա— Օ՛, մի՛թ սրան Ակել ենք արդեն:

Անտոնիոս— Զեզ գտա որպես մի սառը պատառ
Մնուած Կեսարի փայտեն պնակում,
Մնացորդ մասը Գնեսոս Պոմպեյի,
Բացի դրանից, ի՞նչ Հուրբուտ ժամեր,
Ռամեկից մոռացված, հեշտասիրուեն
Դուք անց եք կացրել, քանզի, վստահ եմ.
Որ գուք կարող եք դյուրավ սահմանել
Ժուժկալությունը, բայց չեք իմանում,
Թի ինչ բան է դա:

Ալեռպատրա—Այս փնչո՞ւ համար:
 Անտոնիոս—Որպեսզի թույլ տամ մի անզգամի,
 Որ վերցնում է ողորմովյունը
 Եվ ասում. «Աստված հատուցանի քեզ»,
 Ընտանի լինի իմ խաղընկերին —
 Քո այս սուրբ ձեռին, վասմ արտերի
 Այս արքայական կնքող-ուժուղին:
 Օ՛, երանի՞ թե լինեի Բազան
 Բլուրի վրա և մռնչեի
 Ավելի գոռ, քան հոտն եղյուրավոր²⁶,
 Քանզի ես ունեմ վայրենի պատճառ
 Որ եթե հայտնիս մարդասիրությամբ՝
 Պիտի նմաներ այն խեղթեալ վզին,
 Որ շնորհակալ լինում է դահճից,
 Որ արագորեն իրեն է կախում:

Վերամտնում են նետեռողները՝ Թիրեսի նետ:

Խարազանվե՞ց նա:
 Առաջին նետեռորդ—Անթերի, տեր իմ:
 Անտոնիոս—Լաց եղա՞վ, հայցե՞ց նա ներողություն:
 Առաջին նետեռորդ—Այո՛, հայցեց նա:
 Անտոնիոս—Եթե քո հայրը դեռևս ապրում է,
 Թող ապաշավի, որ չծնվեցիր
 Իբրև իր դուստրը և դու վշտացրիր,
 Որ հետեւ ես Կեսարին՝ նրա
 Հաղթանակներում, քանզի դու կերար
 Մտրակը այդ բանն անելուդ համար:
 Սրանից հետո մի առիկնոջ ճերմակ
 Զեռքը պատճառի քեզ խոր մի դողդոչ,
 Վրան նայելիս զգաս դու սարսուռ:
 Վերադարձիր քու նորից Կեսարին
 Եվ պատմիր նրան, թե ինչպիս այստեղ

26 Սաղմոս Դավթի ԽԱ, 13. «Եռորչ եղեն զինև զուարակք բազումք, և ցուզք գերք
 պաշարեցին զիս: Բացին ի վերա իմ զբերանս իւրեանց որպես առիւծ, զի մռնչէ և
 յափշտակէ»:

Դու քնդամավեցիր, միս դիր և տուա,
Որ ինձ լցնում է զայդույթավ իր զիմ,
Քամպի թվում է գուսով քամահրուտ,
Շեշտելով այս, ինչ ահա իս այժմ մուտ,
Եվ ոչ թե այն, ինչ, իմերն իմամում է,
Որ էփ առաջ Ցաւուում է նա ինձ,
Եվ այդ այս սրանիս շատ հեշտ է անել,
Երբ ար փոմ բարի աստղերը, որոնք
Էին իմ նախկին առաջնորդելոր,
Թափուր մեն թողել իրենց ծիրերը,
Եվ արձակում մեն վրենց հուրերը
Գմոխքի ամպիգրամ Թի գուր շի զարիս
Իրեն փոմ խոսքը կամ իմ արածը,
Ասա դու նրան, որ Հիպարքոսը,
Իմ աղասապրած ատրուելն իր մոտն է,
Կարող է ծիծել նրան, ըստ հաւճոյս,
Կամ կախ տալ նրան և կամ խոշտանդել,
Ինչսին դուր կզա, ինձ հաստոցիրու,
Դու այդ ստիպի՞ր զնա՛, մարակի
Քո հարվածների խիստ նշաններով:

Գուրս է զնում թիրենոր:

Կլեոպատրա—Վերջացրի՞ք դուք:
Անտանիոս—Ավա՞զ, լուսինը մեր այս երկրային,
Այժմ խավարած է և դա միմիայն
Կանիսագուժում է խապառ անկումը
Մարկ Անտոնիոսի:
Կլեոպատրա—Պետք է զսպեմ ինձ, մինչև որ անցնի
Նրա դայըռույթը:
Անտոնիոս—Շողորորթելու համար Կեսարին
Զէի՞ք արդյոք դու աշք փոխանակի
Այն մարդու հետ, որ կապում է նրա
Սրի կապերը:
Կլեոպատրա—Տակավին դու ինձ լավ չե՞ս ճանաշում:
Անտոնիոս—Սառնասի՞րս գեղ ինձ:
Կլեոպատրա—Օ՛, իմ թանկագին, թի այդպես լինեմ

Թող երկինքը իմ սառը սրտիցը
Տեղալ տա կարգուտ և թունավորի
Այն իր ակոմքում և թե առաջին
Կարկտաքարը իմ վվան ընկնի,
Եվ քնկնելու հետ լուծվի իմ կյանքը,
Ասպա խորտակվի և Կեսարիոնը²⁷,
Եվ հաջորդաբար հուշն իմ արգանդի,
Իմ բոլոր արի եգիպտացոց հետ,
Հալեցընող այս կարկտի փոթորկից
Պառկեն անշիրիմ, մինչև նեղոսի
Ճանճերն ու մժղոմն՝ լավելով նրանց՝
Ուտեն ու թաղեն:

Անտոնիոս—Բավարարված եմ:

Հաղթող Կեսարը բանակում է այժմ
Ալեքսանդրիայում, որտեղ ես պիտի
Ընդդիմարդրեմ նրա բախտի գեմ:
Մեր ցամաքային ուժն ազնվորեն
Պատերազմել է, իսկ մեր շախախված
Տորմիղը նորից վերակազմվում է
Եվ ծփում ահա ապառնալիքով:
Ուր էիր, իմ սիրո, լսո՞ւմ ես, տիկի՞ն:
Եթե ես դառնամ մի անգամ կըս
Ճակատամարտից համբույր դրոշմելու
Այս շրթունքներին, պիտի երևամ
Արյունակարած, ես ու իմ առողը
Պիտի ձեռք բերենք հարգն ու պատիւլ
Պատմագիրների: Դեռևս կա հույս:

Կլեոպատրա—Ես ճանաչում եմ իմ արի տիրոջ:

Անտոնիոս—Ես գեռապատկեմ ուժն իմ զղերի,

Իմ սիրու, զոմչը, և կմարտնչեմ
Անողոքաբար, զի երբ ժամերն իմ
Բախտավոր էին, մարդիկ միրկանքով
Կյանք էին խլում ինձնից՝ փոխարեն
Պարզ կատակների, հիմա ցույց պիտ տամ
Իմ ատամները, պիտի ուղարկեմ

27 Կեսարիոնը Հովիոս Կեսարի որդին է՝ Կլեոպատրայից ծնված:

Մթության սփրկը նրանց, որոնք իմ
Ճամփաս կերպեն Արփ', անցկացնենք
Մի գիշեր ևս ուրախ խրախի,
Կանչ' քեզ մտա զու իմ բոլոր տխուր
Զորապեաներին, մի անդամ էլ լի՛ց
Մեր բաժակները, և թող ծանակենք
Կեսպիշերայիմ վաճագի դոդանջը:

Կլեոպատրա—Այսօր ծննդյան իմ տաթեգարձն է,

Ես սիրո ունեի խղճուկ անցկացնել,
Ասկայն քանի որ իմ առերը նորից
Անտոնիոսն է, ևս պետք է զինեմ
Կլեոպատրամն:

Անտոնիոս—Գեռ մենք կըմքոշխնենք երջանիկ օրեր:

Կլեոպատրա—Կանչեցի՛ք արտօչս իր բոլոր աղնիվ
Զորապեաներին:

Անտոնիոս—Այո՛, կանչեցի՛ք, ևս սիրո է խոսեմ
Նրանց հետ և այս գիշեր ևս բոնի
Պիտի ծորել տամ Հրաբորը պինին
Նրանց վերքերից: Արփ', թագուհիս,
Այս բանի մեջը գեռ կա կիսահյութ:
Եվ զալիք մարտին՝ ևս մահվան պիտի
Սիրցնել տամ ինձ, զի սիրո մրցեմ
Նույնիսկ մահարեր իր գերանդու դեմ:

Բոլորը զուս ևն գնում բացի էնորաբրոսից:

Էնորաբրոս—Ահա տւզում է նսեմացընել
Կայծակի փայլը, լինել կատաղի՝
Նշանակում է վախենալ վախից,
Այս պարագալին անդամ տատրակը
Կկտցահարի շալլամին, և դեռ
Ես նշանակում եմ, մեր զորապետի
Խելքի նվազումն վերահաստատում է
Արիությունը: Երբ քաջությունը
Սնունդ է առնում խելքից, ուտում է:
Այն սուրը, որով նա մարտնշում է:
Ես սիրոք է գտնեմ նրան թողնելու
Մի ճար ու ճարակ:

Դուս է գնում:

Ա. Ր Ա. Ր Զ Ո Ր Ր Ո Ր Դ

Ա. Պ Ա. Տ Կ Ե Ր

Ալեքսանդրիայի առաջ, Կեսարի բանակատեղը: Մտնում են Կեսարը, մի
նամակ կարգալով, Ագրիպպան, Մեկնեասը և ուժիներ:

Կեսար—Ինձ անվանում է մանուկ, սաստում է

Իբրև ոմենար ուժ ինձ ծեծելու
Եվ վոնդելու Եգիպտոսից դուրս:
Նա ծեծել է իմ պատգամավորին
Եվ հանրգնում է ինձ Հրավիրել
Մի մենամարտի, Անտոնիոսը
Ընդդեմ Կեսարի... Թող ծեր կալատը
Խմանա, որ ես ոմնեմ բազմաթիվ
Մեռնելու ձևեր, միաժամանակ
Սաղըր գցելու մարտահրավերն իր:

Մեկնեաս—Կեսարը պետք է մտածի այսպիս—

Երբ որ մի մեծ մարդ բռնում է ճամփան
Ամենի ցասման՝ բռնադատված է
Նա նույնիսկ անկլման Շունչ քաշել մի տա,
Այլ անմիջապես օգուզվի՛ր նրա
Խանդարված մտքից, ցասումը երբեք
Չի հսկում ինքը իրեն լավ կերպով:

Կեսար—Թո՛ղ մեր լավագույն զորապետները
Գիտնան, որ վաղը մենք պիտի մղենք
Բագում մարտերի վերջնագույն մարտը:
Մեր շարքերում կան նրանք, որ վերջերս
Սառայում էին Մարկ Անտոնիոսին:
Նրանք իսկ բավ են նրան բռնելու:

Դու հետեւի՞ր, որ պործադրովի այն,
Եվ սուր քամեակին ուրախ ճաշկերութի;
Մհեմք այդ անհելու մեծ պաշար ունինք,
Նրանք արժան են այդ շռայլության:
Եհ՝ զն Անտոնիոս...

Դուրս են զնում:

Բ. Գ. Ա. Տ Կ Ե Ր

Ալեքսանդրիա: Մի սենյակ պալատում: Մտնում են Անտոնիոսը, Կիոսպատրան, Էնորաբրոսը, Շարմիանը, Երասը, Ալեքսար և ուրիշներ:

Անտոնիոս—Դուրիսիո՞ս, նա չի կովի ինձ հետ:
Էնորաբրոս—Ո՞չ, նա չի կովի:
Անտոնիոս—Ի՞նչ է պատճառը:
Էնորաբրոս—Նա մտածում է, որ ունենալով
Թախտ՝ բսան անդամ ավելի լավը,
Ինքն է բսան մարդ մի մարդու ընդդիմ:
Անտոնիոս—Կովկեմ զաղը, թե ծովի և թե
Ցամարի վրա, կամ կապրեմ և կամ
Կլողացնեմ մեռնող պատիվն իմ
Սրբան մեջ, որը կապրեցընի այն
Նորից ու նորից: Պիտի կովկե՞ս լավ:
Էնորաբրոս—Ես պիտի խփեմ և ազագակեմ
«Վերցրո՞ւ բոլորը»:
Անտոնիոս—Լավ ասիր, արի՛: Թող կանչեն առտնին
Իմ ծառանները, լինենք այս գիշեր
Բուռն, լիառատ մեր ճաշկերույթին:

Մտնում են երեք կամ շորս ծառաներ:

Տո՛ւր ինձ քո ձեռքը, դու միշտ եղել ես
Չափազանց պարկեշտ, դու էլ եղել ես,
Դո՛ւ էլ և դո՛ւ էլ և դո՛ւ բոլո՞րդ էլ
Ինձ ծառայել եք Հալատարմորեն,

Եվ արքաներ են ձեզ ընկեր եղել:

Կեռպատրա—Եվ ի՞նչ է ուզում նա ասած լինել:

Էնոքարքոս—(Մեկուսի կեռպատրային)՝ Դա այն

Անձունի խաղերից մեկն է,

Որ տիրությունը դուրս պոռթկալ կտա

Խելապատակից:

Անտոնիոս—Դո՛ւ էլ պարկեշտ ես:

Ես կուզենայի լինել մենակըս

Այնքան մարդ թվով, որքան որ դուք եք,

Եվ դուք բոլորը ձուլվեցեք իրար

Մի Անտոնիոսում, որպեսզի ես էլ

Կարող լինեի ծառայելու ձեզ

Այնքան լավ, որքան դուք ծառայել եք ինձ:

Մառաները—Զանե՞ն այդ բանը մեր աստվածները:

Անտոնիոս—Օ՛, բարեկամներ, ապասարկեցե՛ք

Դուք այս գիշեր ինձ, անպակաս արե՛ք

Դիմին իմ թասից և մեծարեցե՛ք

Ինձ այնպես, ինչպես, երբ կայսրությունն իմ

Հնազանդ էր ինձ, ինչպես դուք էիք:

Կեռպատրա—(Մեկուսի կեռպարքին)՝ Նրա միտքն ի՞նչ է:

Էնոքարքոս—(Մեկուսի կեռպատրային)՝

Լացացընելու հետևորդներին:

Անտոնիոս—Հո՛գ տարեք ինձ այս գիշեր, մի՛ դուքն

Սա վերջին կետն է ձեր ծառայության,

Եվ կարելի է դուք ինձ այլկըս

Չտեսնեք, կամ թի տեսնեք մի ստվեր

Խեղված, հոշոտված, միգուցե վաղը

Դուք սպասարկեք մի ուրիշ տիրոջ:

Ես նայում եմ ձեզ վրա իբր մեկը,

Որ առնում է իր վերջին հրաժեշտը:

Օ՛, դուք ուղղամիտ իմ բարեկամներ,

Զեղ չեմ արձակում, այլ մի տրիշ տիրոջ պես,

Զեր ծառայության հետը պսակված,

Կմնամ ձեզ հետ մինչև իմ մահը:

Հոգ տարե՞ք ինձ այս գիշեր երկու ժամ,

Զեմ աղերսում ես ձեղնից ավելին,

Եվ աստվածները թո՛ղ համուցեն ձեզ

Այս բանի համար

Էնորագրոս—Ի՞նչ ևս տալում տու տանել մեզ, տե՛ր իմ,

Տարալ նրանց այս խոր տրամությունը:

Տեսեք, բավիս են, ևս իրեկ մի էշ.

Լաղիս եմ, կարծես ոռխից կծսաված:

Հանում առմոթի, մի մախակիրսկիք:

Մեզ բացող կանաց:

Անտեխոս—Հո՛, հո՛, զրոյք տանի ինձ, մթե:

Դա էր իմ միարքը: Ծնորչը աճի

Այսանդ՝ ուր կրնկնեմ այդ կաթիլները:

Օ՛, բարեհամբույր իմ բարեկամներ,

Դուք ենթազրուած եք ինձ մի շափականց:

Թախծոտ վիճակում, ևս ձեզ խռուցի:

Զեզ սփոփելու, ցանկանում էի

Այրել զիշերն այս բոցեղ շահերով:

Գիտցե՛ք, իմ արտե՛ր, ևս վարդա մասին

Լալ հույսեր ունեմ, օ՛, և ձեզ պիտի

Ես առաջնորդեմ այնտեղ, որտեղ ևս

Ակնկալում եմ մի կյանք հաղթական,

Ավելի, քան թե մահը սպատվավոր:

Գնա՛նք ընթրիքի, խեղդե՛նք խոհերը:

Դուս ևն զնում:

Գ. Պ. Ա. Տ Կ Ն Բ

Նույնը: Պալատի առաջ:

Մտնում են երկու զինվոր՝ իրեւ պահակներ:

Առաջին զինվոր—Բարի զիշեր, եղբայր, օրը վաղն է:

Երկրորդ զինվոր—Վաղը վճռական օր պիտի լինի: Մնա՛ս բարով:

Փողոցներում որևէ տարօրինակ քան լւսեցի՛ր:

Առաջին զինվոր—Ոչինչ լւսեցի: Ի՞նչ լուր կա:

Երկրորդ զինվոր—Երեկ շշուկ է: Քեզ բարի զիշեր:

Առաջին զինվոր—Ինչ որ է, պարո՞ն, բարի զիշեր:

Մանում են ուրիշ երկու զինվոր:

Երկրորդ զինվոր—Զինվորներ, Հոգածությամբ հակեցեք:
Երրորդ զինվոր—Դուք էլ, Բարի գիշեր, բարի գիշեր:

Առաջին երկուան անցնում են իրենց տեղերը:

Չորրորդ զինվոր—Մենք այսուհեղ: (Անցնում են իրենց տեղերը): Եվ եթե վաղը
մեր տորոմիդը հաղթանակ տանի, ես բացարձակ հույս ոմենմ, որ
ցամաքայինները լավ կդիմադրեն:
Երրորդ զինվոր—Արի բանակ է և վճռականությամբ լեցուն:

Հորոյների նվագ բնմի տակից²⁸:

Չորրորդ զինվոր—Լուսությո՞ւն: Ի՞նչ աղմուկ է:
Առաջին զինվոր—Լսեցի՞ք, լսեցի՞ք:
Երկրորդ զինվոր—Մտի՛կ տվիք:
Առաջին զինվոր—Երաժշտություն օրուամ:
Երրորդ զինվոր—Գետնի տակը:
Չորրորդ զինվոր—Բարի նշան է, չէ՞՞:
Երրորդ զինվոր—Ո՛չ:
Առաջին զինվոր—Լուսությո՞ւն, ասում եմ: Ի՞նչ է նշանակուամ այս:
Երկրորդ զինվոր—Հերակլես աստվածն է, որին Անտոնիոսը աիրուամ էր
և որ այժմ լրում է նրան:
Առաջին զինվոր—Քայլեցի՞ք, տեսմնե՞նք, թե ուրիշ պահակներ լսո՞ւմ
են մեր լսածը:

Նրանք առաջանում են մի ուրիշ տեղ:

Երկրորդ զինվոր—Ի՞նչ կա, բարեկամներ:
Զինվորներ—Ի՞նչ կա, ի՞նչ կա: Լսո՞ւմ եք այս:
Առաջին զինվոր—Այո, տարօրինակ չէ՞՞:
Երրորդ զինվոր—Լսո՞ւմ եք, բարեկամներ, լսո՞ւմ եք:

28 Պլուտարքոսը գրում է, որ երբ այդ գիշեր ողջ բաղաքը լուսության, սարսափի և
ահուգողի մեջ էր, պատերազմի ելքին սպասելու պատճառով, հանկարծ լսվեցին երա-
ժըշտական ամեն տեսակ գործիքներից առաջացած հնչյուններ և ներդաշնակություններ:

Առաջին զինվոր—Հետեւմնը այս աղմակին մինչև սահմանը և տեսնենք,
թէ ինչպէ՞ս պիտի վերջանաւ:
Զինվորներ—(Միասին) —Հարմածայն ենք: Տարօրինակ է:

Դուս են զնում

Գ. Պ. Ա. Տ Կ Ե Բ

Նոյեր: Մի սենյակ պալատում:
Մտնում են Անտոնիոսը, Կիելպատրան, Շարմիանը և ուրիշներ:

Անտոնիոս—Էրո՛ս, զրա՞ն իմ:
Կիելպատրա—Բայց մի քիչ բնի՛ր:
Անտոնիոս—Ոչ, վասյակն իմ, ո՛չ էրո՛ս, զրա՞ն իմ:
Օ՛, էրո՛ս, արի՛:

Մտնում է Էրոսը՝ բերելով գրանը:

Արի՛, լավ տղա, հազցրու զրա՞ն իմ,
Եթե Բախտն այսօր մերը չինի,
Դա նրանից է, որ նրա հանդես
Մենք հոխորառում ենք:
Կիելպատրա—Ես էլ քեզ կօգնեմ: Ինչի՞ համար է:
Անտոնիոս—Ա՛շ, թող, թող, դու իմ սրադի զրա՞նողն ես,
Կեղծ, կեղծ, այս, այս, այս:
Կիելպատրա—Կամաց: Ես կօգնեմ: Ա՛, այսպիս պետք է:
Անտոնիոս—Լավ, լավ, մենք հիմա կհաղթանակենք:
Տեսնո՞ւմ ես դու, իմ ազնիվ բարեկամ,
Գնա՛, զրա՞վի՛ր:
Էրոս—Ծուտով, շուտով, տե՛ր:
Կիելպատրա—Այս ճարմանդները լավ չե՞ն ագուցված:
Անտոնիոս—Օ, սրանչելի՞:
Նա, որ կփորձի քանդիլու սրանք,
Նախքան մմնք ուզենք մի կողմ շպրտել
Հանգստանալու՝ նա պիտի լսի

Մի փոթորկի ձայն: էլո՛ս, փաթթում ես
Անձարակ կերպով, խոկ իմ թագուհին
Այս գործի մեջը ամելի ճարպիկ
Մի զինակիր է, քան դուք: Շտապի՛ր:
Օ՛, իմ աիրուհիս, երանի՝ կարող
Լինեիր տեսնել իմ մարտերն այսօր,
Մանոթ լինելով իմ արքայական
Զբաղմունքներին՝ պիտի տեսնեիր
Մի արհեստավոր:

Մտնում է մի զինված սպա:

Բարի՛ առավոտ, դու բարի մկար,
Նման ես նրան, որ զիտակից է
Պատերազմական պարտավորության
Եվ այն կարիքին, որ մենք սիրում ենք
Երևան բերել իր ժամանակին,
Եվ դիմում նրան խորին հրճվանքով:
Սպա—Մի հազար հոգի, թեև կանուխ է,
Զրահներն հագած սպատում են ձեզ
Նավահանգստում:

Բացականչուրյումներ, փողերի ձայն:
Մտնում են զորապետներ և զինվորներ:

Զարապետ—Զքնաղ է այգը: Ողջո՛ւն, Զորավար:
Քոլարը—Ողջո՛ւն, Զորավար:
Անտոնիոս—Նա լավ բացվել է: Այս առավոտը,
Իբրև մի ոգի մի երիտասարդի,
Որը ցանկանում է ոնենալ հոշակ,
Սկիզբ է առնում ճիշտ ժամանակին:
Այսպես, օ՛, այսպես, արի՛, տո՞ւր ինձ այդ,
Այս կերպ, լավ ասիր: Մնաս բարով դու,
Տիրուհի՛, ինչ էլ տր ինձ պատահի,
Սա մի ոլինվորի համբուլըն է, իմ սեր:

Համբուռում է Կիեվատրային:

Խիստ կշռամբելի և ամոթապարու՛
Մի տառւդանիշ պեսոք է, որ լիներ
Թի կանգ առնելի ավելի վուլֆար
Փազաբշամբնելտավ; Ես քեզ թողնուած եմ՝
Որպես պոդպատյա մի մարդ, մնա՞ս բարովի՝
Դուք, որ ուսուած եք մարտնչել ինձ հետ,
Ճեռեցի՛ք ինձ, կառաջնորդեամ ձեզ
Դեղի ուազմաղաշու Ցախություն ձեզ:

Դուքս են զնում Անտոնիոսը, Էրոսը, Գրավետները և զինվորները:

Տարմիան—Բարեհամեցեք քաշվե՛լ, ափրուհի՛,

Զեր ննջարանը:

Կիեվատրա—Առաջնորդի՛ր ինձ:

Գնուեց է առաջ քաջասրառին:

Նա և Կիեվարը կարողանալին

Վճռել այս ուստի մի մենամարտում...

Անտոնիոսը... քանի որ այժմ...

Ինչ որ է... Գնա՛նք:

Դուքս են զնում:

Ե. Պ. Ա. Տ Կ Ե Բ.

Ալեքսանդրիա: Անտոնիոսի բանակատեղը: Փողերի նայն:

Մանում են Անտոնիոսը և Էրոսը: Մի զինվոր նրանց դեմ է գալիս:

Զինվոր—Թո՛ղ աստվածները զարձնեն այս օրը

Մի բախտավոր օր քեզ համար, տե՛ր իմ:

Անտոնիոս—Թի դու և թի քո այն սպիները

Երանի վրաս աղդած լինեին՝

Մարտի մղելու ինձ ցամաքի վրա:

Զինվոր—Եթե դու այսպես արած լինեիր,

Այն արթաները, որ զնդվզեցին,
Եվ այն գինվորը, որ այս առավոտ
Քեզ լքեց, պիտի հետևեին դեռ
Քո կրտմակներին:

Անտոնիոս—Ո՞վ է գնացել այս առավոտյան:
Զինվոր—Ո՞վ, նա որ հավետ քեզ խիստ մոտիկ էր,
Կանչի՛ր էնորարբ, նա քեզ չի լսի,
Կամ թե Կեսարի բանակատեղից
Կամի. «Քոնը շեմ»:

Անտոնիոս—Դու ի՞նչ ասացիր:
Զինվոր—Տե՛ր իմ, նա հիմա Կեսարի հետ է:
Էրոս—Տե՛ր իմ, իր գանձը և սնդուկները
Հետո շի տարել:

Անտոնիոս—Բայց գնացե՞լ է:
Զինվոր—Ստույգ է, տե՛ր իմ:
Անտոնիոս—Գնա դու, էրոս, ուղարկիր նրա

Գանձը ետեից, արա՛, ո՛չ մի մաս,
Հրամայում եմ, չպահես այստեղ:
Մի նամակ գրի՛ր, ես կստորագրեմ,
Գնաս բարույներ, ազնիվ ողջույններ,
Եվ զրիր, որ իմ խոր ցանկությունն է՝
Երբեք շգտնի ավելի պատճառ
Մի տեր փոխելու: Օ՛, իմ շար բախտը
Փշացրեց պարկեշտ մարդկանց: Շտապի՛ր:
Օ՛, էնորարբու:

Դուրս են զնում:

Զ. Պ. Ա. Տ Կ Ե Ր

Ալեքսանդրիայի առաջ: Կեսարի բանակատեղը: Նվազ:
Մտնում են Կեսարը Ագրիպպայի հետ, էնորարբու և ուրիշներ:

Կեսար—Գնա՛, Ազրիպպա, և մարտն սկսի՛ր,
Մեր կամքն է, որ Մարկ Անտոնիոսը

Թղթ-ողջ բանվի, այսպես իմաց տո՛ւր:
Ազրիպպա—Կանեմ ևս, Կիսա՛ր:

Գնում է դուրս:

Կեսար—Տիեզերական խաղաղության ժամն

**Արգեն մոտիկ է: Եթե այս օրը
Հինի հաջողակ, եթեք անկյունի
Աշխարհը ոլխոփ կրի ձիթենին
Ազատ, անարդել:**

Մտնում է մի պատգամաբեր:

Պատգամաբեր—Եկել է ուղղմի դաշտն Անտոնիոսը:

Կեսար—Գնա՛, պատվիրի՛ր զու Ազրիպպային՝

**Թող առաջ քշի բնովզողներին,
Որ Անտոնիոսը կատաղությունն իր
Վատնի իր վրա:**

Դուրս են գնում Կեսարը և իր շբախումբը:

Էնորաբաս—Այո, բնդվից և Ալեքսասը,
Գնաց Հրեաստան Մարկ Անտոնիոսի
Գործերի համար, նա հետապնդեց
Մեծ Հերովդիսին՝ հակել Կեսարի:
Կողմը և լրել իր Անտոնիոսին:
Իսկ փոխարենն այս տառապանքների
Կեսարը հանեց նըրան կախաղան:
Կանիգիոսը և մնացյալները,
Որոնք խույս տվին, պաշտոններ ունեն,
Սակայն ոչ պատվի խոր վստահության:
Ես ինքս էլ սխալ գործեցի, որին
Դուքս կըդառնամ այնքան դառնազին
Այսաստանողը: Էլ ես չեմ կարող
Հրճվու այս կյանքում:

Մանում է Կեսարի զինվորներից մեկը:

Զինվոր—Օ՛, էնոքարբոս, Մարկ Անտոնիոս
Ուղարկել է քո ետևից բոլոր
Քո գանձը, առավել իր ընծաներով,
Պատգամարերը պահակատեղն իմ
Եկավ և այժմ քո վրանի տակ
Բեռնաթափում է իր ջորիները:
Էնոքարբոս—Քեզ եմ տալիս այն:
Զինվոր—Մի՛ ծաղրիր դու ինձ, օ՛, էնոքարբոս:
Ճիշտն եմ ասում քեզ, լավագույնն այն է,
Որ ապահովես բերողին մինչև
Դուրս գա բանակից, ես պետք է դառնամ
Դեպի պաշտոնը, եթե ոչ ինքըս
Կանեի բանն այդ: Դեռևս քո կայսրը
Մի՛ Արամազդ է:

Դուս է զնում:

Էնոքարբոս—Միայն ես եմ այս աշխարհի սրիկան,
Եվ ինքս եմ զգում, որ այդպիսին եմ:
Օ՛, Անտոնիոս, Հա՛նք առատության,
Ինչպե՞ս դու պիտի վարձատրեիր ինձ
Եմ ծառայության համար լավագույն,
Երբ պսակում ես նվաստությունն իմ
Այսպիսի ոսկով: Սա ուռեցըրեց
Եմ սիրու, եթե խղճի խայթն արագ
Չպայթեցընի, ավելի արագ
Մի միջոց պիտի զարմի, կոտրի այն,
Բայց խղճի խայթն այդ, զգում եմ, կանի:
Կովեմ ես քո դեմ... Ո՛չ, ես կգնամ
Կորոնեմ մի փոս մեռնելու այնտեղ:
Ամենապիղծը հարմարագույնն է
Եմ կյանքի վերջին օրերի համար:

Դուս է զնում:

Թագմի դաշտը եւկու բանակատեղերի միջև: Նվազ:
Թմբուկներ և փողեր: Մտնում են Ագրիպան և ուրիշներ:

Ագրիպա—Քաշվի՞նք, չափաղանց մենք առաջ անցանք:
Կեսարը անձամբ կռվի է նետվիլ
Եվ մեր ճնշումը մեր սպասածից
Գերազանցում է:

Գույս են զնում:
Նվազ: Մտնում են Անտոնիոսը և Սկարոսը, վերջինը՝ վիրավար:

Սկարոս—Օ՛, իմ քաջ կայսըր, ահա սրան են
Անվանում կոխիլ,
Եթե մենք այսպիս արած լինեինք
Առաջին անգամ, կրշեինք մենք
Նրանց գեղի տոռմ՝ զլխների վրա
Քուրցեր վիաթաթած:

Անտոնիոս—Քեզանից առաջ արյուն է զնում:

Սկարոս—Այսակա ունեի ևս մի վերք, որ էր
Նման Դ տառի, այժրմ հղավ Գ²⁹:

Անտոնիոս—Նրանք քաշվում են:

Սկարոս—Մենք կմարտնչենք մինչև մենք նրանց
Քշենք արտաքնոց,
Ես դեռ տեղ ունեմ վեց խոցի համար:

Գույս են զնում:

Էրոս—Նրանք պարտված են, տե՛ր իմ, և մեր այս
Առաջելությունն առաջնորդում է
Շքեղ հաղթության:

Սկարոս—Օ՛ն, կնիք դնենք նրանց թիկունքին,

29 Բնագրում ասում է Տ տառը, որ դարձավ Հ: Մենք այս երկու տառերի, ըստ ձեր, ամենամուս համարեցինք Դ և Գ: Ճիշտն ասած՝ կարելի է վերցնել որևէ երկու տառ, վասնի ըստ էության ոչ մի նշանակություն չունի, որևէ վերբ կարելի է որևէ տառի նմանեցնել:

Բոնենք ետևից՝
 ինչպես անոամ ենք նապաստակներին,
 Օ՛, մեծ հաճույք է նեղել փախչողին:
 Անտոնիոս—Կվարձատըրեմ ես քեզ մի անգամ
 Քո կայտառ ոգու՝ իսկ տասը անգամ
 Քո բարձրաստիճան քաջության համար:
 Արի՛, Սկարո՛ս:
 Սկարոս—Կաղարով կդամ:

Դուրս են զնում:

Ը. Պ. Ա. Տ Կ Ե Ր

Ալեքսանդրիայի պարիսպների տակ նվագ:
 Մտեսմ են Անտոնիոսը՝ ուզմական բայլով, Սկարոսը և զինվորներ:

Անտոնիոս—Հաղթեցինք նրան մինչև բանակն իր,
 Թո՛ղ վազի մեկը առաջից և թող
 Թագուհուն պատմի մեր արարժները:
 Վաղը՝ նախքան մեզ արևը տեսանի,
 Մենք կթափենք այն արյունն, որ այսօր
 Մեզնից խոսապիեց: Շնորհակալ եմ
 ես ձեզ բոլողիդ, վասնզի ունեք
 Զեռներ քաջարի և կովեցիք դուք
 Ո՛չ թե իմ դատի համար, այլ որպես
 Թե ամեն մեկիդ պատկաներ դատը:
 Դուք ձեզ գույց տովիք որպես Հեկտորներ,
 Մտե՛ք քաղաքը, ողջագուրեցե՛ք
 Զեր կանանց և ձեր բարեկամներին,
 Պատմեցե՛ք նրանց ձեր քաջությունը,
 Եվ մինչդեռ նրանք ուրախ արցունքով
 Կլվան վերքից լճճած արյունը
 Եվ կհամբուրեն պատվի արժանի
 Վերքի ծակերը:
 (Սկարոսին)
 Տո՛ւր ինձ քո ձեռքը:

Մանում է Կլեոպատրան շխամբով:

Այս մեծ քաղցրություն եւս ոդիոժի պատճեմ՝
Քո արարքները, տրափեազի նրա
Շնորհակալությունն օրհնի քեզ հավիտ:

(Կլեոպատրային)

Ո՞վ լուրս աշխարհի, շղթայի' ու ոռւ վո՞յ
Զրահված վիզը, խոյացի' ո, արի',
Եվ փորձի' ո անցնել զրահի միջեց
Մինչև վմբ սիրար և այնանդ հեծիր
Իմ հաղթանակող հերերի վրա:

Կլեոպատրա—Տերերի' տերը, ո՞ ոռւ անսահման
Քաջասրտություն, ժարուհի ես զայխ

Աշխարհի այս մեծ թակարգում շընկած:

Անտոնիոս—Օ՛ իմ ստիակը, ծեծեցինք նրանց
Մինչև մահիճներմ: Եվ ի՞նչ, ով աղջիկ,
Թի մոխրագույնը խառնվի մի քիչ
Ավելի ջահել մեր թուխ մաղի հետ,
Բայց մենք տակավին տևնենք մի ուղեղ,
Որ կեր է առաջիւ դեռ մեր շգերին,
Եվ մենք կարող ենք դեռատի կյանքի
Խաղը զրավել խաղի ետեից:

Նայիր այս մարգն, հանձնիր քո ձեռքը
Նրա շրթներին: Համբուրդի' ո, ուզմի' կ:
Նա կովկեց այսօր, որսկաս մի աստված՝
Մարդկության համդեսպ ասելությամբ լի,
Որպես մի աստված, որ եկած լիներ
Այդ կերպարանքով ավեր սփոելու:

Կլեոպատրա—Ես նվիրում եմ քեզ, ո՞վ բարեկամ,
Ոսկյա մի զրահ, որ պատկանում էր
Մի թագավորի:

Անտոնիոս—Նա արժանի էր զրան, եթե այդ
Լիներ մինչեւ իսկ սուրբ Արեգակի
Շքակառքի պես հրակներով լի:

Տո՛ւր ինձ քո ձեռքը։ Ալեքսանեղորիայի
Միշից քայլենք մենք լի ուրախությամբ՝
Կրկուլ մեր շատ կովի մեջ եղած
Վահաններն իբրև զինվորներ, որոնց
Պատկանում են դրանք։
Եթե պալատը մեր կարող վիճեր
Սպասարկելու իբրև օթևան
Այս զորագնդին, պիտի լընթրեինք
Բոլորս միասին և կըմպեինք մենք
Լիբը բաժակներ կենացը հաջորդ
Օրվա մեր բախտին, որ խոստանում է
Ծքեղ կործանում։
Ո՞վ փողահարներ, արույրե ձայնով
Պայթեցրի՛ք դուք ականջը քաղքի,
Եվ խառնըլեցեք շաշող-շառաշող
Մեր թմբուկներին, որ երկինք, երկիր
Զայնակցին իրար՝ փառաբանելու
Մեր մուտքը քաղաք։

Դուրս են գնում։

Թ. Պ Ա Տ Կ Ե Ր

Կեսարի բանակատեղը։
Թանակներ իրենց դիրքերի վրա։

Առաջին զինվոր—Եթե մի ժամում մենք չփոխվեցինք՝
Պետք է մենք դառնանք պահակատեղը։
Գիշերը շող է, և ասում են, որ
Մենք պիտի լինենք ուզմաճակատում
Մոտ երկրորդ ժամին այս առավոտյան։
Երկրորդ զինվոր—Այս պերջին օրը եղավ մեզ համար
Վշտալի մի օր։

Մտնում է Էնոքարբուր։

Էնոքարբուր—Ո՞վ գիշեր, եղի՛ր ինձ համար վկա։
Երրորդ զինվոր—Ո՞վ է այս մարդը։

Երկրորդ զինվոր — Թագնվի՛ր լսի՛ր:
Էնորաբրու — Վկա եղի՛ր ինձ, ով օրհնյալ լուսին,
Երբ սրատնության մեջ արացող մարդիկ
Կրում մն հուշը անարգանքների,
Վկացի՛ր, որ խեղճ էնորաբրունը
Քո ներկայության կրեց զզչումք:

Առաջին զինվոր — Էնորաբրո՛սը:
Երրորդ զինվոր — Լո՛ւս, էլի՛ լսիր:
Էնորաբրու — Ով գու ճշմարիք վեհապետունի
Թախծոտ տիսրության, ոփշերվա թունոտ
Խոնավությունը քամի՛ր իմ վլրա,
Որպեսպի կյանքը, խմ կամքի հանդեպ
Բուռն ընդլացը, շրմեցի ինձ մրկար,
Նետի՛ր իմ սիրտը իմ սխալանքի
Կայծքարի քնդգնմ, որպեսպի վշտից
Չորանրալով, նա վերածվի փոշու
Եվ մերզ տա համես կիդուստ խոհերին:
Ո՞վ Անտոնիոս, ավելի վեհ ես,
Քան ուրացումն իմ վատահամրավ է:
Ների՛ր ինձ, ների՛ր մասնավորապես
Քո անձի հանգեստ զործված հանցանքին,
Եվ թո՛ղ աշխարհն արձանագրի ինձ
Իրրև տեր լրող և փախստական:
Օ՛, Անտոնիոս, օ՛, Անտոնիոս:

Երկրորդ զինվոր — Խոսակցե՛նք հետք:
Առաջին զինվոր — Ո՛չ, լսնեք նրան, զի խոսածները
Շատ կարելի է հետաքրքրում են
Նաև Կեսարին:
Երրորդ զինվոր — Լա՛վ, այդպե՞ս անհնք: Բայց նա քնում է:
Առաջին զինվոր — Նա նվազած է, զի այնքան տխուր
Մի աղոթք, որքան նրանը, երբեք
Քուն չի հրամիրի:
Երկրորդ զինվոր — Մոտենա՛նք նրան:
Երրորդ զինվոր — Զարթեցե՛ք, սինյո՛ր, խոսեցեք մեզ հետ:
Երկրորդ զինվոր — Լսո՞ւմ եք, սինյոր:
Առաջին զինվոր — Օ՛, մահվան ձեռքը բռնել է նրան:

Հեռվից քմբուկի ձայն:

Օ՛, մտի՛կ տվեք, թմբուկի ձայնը
Զարթեցնում է լրջախոնությամբ
Խոր քնողներին: Տանե՛նք այս մարդուն
Պահակատեղը, հայտնի մի մարդ է:
Մեր պահակության ժամը լրիվ է:

Երբարդ զինվոր—Ուրեմն տանե՛նք, միգուցի դեռևս
Կլերաբուժվի:

Դուրս են զնում՝ տանելով էնորարբոսի մարմինը:

Ժ. Պ. Տ Կ Ե Ր

Երկու բանակատեղերի միջև:
Մանում են Անտոնիոսը և Սկարոսը՝ զինվարներով:

Անտոնիոս—Պատրաստվում են նրանք այսօր ծովի վրա
Մեր դեմ կովելու, մենք դուր չենք գալիս
Նրանց՝ ցամաքում:

Սկարոս—Թե ծովի և թե ցամաքի վրա:

Անտոնիոս—Եթե կովեին հրում թե օդում՝

Մենք էլ կկովենք: Բայց այս է բանը —

Մեր հետևակը՝ քաղաքին մոտիկ

Բլուրների վրա՝ կը մնա մեզ հետ:

Տրված է արդեն ծովի հրամանը:

Տորմիղը մեկնեց նավահանգստից,

Գնա՞նք այնտեղ՝ ուր կարող ենք շատ լավ

Դառնել ուժերը և ապա դիտել

Նրանց ճիգերը:

Դուրս են զնում:

Նույն տեղի մի ուրիշ մասում:
Մտնում է Կեսարն իր զինվորներով: .

Կեսար—Եթե հարձակում կրենք՝ մենք պիտի
Խխառ հանգիստ լիճենք ցամաքի վրա,
Որպ, կարծում մա՛, կարող մնք անել,
Զի Անտոնիոսի բաժագույն վորքը
Մովի վրա է ամրացրնելու
Ցոկանավերը: Դնա՞նք ձորերը,
Բոնենք դիրքերը միզ նպաստավոր:

Դուրս են զնում:

Նույնի մի այլ մասում:
Մտնում են Անտոնիոսը և Սկարոսը:-

Անտոնիոս—Նրանք տակալին պատրաստ չեն կովի:
Այն կողմք՝ որտեղ կանգնած է մայրին,
Կհայտարերեմ նրանց բոլորին:
Ես կրերեմ քեզ մի լուր շուտափույթ՝
Թե ինչպիս գործը ընթացը է առնում:

Դուրս է զնում:

Սկարոս—Ծիծեռնակները կլեռպատրայի
Նավերում իրենց բույներն են շինել:
Հավաճաները պատասխանում են,
Թե չեն իմանում և թե ինչ ասեն,
Եվ երեսում են տխուր, աճարեկ,
Եվ չեն հանդգնում խոստովանելու՝
Ինչ իմանում են: Մարկ Անտոնիոսը
Արի է, սակայն դարձել է վհատ,
Եվ ընդմիջաբար երփներանդ բախտն իր:

Տալիս է իրեն կամ հույս կամ սարսափ՝
Նայած ինչ ունի, նայած ինչ չունի:

Ժխոր և աղմով ճեղվից՝ ծովային կովի նմանվող:
Կերամտենամ է Անտոնիոսը:

Անտոնիոս—Կորավ ամեն ինչ, այս թշվառական
Եղիսաբետին ինձ մասնեց, տուրմիդն իմ
Հանձնվեց թշնամում և ահա այժմուն
Նրանք նետում են դեպի վեր, օդը
Գոդակներն իրենց, ըմպում միաւսին
Երկար ժամանակ իրար կորցրած
Զերթ բարեկամներ: Ով դու գարշ պոռնիկ,
Երիցըս փոխված, դու էիր, որ ինձ
Վաճառեցիր այս անփորձ համբակին:
Եվ այժմ իմ սիրու պատերազմում է
Միմիայն քո դեմ:

(Սկարոսին)

Հրամայիր, որ փախչեն բոլորը:
Վաւնցի երբ ես վրեժս լուծեմ
Իմ կախարդունոց՝ ինձ էլ չի մնում
Ոչենչ անելու: Հրամայի՛ր, որ
Բոլորը փախչեն, դու ինքդ էլ գնա՛:

Սկարոսը դուս է գնում:

Ո՞վ դու Արեգակ, ես քո ծագումը
Էլ շնմ տեսնելու: Ահա այստեղ է,
Որ բաժանվում են Մարկ Անտոնիոսը
Եվ բախտն իրարից, հենց այստեղ է, որ
Մենք ձեռք ենք սեղմում: Ամեն ինչ եկավ
Այս կետին հասավ: Եվ այն սրտերը,
Որ սպանիական ջների նման
Քծնում էին իմ գարշապարներին,
Մարդիկ, որոնց ես ջնորհեցի իրենց
Յանկությունները, հալում են, գեղում
Անուշներն իրենց՝ ծաղկող Կեսարին:

Անդեվագերծ է այս մալրին ահա, .
 Որ հավամատի ք բոլորի վրաս
 Մատնկած ԽԵ ԿԱ: Օ՛, Եղիպատրէի,
 Այս խարդախ Հոդին, թովշուհին մոռալլ, .
 Որի աշքերի մի Նշանն անդամ
 Ինձ ուզարկում էր պատերազմների,
 Եվ կանչում էր ետ, որեալի Հայրենիք,
 Որի կուրծքն էր յօհ զավաթը և յօհ
 Կետ նոպատակը, տրագես մի զնչու,
 Գուրեխախաղի մեջ³⁰, ինձ Հրասուրեց
 Գեարի անդնդի խորությունները!
 Օ, Էրո՛ս, Էրո՛ս!

Մանում է Կիեսպատրան:

Օ՛, պյութանք, կորի՛ր:
 Կիեսպատրա—Ինչո՞ւ իմ տերը բարկացած է իր
 Սիրուհու հանդիպ:
 Անտոնիոս—Անհետացի՛ր, թե ոչ ես կուտամ քեզ այն,
 Ինչին արժան ես, կնսենացնեմ
 Եվ Հաղթանակը Համբակ Կիսարի:
 Թո՛ղ վերցնի քեզ, վերամբարձ տանի
 Աղմկախոռով պլերեյներին,
 Եվ դու Հետեկի՛ր Կիսարի կառքին՝
 Երբեմ մեծագույն արաստը սեռիդ,
 Ամենից ավել Հրեշտանման,
 Թող ցուցազրեն քեզ ամենախղճուկ,
 Ամենաչնչին մի բանի Համար,
 Գլոշի³¹ Համար: Եվ թող Օկտավիան
 Հերկի քո դեմքը արդեն պատրաստած
 Իր հղումգներով:

³⁰ Fast and loose-ը մի խաղ է, որ խաղացվում է գոտկով՝ հետևյալ ձևով: Մեկը ուսումն է զոտին երկան արած, դիմացինը պնտք է մի սուր ձողով դանի կենա- րոնը: Մենք այս խաղը թարգմանեցինք պարզապես զոտկախաղ:

³¹ Բնագրում օօյն—Նախկին Հոլանդական դրամ, որ արժեր կես ֆարթինգ, այ- սինքն անդիխական կես սենտը: Բնադրի միտքն չ չնչին փողով ցույցի դնել:

Դուրս է գնամ Կլեոպատրան:

Լավ որ գնացիր, թե լավ է ապրելն,
Սակայն ավելի լավ էր ընկնեիր
Իմ զայրույթի տոավ, քանզի մեկ մահը
Կարող էր շատշատ մահեր խափանել:
Էրո՛ս, ո՞րտեղ ես, նեսոսի շապիկն
է իմ վրա, ո՞չ, առվրեցրո՛ւ ինձ,
Ո՞վ դու, Ալկիդե՛ս, տ' ով դու իմ նախնիք
Քո բարկությունը, թո՛ղ պառկեցնեմ
Լիկասը լուսնի եղջյուրների վրա
Եվ այս ձեռքերով, որ ամենածանր
Լախտը բռնում են, նվաճեմ իմ այս
Արժանի անձը, մեռնի վհուկը,
Նա ինձ վաճառեց դեռատի տղին
Հոռմեացի, և ես ընկնում եմ
Այս դավիթ ներքո, օ՛, նա կմեռնի
Այս բանի համար: Էրոս: ո՞րտեղ ես:

Դուրս է գնամ:

ԺԳ. Պ. Ա. Տ Կ Ե Ր

Ալեքսանդրիա: Մի սենյակ պալատում:
Մանում են Կլեոպատրան, Շարմիանը, Իրասը և Մարդիանը:

Կլեոպատրա—Օգնեցե՛ք դուք ինձ: Իմ կանայք, նա է
Ավելի կատղած, քան Տելամոնն³² իր
Վահանի համար, երբեք Թեսալիոն
Վարազը այնքան չէ փրփրակալած:
Շարմիան—Մտե՛ք դամբարան, գակվեցե՛ք այնտեղ,
Ուղարկեցեք մարդ նրան ասելու,
Թե դուք մեռած եք: Հոգին չի զատավում

³² Էսս Տելամոնը զրկված էր Աքիլեսի վահանից:

Մարմնից ավելի ցավով, քամ մարդը
իր մեծությունից։
Ալեռպատրա—Մանեմ դամբարան։ Գնա՛, Մարդիան,
Ասա՛ նրան, որ ևս ինձ սպանեցի,
Ասա՛ դու նրան, որ արտասամասած
իմ վերջին բարով էր «Անտանիոս»։
Ասա՛, խնդրամ եմ, կարեկից շեշտով՝
Քնա՞՛, Մարդիան՝ և ինձ լուր թիր թի՛
Ինչպի՛ս ընդունեց փոք մահվան բուրք։
Մանեմ պամբարան։

Դուս են զնում։

ԺԴ. Պ. Ա. Տ Կ Ե Բ

Նույնը։ Մի ուրիշ սենյակ պալատում։
Մտնում են Անտանիոսը և Էրոսը։

Անտանիոս—Էրո՛ս, դու դեռ ինձ տե՛ր ես ճանաշում։
Էրոս—Այո՛, աղնի՛վ տեր։
Անտանիոս—Երգելըն, Էրո՛ս, տեսնում ենք մի ամպ
Վիշապի նման, մի շողի՝ նման
Արջի, առյուծի կամ միջնարերդի՝
Աշտարակներով, մի կախված ժայռի,
Մի հրկճյուղ էրան և կամ կասպուտակ
Մի հրվանդանի՝ վրան ծառերով,
Որոնք նշան են անում աշխարհին,
Օգեղին պատրանք գծում մեր աշքին։
Տեսած կլինես երեսլիթներն այս,
Սրանք ցուցերն են սև երեկոյի։

Էրոս—Այո՛, աղնի՛վ տեր։
Անտանիոս—Այն որ հիմա մի ձի էր, վայրկյանում
Ամպը չնշում է, դարձնում անորոշ
Զերթ ջուրը շրում։
Էրոս—Այդպիս է տե՛ր իմ։

Անտոնիոս—իմ բարի ծառա, էրո՛ս, այժըմ քո
Ճորապեսն այսպիս հենց մի մարմին է,
Ես Անտոնիոսն եմ ահա, սակայն չեմ
Կարող պահպանել այս տեսանելի
Չեզ, իմ ծառա, ես Եգիպտոսի
Համար մղեցի պատերազմերն այս,
Թագուհին, որի սիրող գրաված
Էի ես կարծում, քանդի նա իմն էր
Գրաված, մի աիրատ, որ մինչդեռ իմն էր,
Միլիոններ նրան շաղկապված էին,
Որ այժըմ չկան, թագուհին, էրոս,
Կեսարի հետը խաղաթուղթ շինեց,
Խարդախեց փառքն իմ բնդդեմ թշնամու
Հաղթանակների: Լա՛վ, մի՛ արտասվիր,
Իմ աղնիսլ էրո՛ս, մենք մնացել ենք
Մեզ վերջացնելու:

Մտնում է Մարդիանը:

Քո տիկինը շար, սուրս է գողացել:
Մարդիան—Ո՛չ, Անտոնիոս, իմ տիկինը քեզ
Սիրում էր: Նրա բախտը խառնված էր
Ամբողջ քոնի հետ:
Անտոնիոս—Կորի՛ր, աներես ներքինի՛, լոկ՛ր,
Նա մատնել է ինձ և պետք է մեռնի:
Մարդիան—Մի անձի մահը կարող է հատուցվել
Միայն մի անգամ և այդ նա արդեն
Իրագործել է: Ինչ տպանմ էիր
Դու ինքը տ անել, արդեն եղել է:
Ազնի՛վ Անտոնիոս, վերջին բառը, որ
Նա արտասամեց՝ էր «Անտոնիոս»,
Եվ ապա՝ լալու ողբի արանքում
Կտրեց անոնք Մարկ Անտոնիոսի,
Բաժանվեց սուրի և շուրթի միջև:
Նա տվաց զյանքը՝ այսպես թողնելով
Քա հռահն իր մեջ:

Անտոնիոս — Ուրիմն մեռած է:

Մարդիան — Այո՛, միռած է:

Անտոնիոս — Համե՞ր գենքիրն իմ, էրո՛ս, վերջացավ.

Իմ երկար օրվա աշխատաւթյունը:

Մանք պիտի է բնենք:

(Մարդիանին):

Որ գու մեկնում ևս

Այստեղից անվնաս, նշանակում է:

Ես հասուցամ ևմ քո չարշարանքը

Հարսւստ վճարով, զնա՛ այստեղից:

Մարդիանը զնում է:

Պոլի՛ր, դուքս Հանեի՛ր, յոթը որթանի

Վահանն էասի չի փարող պահել

Գոփյունն իմ սրահի ձեղքից եցե՛ք, կողեր,

Ուզ ափ'րա, մի անգամ եղիր ավելի

Հզոր, քան թի քեզ պարունակողը,

Պայթեցր' զու քո զյուրարեկ տումիր,

Արագ, էրո՛ս, շո՛ւատ: Ես է՛լ զինվոր չեմ,

Փշրած բեկորներ, զնացեք, ես ձեզ

Կրեցի վեհանձն: Հեռացի՛ր մի պահ:

Էրուր զնում է:

Ես կհասնեմ քեզ, ո՞վ կլիոպատրա,

Եվ կաղերսեմ իմ ներողությունը:

Հարկավոր է, որ այսպիս էլ լինի,

Զի այժմ տանջանք է երկարացումը,

Քանի հանգած է դահը, քնի՛ր դու,

Մի զնա հեռուն: Եվ այժմը բոլոր

Աշխատությունը եղծանում է ինչ

Իրագործում է, ուժը ինքն իրեն

Շփոթում ուժով, ուրիմն կնքի՛ր,

Եվ բոլորի վերջ: Էրո՛ս, թագուհի՛,

Գալիս ևմ, էրո՛ս: Սպասի՛ր դու ինձ,

Ուր հոգիները քնում են ծաղկանց
Վրա, ձեռք-ձեռքի մենք պիտի ճեմինք,
Ուրվականներին պիտի հառել տանք,
Եվ Դիդոն և իր էնեասը պիտի
Չոնենան իրենց արբանյակները,
Եվ ողջ մարդկային ընկերությունը
Կլինի մերը։ Ով էրո՞ս, արի'։

Վերամտնում է եռոր։

Եռու—Ի՞նչ է ցանկանում իմ ազնիվ տերը։
Անտոնիոս—Կլեոպատրայի մահվանից ի վեր
Ես ապրեցա մի անպատվության մեջ,
Որ աստվածները դատապարտում են
Իմ ցածությունը։ Ես, որ իմ սրով
Բաժանեցի այս աշխարհը չորս մասի
Եվ Պոսիդոնի կանաչ թիկունքին
Կառուցանեցի քաղաքներ իմ իսկ
Նավերով, ինքս եմ դատապարտում ինձ,
Որ շունեմ ոդին մի կնոջ, նվազ
Վեհոգի, քան կինն այն, որ իր մահվամբ
Ասաց Կեսարին «Իմ անձին միայն
Ես եմ հաղթողը»։ Էրոս, երդվե՛լ ես,
Որ երբ գա հասնի ճնշող պահանջը,
Որը, իսկապես, եկել, հասել է,
Երբ ես իմ հոտե տեսնեմ աարսափի
Ու անպատվության անիրուսափելի
Հետապնդումը, իմ հրամանով
Այն ժամանակ ինձ պիտի սպանես,
Այժըմ սպանի՛ր, եկել է ժամը,
Ինձ զէ, որ, էրոս, դու հարվածում ես,
Այլ Կեսարին ես դու հաղթահարում։
Գույն քեր երեսիդ։

Եռու—Օ՛, աստվածները ինձ հեռու պահեն։
Ե՞ս պետք է անեմ, ինչ պարթևական
Նետերը, թեև թշնամիներ մեղ,

Վրիպեցին և չկարողացան:

Անտոնիոս—Էրո՞ս, կուզեի՞ր, որ դու լինեիր
Մեր մեծ Հռոմի մի լուսամուտում,
Եվ տեսնեիր դու քո տիրոջ՝ այսպիս
Բազկով խաչաձև, իր համակերպող
Վիկոր վայրաճակ, գեմքը մնթակա
Սակող առնոթին, երբ որ անվավոր
Գաճը Կեսարի բախտավոր քաշեն
Նրա առաջից՝ խարանելով նրա
Ստորոտինքունք, որ քաշ է եկել

Էրոս—Չէի ուղենա ևս այդ տեսնել, ահ' ու

Անտոնիոս—Ուրեմբն, արի, քանզի մի վերբով
Ես կդարձանվիմ, օ՛, գուրս քաշիր քո
Այդ պարկեցա սուրբ, որ գործ ևս ածել
Օգտակար կերպով քո երկրի համար:

Էրոս—Տե՛ր իմ, ների՛ր ինձ:

Անտոնիոս—Էրո՞ս, երբ ևս քեզ ազատազրեցի՝
Գու երդում շարի՞ր անել այս բանը,
Երբ հրամայեմ: Արա՛ այդ խկույն,
Թէ ոչ քո նախկին բոլոր սպասներն
Աննապատակ լոկ պատահմունքներ են:
Քաշիր քո սուրբ և մոտեցիր ինձ:

Էրոս—Ուրեմբն զարձրո՞ւ ինձանից ազնիվ
Կերպարանքն այդ, ուր օթևանում է
Խոր պաշտամունքը ամրող աշխարհի:

Անտոնիոս—(Դարձնելով երեսը նրանից) —Քաշի՞ր քո սուրբ:

Էրոս—Սուրբս քաշված է:

Անտոնիոս—Ուրեմբն ի՞նչ բանի համար քաշեցիր՝
Իսկո՞ւյն գործադրիր:

Էրոս—Իմ թանկագին տե՛ր, ով իմ զորապետ
Եվ ով իմ կայսըր, թո՞ւզլ տուր ինձ ասել,
Նախքան արյունոտ այս հարվածումը,
Քեզ գնաս բարով:

Անտոնիոս—Ասվեց: Մնաս բարով:

Էրոս—Գնաս դու բարո՞վ, մեր մեծ զորավար:

Հարովածե՞մ հիմա:
Անտոնիոս—Այո՛, այժմ, էրո՛ս:
Էրոս—Ահա և այսպիս ես կխռուափեմ
Մարկ Անտոնիոսից:

Էրոսը սպանում է իրեն:

Մահվան մորմոքից:

Անտոնիոս—Երիցը աղնիսլ, քան Անտոնիոսը:
Ուսուցանում ես ինձ, քաջ էրոս, որ
ես պետք է արած լինեի, ինչ դու
Զկարողացար, իմ թագուհին և
էրոսը, իրենց քաջ օրինակով
ինձնից ավելի տեղ զրավեցին
Վեհ աղնիլոթյան հիշառավներուամ:
Բայց ես կրառնամ մահվան նոր փեսա
Եվ կվազեմ ես դեպի նա՝ որպես
Սիրուհու մահիճ: Ուրեմբն, արի՛:
Եվ դու ո՞վ էրոս, մենառամ է քո տերն,
Քո աշակերտը: Այսպես անելը
(Բնկնում է իր սրի վրա)

Ուսավ նա քեզնից: Ինչպե՞ս: Չմեռա՞:
Էհե՞յ, պահակը, օ՛, ինձ վերջացրու³³:

Մտնում են Դերկետար և պահակները:

Առաջին պահակ—Ի՞նչ աղմուկ է այս:
Անտոնիոս—Ո՞վ բարեկամմեր, գործըս վաստ արի,
Վերջացրեք, ինչ որ ես սկսեցի:
Երկրորդ պահակ—Ընկել է աստղը:
Առաջին պահակ—Եվ ժամանակը եկել-հասել է
Իր վերջակետին:
Բոլորը—Ավա՛ղ և ավա՛ղ:
Անտոնիոս—Ով աիրում է ինձ՝ թող սպանի ինձ:
Առաջին պահակ—Ո՞չ ես:
Երկրորդ պահակ—Ո՞չ էլ ես:
Երրորդ պահակ—Եվ ո՞չ ոք մեզնից:

33 Պլատոնիոսից:

Թահակները դուրս են զնում:

Գերկետաս — Քո մմա՞ն ու գալիստը Հրամացամ են
Հետևորդներին քո փախուստ տալու,
Եթե Կեսարին մաս այս լուրի Հետ
Ցույց տամ այս սուրբ, նռա ինձ կը նպասի
Սիրադիրությամբ:

Մանում է Գիոմեղեսը:

Դիոմեդես — Անսունիուսն ո՞ւր է:
Գերկետաս — Այնանիդ է, այնանիդ, ով Դիոմեդես
Դիոմեդես — Դեռ կենադանի՛ է:
Զե՞ս սպառաւսիսանի:

Գերկետար դուրս է զնում:

Անտոնիոս — Օ՛, Դիոմեդես, այդտե՞ղ ես, ասա,
Քաշի՛ր քո սուրբ և հարվածի՛ր ինձ,
Որքան որ բավի իմ մահվան համար
Դիոմեդես — Վսիմագույն տեր, Կրեոպատրան,
Իմ տիրուժին, ինձ ուզարկեց քեզ մոտ:
Անտոնիոս — Ե՞րբ ուզարկեց քեզ:
Դիոմեդես — Ճիշտ հիմա, տե՛ր իմ:
Անտոնիոս — Ո՞ւր է նա այժմը:
Դիոմեդես — Այժմ նա փակված է իր գամբարանում:
Նախազգացական մի վախ ունեցավ
Այս պատահածից, քանզի երբ տեսավ —
Մի բան, որ երբեք չի կարող լինել —
Որ կասկածում եք, թե Կեսարի Հետ
Համաձայնվել է, նա լուր ուզարկեց,
Թե ինք մեռել է, բայց անմիջապես
Վախենալով, որ ինչ աղդեցություն
Կարող է գործել, ինձ ուզարկեց ձեզ
Հայտարարելու ճշմարտությունը,
Եվ ես եկել եմ վախենամ՝ շատ ուշ:
Անտոնիոս — Օ՛, այս՛, շատ ուշ, աղնիվ Դիոմեդ,

Կանչի՛ր, խնդրում եմ, կանշի՛ր պահակիս:
Դիրումենս—է՛հե՛յ, պահակնե՛ր, կայսեր պահակներ,
Եկե՛ր, ձեր տերը կանչում է ձեզ, հե՛յ:

Մտնում են շուս կամ ճինք՝ Անտոնիոսի պահակները:

Անտոնիոս—Տարե՛ք ինձ, բարի՛ դուք բարեկամներ,
Ուր Կլեոպատրան գտնվում է այժմ:
Եվ աս ձեր վերջին ժառայությունն է,
Որ հրամայում եմ:

Առաջին պահակ—Վա՛յ մեզ, վա՛յ, տեր իմ, որ դուք շեք կարող
Վերապրել բոլոր ձեր հավատարիմ
Հետևորդները:

Քոլորը—Օր մոռայլագույն:

Անտոնիոս—Օ՛, ո՛չ, բարի՛ իմ բարեկամներ,
Մի՛ զվարճացնեք դժնդակ բախտը,
Պճելով նրան ձեր մորմոքներով,
Մաղթեցեք բարի գալուստ նրան, որ
Գալիս է պատիժ տալու մեզ, և մենք
Պատժած կլինենք նրան՝ թվալով,
Որ մենք կրում ենք այն զվարթորեն:
Վերցրե՛ք ինձ, ես ձեզ առաջնորդել եմ
Հաճախ, տարե՛ք ինձ, իմ բարեկամներ,
Եվ ընդունեցե՛ք իմ մրախտիքը
Բոլորի համար:

Դուս են գնում՝ տանելով Անտոնիոսին:

ՃԵ. ՊԱՏԿԵՐ

Ալեքսանդրիա: Մի դամբարան: Մտնում են Կլեոպատրան
և իր նաժիշտները վերև, Շարմիան և Խրափ միասին:

Կլեոպատրա—Օ՛, Շարմիան, ես այստեղից երրեք
Չպիտի դուքս գամձ:
Շարմիան—Սիրելի՛ արկին, միսիթարվեցե՛ք:

Կլեոպատրա—Ռ' չ, ո' չ, շիմ տւղոամ:

Բայոր գելքիերը խիստ տարօրինաւկ
Եվ ասրաւափելի թող իմած բարի դան,
Արհամարհում մեց միտիթարանքը,
Իմ ցառի ջամփը, համեմատած իմ
Գատին, պետք է որ լինի այնքան մեծ,
Որքան որ ինքն է:

Ներևում, մանում է Դիոմեյեսը:

Ի՞նչ կա, մեռած է:

Դիոմեյես—Մա՞ր շրջում է նրան վիրեւում,
Բայց դեռ մեռած չէ: Եւշք դարձրեք դուք,
Չեր դամբարանի մի տորիշ կողմից,
Բերում հն նրան իր պահակները:

Ներևում՝ բերում են պահակներն Անտոնիոսին:

Կլեոպատրա—Ռ' զ արե, այլի՛ր այն մեծ որորուը,
Որում շարժվում ես և թող խավարում
Կանգ առնի երկրի աստղն հարավուփոխ:
Ռ' զ Անտոնիոս, ո՞վ Անտոնիոս,
Օգնի՛ր, Շարմիա՛ն, օ՛, օգնի՛ր, իրա՛ս,
Օգնեցի՛ք, բարի՛ բարեկամներ, որ
Կանգնած եք ներքե, բիրիլու նրան
Մինչև վերեւ:

Անտոնիոս—Օ՛, հանգստացեք, ոչ թե Կեսարի
Արիությունն էր, որ գետին զցեց
Անտոնիոսին, այլ Անտոնիոսի
Արիությունն էր, որ հաղթեց իրեն:

Կլեոպատրա—Եվ հնաց այդպես էլ դա պիտի լիներ,
Որ ո՛չ որ, բացի Անտոնիոսից,
Պիտ հաղթանակեր Անտոնիոսին,
Բայց վա՛յ, այդպես է:

Անտոնիոս—Ահա մեռնում եմ, ո՞վ Եղիպատուհի,
Ահա մեռնում եմ, միայն խնդրում եմ,

Որ այտտեղ մահը մի քիչ համենա,
Մինչև ես դնեմ քո շրթումքներին
Խղճուկ հետինը բյուր հազարավոր
իմ համբույրների:

Կլեպատրա—Չեմ համարձակվում, օ՛ իմ սիրելիս...

(Սիրելի տե՛ր իմ, ներիր, սիրելի՛ս),
Չեմ համարձակվում՝ որ շըբռնվեմ:
Բախտով առցցում Կեսարի խրոխտ
Հանդեսը երբեք շպիտի ինձմով
Գոհաբազարդլի, եթե դաշույնը,
Դեղան յոթերը և օձերն ունեն
Կամ սայր, կամ խայթոց, կամ աղդեցություն՝
Ես ապահով եմ: Քո կին Օկտավիան,
Համեստ աշքերով և հանդարտաբարո
Վճռականությամբ շպիտի ձեռք բերի
Պատիվը լրջմիտ վրաս նայելու:
Արի՛, Անտոնիոս, արի՛, օգնեցե՛ք,
Օ՛ն, իմ նաֆիշտներ, վեր պետք է քաշենք
Նրան, օգնեցե՛ք, իմ բարեկամնե՛ր:

Անտոնիոս—Օ՛, արա՛գ, արա՛գ, թե ոչ մեռնում եմ:
Կլեպատրա—Իսկական սպորտ, ինչքան ծանրորեն

Կշռում է տերն իմ, մեր ամբողջ ուժը
Վասնըված է այն վշտակրության մեջ,
Որ ծանրամում է: Թե ունենայի
Ուժն Հերայի մեծ, Հերմեսն հղորաթե
Կրերեր քեզ վեր, կրազմեցներ
Կողքն Արամազդի: Մի քիչ էլ արի՛:
Ցանկացողները միշտ հիմարներ են:
Օ, արի՛, արի՛, արի՛, օ՛, ա՛րի:

Բարձրացնում են Անտոնիոսին Կլեպատրայի մատ:

Եվ բարի եկար, օ՛, բարի եկար,
Մեռիր դու այլտեղ, որտեղ ապրել ես,
Մնա՛ կենդանի դու համբուրելով:

Թե ունենային իմ շրթունքները
Այդ զորովյունը, ևս կսպառի
Նրանց այսպիսով!

Քոլոր—Տիտր տեսարան:

Անտոնիոս—Ահա մեռնում եմ, ո՞վ Եպիպառւհի,

Ահա մեռնում եմ, ամի՞ք ինձ պինի,
Եվ թույլ տվեր, որ ես խռում մի փիչ:

Կիեոպատրա—Ո՞չ, թող ե՞ս խռում և թող հայհոյիմ

Այնքան բարձրապես, որ Յախար, այդ կեղծ

Ու թեթևաբարս կիմը կուրի իր

Անիմը, պրովոված իմ անարդանքից:

Անտոնիոս—Միմիայն մի բառ, իմ քա՛զը թագուհի,

Կեսարից հայցիր քո պատիվն ու քո

Ապահովամբ անձնական կյանքի:

Կիեոպատրա—Ես մեկուազ ջեն տնում միտուին:

Անտոնիոս—Ազնի՛վ թագուհի, ինձ մտի՛կ արա,

Կեսարի շուրջը եղող մարդկանցից

Պոկուբախն միմայն վատահի՛ր:

Կիեոպատրա—Ես վստահում եմ իմ վճռին ու իմ

Չեռներին և ո՞չ Կեսարի շուրջը

· Որևէ մարդու

Անտոնիոս—Մի՛ ողբա և մի երթեր վշտակրիր

Այն թշվառական փոփոխությունը,

Որ իմ վախճանին չոքել է վրաս,

Այլ հաճոյացրո՛ւ քո խորհուրդները՝

Սնուցանելով նրանց իմ նախկին

Բախտով, որի մեջ ապրեցա՝ իրրե

Մեծագույն փշխանն այս երկրագնդի

Եվ ազնվագույնը: Եվ ահա այժըմ

Ես ստորաբար չեմ, որ մեռնում եմ

Եվ վախկոտությամբ չեմ, որ հանում եմ

Եմ սաղավարտը մի հայրենակցու,

Այլ հանում իբրև մի Հռոմեացի,

Որ հաղթահարվեց անվեհերորդին

Մի Հռոմեացուց: Ահա զնում է

Եմ ոգին, է՛լ չեմ կարող ես տոկալ...

Կլեոպատրա—Օ՛, բոլոր մարդկանց ազնվագույնը.

Ուզում ես մեռնե՞լ, չե՞ա մտահոգվում

Էլ դու փմ մասին, մնա՞մ արդյոք ես

Մռայլ աշխարհում, որ երբ դու չկաս,

Ավելի լավ չէ, քան խողանոցը:

Տեսեք, նաժիշտներ:

Անտոնիոսը մեռնում է:

Հալվեց պսակը այս երկրագնդի:

Իմ տե՛ր, օ՛, թոշնեց ծաղկեպսակը

Ռազմի, խորտակվեց սլունը զինվորի,

Դեռատի տղայք և աղջիկները

Այժմ հավասար են տղամարդկանց հետ,

Գերական գնաց, շմեաց ոշինչ՝

Նշանակելի՝ հյուր լուսնի ներքո:

Չարմիան—Օ՛, հանգստացե՛ք, բարի՛ տիրուհի:

Իրաս—Նա էլ մեռավ, մեր վեհապետուհին:

Չարմիան—Տիրուհի՛:

Իրաս—Տիկի՛ն:

Չարմիան—Օ՛, տիկին, տիկին:

Իրաս—Օ՛, արքայական դու Եգիպտուհի,

Օ՛, դու կայսրուհի:

Չարմիան—Օ՛, լոիր, իրա՛ա:

Կլեոպատրա—Ես լոկ մի կին եմ և ենթարկված

Այնպիսի թշվառ կրավորանքի,

Ինչպես կթող կին, որ վատթարագույն

Գործեր է անուած: Ինձ վայելում է

Նետել մականն իմ անիրավ, անարդ

Այն աստվածներին, առելու նրանց,

Որ այս աշխարհը ճիշտ հավասար էր

Իրենց աշխարհին՝ մինչև գողացան

Սեր շող գոհարը: Ամեն ինչ ոչի՞նչ:

Համբերությունը հիմարություն է,

Այնել անհամբեր վայել է միայն

Կատաղած շանը, որիմըն մե՞զք է
Շտապել մահվան տունը թաքթաքուն,
Առաջ քան մահը կհամարձակվի
Հափշտակել մազ ի՞նչպես եք, կանայք,
Ի՞նչ կա, հրճվեցի՞ք ի՞նչ կա, Շարժիան,
Իմ ազնիով աղջկերը, օ՛, կանա'յք, կանա'յք,
Տեսեք, մեր լամպը հատել է արդեն,
Հանգել է, մարել

(Ներմեռում կեցող պահակներին)

Բարի՛ պարսններ,
Սրտապնդվեցեք, կթաղենը նրան
Եվ ապա ինձ որ ընտիր է, ազնիվ,
Կկատարենք բատ հոռմեական
Վեհ սովորության և կդարձընենք
Մահը հպարտ մեղ հափշտակելու
Գնա'նք, պատյանը վիթխարի հոգու
Այժըմ առած է, օ՛, կանա'յք, կանա'յք
Եկե՛ք, մենք ո՛չ մի բարեկամ չունենք,
Բացի վճռական արիությունից
Եվ բացի մահից, որ շուտով կդաւ:

Գուրս են զնում: Խրանք, որ զանվում են վերեւուր,
տանում են Անտոնիոսի մարմինը:

Ա. Ր Ա. Ր ՀԻՆԳԵՐՈՐԴ

Ա. Պ Ա. Տ Կ Ե Ր

Ակեսանդրիա: Կեսարի բանակատեղը:

Մտնում են Կեսարը, Ագրիպպան, Դոլարելլան, Մեկենասը,
Գալլոսը, Պրոկոպիոսը և ուրիշներ:

Կեսար—Դոլարելլա, դու գնա նրա մոտ
Եվ պատովիրիր, որ անձնատուր լինի,
Այսքան զըթկըլած, ասա դու նրան՝
Վարանումներն իր լոկ կատակներ են:

Դոլարելլա—Գնում եմ, Կեսա՛ր:

Գնում է դուս:

Մտնում է Դերկետասը՝ Անտոնիոսի սուրբ հետք:

Կեսար—Ի՞նչ է այս բանը և դու ինքդ ո՞վ ես,
Որ հանդգնում ես երեալ այսպես:

Դերկետաս—Ինձ անվանում են Դերկետաս, տե՛ր իմ,

Սառայում էի ես Անտոնիոսին.

Որ արժանագույնն էր ամենից լավ

Սպասարկության: Քանի կանգուն էր,

Խոսում՝ իմ պետն էր, ես կզոհեի

Իմ կյանքը՝ նրան ատողների դեմ,

Թի դու հաճես իմձ ընդունել քեզ մոտ,

Ինչպես որ էի նրան՝ կլինեմ

Նույնը Կեսարին, եթե չես հաճի՝

Ես կհանձնեմ քեզ իմ ամբողջ կյանքը:

Կեսար—Ի՞նչ ես ասում դու:

ԳԵՐԼԵՏԱՍԱ—ՄԵԽԱՎԵԼ, ո՞վ, ԿԵՆԱՐ, ԱՆԱՐԵՆԻՌԱՐԻ

ԿԵՆԱՐ—ԱՆԵԼՈՎԱՆԻ այսպիսի մէկ խոշոր բանի

Պիտի արձակեր ավելի խոշոր

Մի գոռառմ-գոչում, կըսր աշխարհը

Պիտի ցնցրիկեր և առցուծները

Դեպի բաղարփի փողոցները և

Քաղաքացիներ՝ սրջերը նրանց³⁴,

Մա՞ն Անտոնիոսի հասարակ տեղիք

Մի պատահար չէ, այդ անունն իր մեջ

Պարունակուած է աշխարհի մեսը:

ԳԵՐԼԵՏԱՍԱ—ԿԵՆԱՐ, մեռավ նա ոչ արդարության

Հանրացին սրով, ոչ էլ մի սլարձու

Պաշույնով, այլ իր աեփական ձեռքով,

Այն ձեռքով, որով նա զբել էր իր

Պատմիվը գործած արարքների մեջ,

Այն քաջությամբը, որ սիրան ընձեռեց,

Բգկանեց սիրուր Ահա նրա սուրբ,

Խեցի վերբից, ահ՛ս, ներկրված է

Ամենից ապնիվ նրա արյունով:

ԿԵՆԱՐ—Երևոամ եք տիտոր, ո՞վ բարեկամներ,

Թող աստվածները խստիվ ինձ պատժեն,

Եթե այս լուրը շարտառվակալերը

Աչքն արքաների:

Ազրիպա—Եվ տարօրինակ է, որ բընությունը

Պիտք է հարկադրի մեզ ոզր անելու

Մեր արարքներում ամենահաստատ:

ՄԵԼԵՆԱՍԱ—Երա արատը և արժանիքը

Հավասար էին:

Ազրիպա—Երբեք ավելի հազվագյուտ ոգի

Զի կառավարել այս մարդկությունը,

Բայց դուք, աստվածներ, կտաք մեզ մի քիչ

³⁴ Այս պարբերությունն առիթ է տվել մեծ և երկարատև վեճի: Մի բան Հիշտ է ըստ շեքսափերագետների, որ այսուղ պակասում է մի բայ, թե ինչ է այդ բայը՝ ոչ մի եղբակացություն, մենք թարգմանեցինք այնպես, ինչպես բնագիրն է, առանց որևէ բայ հնարելու մեր կողմից:

Պակասություն մեղ մարդ դարձնելու
Կեսարն հուզված է:
Երբ որ այսպիսի մի մեծ հայելի
Դրված է նրա առաջ, նա ունի
Հարկավորություն՝ տեսնելու իրեն:
Կեսար—Ո՞վ Անտոնիոս, հետապնդեցի
Ես քեզ մինչև այս, բայց մենք մեր մարմնից
Կվիրածերձենք հիվանդ ախտերը:
Ես բռնադատված էի ցուց տալու
Քեզ մի արևմար և կամ դիտելու
Քո արևմարը, մենք չէինք կարող
Երկոսս միասին բնակել աշխարհում:
Բայց այսուհանդերձ թույլ տվեք ողբալ
Այնքան գերակա արտասուբներով,
Որքան սրտերի բոսոր արյունը:
Իմ եղբա՛յր և իմ մրցակի՛ց բոլոր
Չեռնարկումների վսեմ հղացման,
Իմ լժակիցը այս կայսրության մեջ,
Բարեկամ, ընկեր ռազմաճակատում,
Բազո՛ւկ իմ մարմնի, և սիրոտ, որի մեջ
Սիրտն իմ սեփական՝ բոցավառում էր
Նրա խոհերը, և առա այժմ
Մեր աստղերն անհաշտ պիտի բաժնեին
Իրարից այսպես մեր բախտն հավասար
Լսեցե՛ք դուք ինձ, ո՞վ բարեկամներ,—

(Մտնում է մի եզիպտացի)

Բայց ես ձեզ կասեմ ավելի հարմար
Պահին, այս մարդու արտաքին տեսքում
Երեսում է իր պարտականությունն,
Մտիկ անենք մենք, թե ինչ է ասում:
Ո՞րտեղից եք դուք:
Եզիպտացի—Մի եզիպտացի խղճուկ ու աղքատը
Իմ տեր թագուհին, փակված այն միակ
Բանում, որ ունի, իր դամբարանում,

Ցանկանում է ձեր միաբը խմանալ,
Որ ընթիւ պատրաստ, գունել այն ուղին,
Որը առփակված նա սրբոք է քոնիւ
Դիսար—Պատվիրի՛ր նրան, ար վսաւո՞ ընկի,
Ծուռով մեղանձից մեկի միջոցով
Կիմանա, թե ինչ պատվավոր մարմունք
Եվ բարյացակամ կամ հցողության
Վերապահել ենք մենք նրա համար,
Քանզի Կիսարը շի կարող ապրել
Եվ չլինել ազնիվ:

Եզիպտացի—Աստվածները քեզ պահեն պահպանեն:

Գուրս է գնում:

Դիսար—Արի՛, մոտեցի՛ր, Պրոկուլես:
Գնա՛ և ասա՛ Կլեոպատրային,
Թի միտում շունենք մենք նախատելու,
Սփոփիր նրան այնքան, որքան իր
Վշախ որակի պահանջ է զգում,
Որ շինի թե Հպարտության մեջ
Ինչ որ մահացու մի հարվածով մեղ
Խարի ու փախչի, վասնդի նրա
Ապրելն Հոռոմում պիտի լինի մեր
Հավիտենական հաղթական տոնը:
Գնա՛ և լո՛ւր բեր այնքան շուտափութ,
Որ կարելի է՝ թե ինչ է ասում
Եվ թե գու նրան ինչպես ես գտնում:
Պրոկուլես—Կիսա՛ր, գնում հմ:

Գուրս է գնում:

Կիսար—Գալլո՛ս, միասին:

Գուրս է գնում:
Ուր է Պոլարելան, Պրոկուլեսին
Փոխանորդելու:
Ազրիալա և Մեկենաս—Պոլարելա՛:

Կեսար—Թող' մնա, քանզի հիշում իմ այժըմ,
Թե ինչ գործի է, նա ժամանակին
Պատրաստ կլինի: Դուք և կ' ինձ հետ
Դեպի վրանն իմ, որտեղ կտեսնեք
Ի՞նչ դժվարությամբ ես քարզ տրվեցի
Դեպի այս ռազմը, թե որքան խաղաղ
Եւ փափով էի իմ նումակներում:
Եկեք դուք ինձ հետ և տեսեք, թե ինչ
Կարող եմ ցույց տալ այս խնդրի մասին:

Դուս են զնում:

Բ. Պ. Ա. Տ Կ Ե Ր

Ալեքսանդրիա: Դամբարանը: Վերեսում՝ մտնում են
Կլոպատրան, Շարմիանը և Խրաբը:

Կլեոպատրա—Հուսահատությունն իմ ակտում է
Լավացնել կյանքը:
Կեսար լինելը մի գծուժ բան է,
Զլինմլով Բախտող, նա որանուամ է միայն
Բախտի ստրուկը, նրա կամքի մի
Պաշտոնատարը, վաճեմ է անել
Այն բանը, որ վերջ կդնի բոլոր
Այլ արարքներին, որ շղթայուամ է
Պատահմունքները, և որ նկատուամ է
Փոփոխությունը և որ քնուամ է,
Որ չի ճաշակուամ կենդանու ծիծը,
Ստնտուն մուգողի և Կեսարների:

Խերեսում՝ մտնում են Պրոկովեսը, Գալլուր
և զինվաներ:

Պրոկովես—Կեսարն հղում է ողջույն թագուհուն
Եղիսպոտաի, և առաջարկուամ է
Մտածել, թե ինչ արդար պահանջներ

Յաճկանում է, որ նա քեզ շնորհի:

Կլեոպատրա—Քո ամսունն ի՞նչ է:

Պրոկրիս—Պրոկրիսոս:

Կլեոպատրա—Խնձ Անտոնիոսը խռովոց քո մասին:

Եվ իսորթով առվեց քեզ ապավինել,

Թայց վար Հովու չէ, որ խարված լինեմ:

Պատր ջամանաբառ ապավինելու:

Եթե քո տերը ցանկանում է մի

Թարգումի լինի իր մուրացկանը,

Դու պետք է առես, որ մի միշտափաս:

Պրովեազի պահի վայելությունը,

Զգեստք է մուրա ավելի պակաս:

Քան թե մի ամբողջ թագավորություն:

Եթե քո տերը ուզում է պարուված

Եպիստոտը տալ իմ տրու համար:

Տիած կլինի իմ սեփականից

Այնքան շատ, որքան կրավարարվեմ

Եվ ծնկի կդամ շնորհակալությամբ

Քո տիրոջ առաջ:

Պրոկրիս—Ուզախ եղիք դու, զի դու քննել ես

Իշխանավայիլ մի գույզ ձեռքի մեջ,

Եվ մի՛ վախենա դու ո՛չ մի բանից,

Եվ հնթարկի՛ր դու քո խնդիրները

Համարձակորեն իմ տիրոջ առաջ:

Նա լի է շնորհով, որ հորդում է այն

Բոլորի վրա, տրնդ պետք ունին,

Թո՛ւմ տուր հաղորդեմ իմ տիրոջ քո բաղցը:

Համակերպումը, և դու կդանես

Մի աշխարհակալ, որի բարությունն

Օգուտ կրերի, երբ նրա առաջ

Շնորհի համար երկրպագում են:

Կլեոպատրա—Ասա՛ դու նրան, աղերսում եմ քեզ,

Որ ես իր բախտի ճորտն եմ և նրան

Վերադարձնում եմ այն մեծությունը,

Որ նա ձեռք բերեց: Ամեն մի ժամու

Ես սովորում եմ հնաղանդության

Արտեատը և ես մեծ ուրախությամբ
 Կուղեի տեսնել նրան դեմ առ դեմ:
 Պրոկովեոս—Կաղորդեմ այս, սիրելի՛ տիկին,
 Եկ վստահ եղիր, քանզի ես գիտեմ,
 Որ կարեկցում է նա քո վիճակին,
 Թեպետ ինք վնանի դրա պատճառը:
 Գալոս—Տեսնո՞մ ես ինչպես հեշտ է գրավել:

Պրակավեոս և պահակներից երկուար քարձանում են դամբարանն
 մի սանդուխով և անցնում են Կլեոպատրայի ետեր: Պահակներից
 մի ժամփար վերցնում են ճիգեր և բաց են անում դռները, երեան
 բերելով դամբարանի ներքեմ սենյակը:

(Պրոկովեոսին և պահակներին)

Հսկեցե՛ք մինչև Կեսարը Կասնի³⁵:

Դուքս է գնում:

Իրաս—Օ՛, իմ թագուհի:
 Շարմիան—Օ՛, Կլեոպատրա, օ՛, իմ թագուհի,
 Դու բանտարկված ես:
 Կլեոպատրա—Օ՛, արա՛գ, արա՛գ, բարերա՛ր ձեռներ:

Թաշում է մի դաշույն:

Պրոկովեոս—Կացե՛ք, տիրուհի՛, մի՛ անիրավեք
 Դուք ձեզ այս ձեռվ, ահա եկել եմ
 Ձեզ աղատելու, ոչ թե մատնելու:
 Կլեոպատրա—Ազատել մահի՛ց, որ մեր շները
 Փրկում է հյուծից:
 Պրոկովեոս—Կլեոպա՛տրա, մի՛ եղծանեք իմ
 Տիրոջ բարությունն՝ ավերելով ձեզ,
 Թո՛ղ աշխարհ տեսնի ազնվությունն իր
 Լավ իրագործված, մի ազնվություն,

35 Այս դեպքն ամբողջովին համապատասխանում է Պլուտարքոսի պատմության:

Որ անկարելի է ձեր մահով ցույց տալ
Կլեոպատրա—Ռ' բանդ ես սու, մա՛հ, արի՛, օ՛, արի,
Արի՛, արի՛, շուտ, ա՛ռ մի թագուհի,
Որ արժե բազում, քաղում մանուկներ
Եվ մուրացկաններ:

Պրոկովենս—Եղե՛ք պազարյուն:
Կլեոպատրա—Մինյո՛ր, վեմ ուտի, ախնյո՛ր, չեմ խմի,
Եթե հարկ լինի անոտի խոսքը՝
Ես չեմ էլ քնի ես կըխորտակեմ
Այս մահկանացու բնակարանը,
Թող Կեսարն անի ինչ որ կարող է:
Իմացի՛ր, ախնյո՛ր, չե՞ս սպասարկի
Ես թեակաղ՝ ձեր ափրոշ սպալատում,
Ո՛չ Քե կենթարկվեմ դութ Օկտավիայի
Ազգու նայվածքի արքապատճենին:
Նրանք վերամբարձ տանե՞ն ինձ, ցո՞ւց տան
Գոռում-գոշասեր խուժանին Հոռոմի
Նենդ ու խծրծոց ես նախընտրում եմ
Եզրակացնի մեջ մի փոս ինձ լինի
Մի գողարիկ շիրիմ, ես նախընտրում եմ
Նեղոսի ափզմում պառկել մորեմերկ
Եվ շրաճանճերն ինձ որդով լցնեն
Գարշելիորեն, ես նախընտրում եմ
Գարձնել իմ երկրի պիրամիզները
Իմ կախաղանը և կախվել այնտեղ
Շղթաների մեջ:

Պրոկովենս—Ընդարձակում եք դուք այս սարսափի
Խոհերն ավելի, քան դուք կդանեք
Պատճառ Կեսարում:

Մտնում է Դոլարելլան:

Դոլարելլա—Պրոկովենս, ինչ որ արել ես,
Քո տեր Կեսարը զիտե, և ա՞ս
Նա քեզ կանչում է, գալով թագուհուն
Ես ինքս կդանամ նրա պահակը:

Պրոկովես—Լա՛վ, Դոլաբե՛լլա, դա գո՞հ կթողնի
ինձ լավագույնըս, մեղմ վարվիր հետք:

(Կեռպատրային)

Ես պիտի խոսեմ Կեսարին ինչ որ
Զեզ հաճելի է, եթե իմ վրա
Հնեք պաշտօնն այդ:
Կեռպատրա—Ասա դու նրան՝ կուզիի մեռնել:

Դուս են զնում Պրոկովեսը և զինվորները:

Դոլաբելլա—Ամենից ազնիվ կայսրունի, լսե՞լ եք
Արդյոք իմ մատին:
Կեռպատրա—Զեմ կարող ասել:
Դոլաբելլա—Ապահովաբար ինձ ճանաշում եք:
Կեռպատրա—Ի՞նչ փուլթ, սինյո՛ր, թե ես լսել եմ,
Կամ ճանաշում եմ, դուք ծիծառում եք,
Երբ տղաները և կամ թե կանայք
Պատմում են իրենց տեսած իրազը:
Այդ չէ՞ արդյոք քո առվորությունը:
Դոլաբելլա—Զեմ ըմբռնում, տիկի՞ն:

Կեռպատրա—Երազ տեսա՝ կար մի Անտոնիոս կայսր,
Օ՛, մի այդպիսի տրիշ մի քոն, որ
Կարողանացի տեսնել այդպիսի
Մի տրիշ մարդ էլ:

Դոլաբելլա—Թե դա կարող է քեզ հաճո լինել—
Կեռպատրա—Նրա երեսն էր նման երկնքի,
Որտեղ մի լուսին և մի արեգակ
Հաստատված էին և վարում էին
Իրենց ընթացքը և լուսավորում
Փոքր Օ-ն, երկիրն այս:

Դոլաբելլա—Օ՛, վեհ արարած...
Կեռպատրա—Օ՛, նա ստանում էր օվկիանի վրայից,
Թևն իր բարձրացված զինանշանն էր
Աշխարհի, ձայնը, երբ նա խոսում էր

Թարեկամներին, հատկությունն ուներ
Բոլոր գնդապաշն և բնագնդերի,
Բայց երբ ուրսում էր ընկճել ու սարսել
Այս երթառագումոքը, նա մընչում էր
Ի՞ւսպես որոտը: Զկար ձմեռ նրա
Բարության մեջ, այլ վար մի աշուն;
Որ տառմանում էր ասվերի հնձով,
Նրա բերկամներն էին պիրթ ողբին,
Որ ցոյց է սալիս վր ողնաշարը
Այն առարերից վեր, որտեղ ապրում է,
Նրա ծառայի համազգեստներով
Ճեմում էին մեծ և փոքր արքաներ,
Եվ թափվում էին նրա զրապանից
Թագավորությունը և կղզիք որպես
Արծաթյա փողեր:

Դոլարելլա—Կիեռպատրա՛...

Կիեռպատրա—Դու կարծո՞ւմ ես, որ եղել է և կամ
Կարող է լինել այդպիսի մի մարդ,

Որ երազել եմ:

Դոլարելլա—Ազնի՛վ տիկին, ո՛չ:

Կիեռպատրա—Օ՛, գուք ստում եք այն աստիճանի,
Որ լուրն հասնում է մեր աստվածներին:

Իսկ թե եղել է կամ եղած լինի

Այդպիսի մի մարդ՝ արդեն անցնում է

Երազի շափից, բնության պակսում է

Նյութ՝ մրցակցելու մտապատկերով

Նոր ձեւերի հետ, սակայն և այնպես

Երեակայել մի Անտոնիոս, որ

Գլուխգործոցն էր բնության՝ ընդդեմ

Մտահղացման, արհամարհելով

Կատարելապես բաներն էաղուրկ:

Դոլարելլա—Լսեց՞ք դուք ինձ, բարի տիրուշի.

Զեր կորուստն այնքան մեծ է, որքան դուք,

Եվ կրոամ եք այդ՝ համապատասխան

Ալդ ծանրությանը: Ես երբեք հասնել

Զկարողանայի իմ հետապնդած

Հաջողության, եթե չեմ զգում,
Մի վիշտ ձեր վշտի անդրադարձումով,
Որ հարվածում է սիրտն իմ արմատից:
Ալեռպատրա—Ռ', պարո՞ն, ևս քեզ զնորհակալ եմ,
Իմացի՛ր, Կեսարն ի՞նչ մտադրություն
Ունի իմ մարմին:

Դոլաբելլա—Դժկամակում եմ ասելու ձեզ այն,
Ինչ կուգենայի, որ իմանայիք:

Ալեռպատրա—Սինյո՛ր, խմբում եմ:

Դոլաբելլա—Ինչքան պատվավոր էլ որ նա լինի...
Ալեռպատրա—Ռուեմըն նա պիտի առաջնորդի ինձ

Դասպի հաղթառում:

Դոլաբելլա—Այո՛, տիրուհի՛, ես այդ լավ գիտեմ:

Մի ձայն ներսից—Ճանապարհ տվե՛ք, Կեսարն է գալիս:

Մտնում են Կեսարը, Գալլոսը, Պրոկոպիոսը,
Մեկնասը, Սելեկոսը և նետարդներ:

Կեսար—Ռ' ին է թագուհին այս Եգիպտոսի:

Դոլաբելլա—Կայսրն է, տիրուհի՛:

Ալեռպատրան ծերադրում է:

Կեսար—Վեր կա՛ց, բարձրացի՛ր, չպետք է չոքես,
Վեր կա՛ց, խնդրում եմ, ո՞վ դո՛ւ Եգիպտոս:

Ալեռպատրա—Աստվածներն այսպես կամենում են, տե՛ր,
Ես պետք է վիճեմ տիրոց հնագանդ:

Կեսար—Մի անուցանիր քեզ խիստ խորհրդով,
Թիպետև հուշը քո վնասների

Արձանագրված է մեր մահ մեջ,

Բայց մենք կհրշենք այդ իբրև մի բան,

Որ պատահել է միայն տիպվածով:

Ալեռպատրա—Երկրի միա՛կ տեր, չեմ կարող ցույց տալ
Դատն իմ սեփական այնքան լավ, որքան

Որ պարզ երևի, սակայն և այնպես

Խոստովանում եմ, բեռնավորված եմ

Եղել մոլությամբ, որ առաջ հաճախ

Ազնամարշար մն արել իմ սհուրի

Կիսար—Ո՞վ! Կրծոպատրա, վաճացիք, որ ամենը

Պիտի նախաընտրենք նվազեցը ընկել,

Քան մեծացրենք, նեթե դու շարժվես

Ըստ մեր մրտքիքի,— որոնք դեպի քեզ

Աղջակագոյնն են,— ուստ որիափ դանձես

Այս փոփոխման մեջ մի շահ ու բարիք,

Սակայն նեթե դու ևս իմաստ

Բռնելու ընթացքն Անառնելուսի,

Ինձ մեծագործության մեջ,

Դու պիտի զրկիլու վամ բարքացակամ

Մասպրությունից և մատնես քո իսկ

Երեխաններին այն կործանումին,

Որից ուրում մատ ազատել նրանց,

Եթե այդ մասին դու ունես հավատք:

Ես հնանում եմ:

Կիենպատրա—Կարող եք գնալ ողջ աշխարհով մեկ,

Դա ձերմ է, փոք մենք, ձեր վահանակներն

Ու ձեր հաղթության նշանացուցերն

Պիտի տատանվինք, որտեղ դուք ուզեք:

Ահա, բարի տե՛ր!

Կիսար—Ինչ պատկանում է Կիենպատրային՝

Կընդունեմ միայն ձեր խորհուրդները:

Կիենպատրա—(Տալով եւան մի կլուած քուր) Յ

Այս կարճ հաշիվն է սփողի, արծաթի

Եվ դոհարների որ ես ինքս ունեմ,

Շատ ճշգրտորեն գնահատված են,

Բացի մի քանի շնչին բաներից:

Սեղկուն ո՞ւր է:

Սեղկուն—Այստեղ եմ, տիկին:

Կիենպատրա—Իմ գանձապահն է, թո՞ղ նա վկայի,

Իր կյանքի գնով, թե արդյոք ես ինձ

36 Կիենպատրայի ժամանակ դեռևս գոյություն չուներ զրբի կամ՝ որևէ զրության այժմյան էշային ձեր, ինչքան երկար լիներ զրությունը, այնքան երկար թղթի վրա գրում էին և կլորում:

Վերապահե՞լ եմ որևիցե բան:
Ասա, Սելեկոս, ճշմարտությունը:
Սելլկոս—Ես նախքնարում եմ, տիկի'ն, ավելի
Կնքել շրթներըս, քան կյանքիս դմուլ
Ասել ինչ որ չէ ճշմարտությունը:
Կլեոպատրա—Ի՞նչ եմ ես պահել
Սելլկոս—Այնքան բան, որքան կարող եք գնել
Ինչը այս հայտնել եք:
Կեսար—Ո՛չ, մի՛ կարմրեք, Կլեոպատրա,
Ես հավանում եմ իմաստությունը
Զեր այդ արարում:
Կլեոպատրա—Տեսե՛ք, ո՛վ Կեսար, տեսե՛ք թե ինչպե՛ս
Մարդիկ վազում են շուրի ետևից,
Իմ ծառաներն այժմ ձերը կլինեն,
Եվ եթե փոխենք մենք մեր վիճակը,
Զերը փոխարարձ իմը կդառնա,
Ապերախտությունն այս Աելլկոսի
Ինձ իսկապես որ գաղան է դարձնում,
Ո՛վ ստրուկ, որի վատահությունը
Այնքան խարող է, քան վարձու մերը:
Ի՞նչ, ե՞տ ես գնում, պետք է ետ գնաս,
Բայց ես կրոնեմ, վստահացնում եմ:
Քո այդ աշքերը, թեև թևավոր:
Ստրուկ, անհոգի արիկա, շնիկ,
Ո՛վ հազվագյո՛ստ ցած:

Կեսար—Բարի՛ թագուհի, թո՛ղ ձեզ աղերսենք:
Կլեոպատրա—Ո՛վ Կեսար, ի՞նչ մի խոցող ամոթ է
Քո առաջ, մրգ դու զիջում ես այստեղ
Ինձ այցի գալու՝ պատսվելով ինձ պես
Մեկին այնքան հեզ, իմ սպասարկուն
Ավելացնի իմ նախատինքների
Հանրագումարին իր նենգությունը:
Բարեգութ Կեսա՛ր, ասենք պահել եմ
Մի շարք կանացի սնոտի բաներ,
Փուշ խաղալիքներ, այնպիսի արժեք
Ունեցող բաներ, որոնցմով մենք մեր

Նոր բարեկամներին վարձատրում ենք,
Եվ ասենք, որ Խո մի քեզ թանկարժեք
Նշան Խօ պահել կայիշ համար
Եվ Օկտոպայից՝ մղերու նրանց
Հաշտարարության, Պէտք էր մերկացներ
Ինձ մի մարդ, որին ես կերակրել մոմ:
Ո՞վ դուք ասավածներ, սա հարվածում է
Ինձ առելի վառ, քան իոն անկումը:

(Սելեկոսին)

Կորի՛ր խնդրում եմ, թե ոչ ցույց կտամ
Կայձերը հագուս իմ բախտի մոխրում:
Թի լինեիր մարդ՝ կոթայիր ինձ:
Կեսար—Գնա՛, Սելեկոս:

Դուս է զնում Սելեկոսը:

Կլեոպատրա—Թող իմացվի, որ մենք, վեհադույններս,
Մեղաղրվում ենք այլ մարդկանց արած
Դործերի համար և, երբ ընկնում ենք,
Կրում ենք այլոց արժան պատիժը
Մեր անձի վրա:
Կեսար—Կեռպա՛տրա, ինչ որ պահել եք,
Կամ հայտնի արել՝ չենք արձանագրում
Մեր հաղթանակի հաշվեմատյանում,
Թող պատկանի ձեզ, գործադրեցեք այն
Ինչպես ուզում եք, և հավատացեք,
Որ Կեսարը մի վաճառական չէ,
Որ սակարկություն անի ձեզ հետ այն
հնդրի համար որ վաճառում են
Վաճառականներն, ուստի զվարթացեք
Եվ մի բանտարկվեք ձեր խոհերի մեջ,
Ո՛չ թա՛նկ թագուհի, վասնդի ունենք
Մենք մտադրություն այնպես վարվելու
Զեղ հետ, ինչպես գուք խորհուրդ եք տալիս:

Կերեք և քնիք: Մեր հոգս ու գութը
Կենտրոնացած են այնքան ձեզ վլրա,
Որ մենք մնում ենք ձեր բարեկամը:
Է՛տ, մնաք բարո՞վ:

Կլեապատրա—Ի՞մ պետ և ի՞մ տեր:
Կեսար—Այդպես մի՛ կոչեք, մնաք դուք բարո՞վ:

Փաղեր: Դուքս է զնում Կեսարը իր շքախմբով:

Կլեապատրա—Աղջիկնե՛ր, նա ինձ շողոքորթում է,
Շողոքորթում է, որ նև վիճնեմ
Վեհանձն դեպի ինձ: Լսի՛ր, Շարմիա՛ն:

Փափում է Շարմիանի ականջին:

Երաս—Վերջացրո՞ւ, տիկի՞ն, պայծառ օրն անցավ,
Մենք գնալու ենք դեպի խավարը:
Կլեապատրա—Շտապի՛ր նորից, արդեն խռոսել եմ
Եվ հոգացված է, շո՛ւտ, շտապեցրո՞ւ:
Շարմիան—Կշտապեմ, տիկին:

Վերամտնում է Դոլարելլան:

Դոլարելլա—Ո՞ւր է թագուհին:
Շարմիան—Ահա տե՛ս, սինյո՛ր:

Շարմիանը դուքս է զնում:

Կլեապատրա—Օ՛, Դոլարելլա:
Դոլարելլա—Ես հավատարիմ, տիկին, այն մերդան,
Որ ձեզ արել եմ և որ իմ սերը
Պարտ է գործադրել, ինչպես մի վլրոն,
Ես կատեմ ձեզ այս—Կեսարի միտքն է
Ճանապարհորդել Սիրիայի միջից,
Եսլ արեք օրից ձեզ ձեր մանկանց հետ
Պիտի ուղարկի առաջ: Օգովեցե՛ք
Այս լուրից այնքան որքան կարող եք:

Ես կատարել եմ ձեր ցանկությունը

Եվ իմ խոսումը:

Կլեոպատրա—Օ՛, Գոլարելլա, ես պիտի մնամ

Ձեր պարտապանը:

Գոլարելլա—Իսկ ես՝ ձեր ժառանչ Մնացե՛ք բարով,

Բարի թագուհի, պիտի է հետեւից

Ես այժմ Կեռարին:

Կլեոպատրա—Գնացե՛ք բարով, շնորհակալ եմ:

Գուրս է, զնում Գոլարելլան:

Իսկ այժմով, Իրա՛ս, ի՞նչ ես մտածում,

Դու, փրրե պուպրիկ մի եղիպատական,

Պիտի ցուց տրվես Հոռմում, ինձ պիս,

Յուզոս գումարցալ և քանոններով,

Մուրճերով ուստիկ արհեստավորներ

Պիտի բռնեն մեզ, վեր քարձրացնեն,

Որպեսզի տեսնեմ, կրապիտ կերակրով,

Գարշորեն Հոռտած թանձր շնչերով

Մենք պիտի լինենք ամողածածկված,

Եվ բռնադասված միայն պիտի ըմպենք

Նրանց գոլորշին:

Իրաս—Աստվածները մեզ պահե՞ն դրանից:

Կլեոպատրա—Բայց խիստ ստույդ է այս բանը, Իրա՛ս:

Իիր թիկնապահներ պիտի շանք թափեն

Մեզ ձեռք անցընել իրրե պոռնիկներ,

Քոսոտ քերթողներ պիտի հորինեն

Մեզ վրա տաղեր խիստ աններգաշնակ,

Ճապուկ, սրամիտ կատակերգակներ

Պիտի բնմազրեն մեզ և ցուց տան մեր

Ալեքսանդրյան շվայտանքները:

Եվ Անտոնիոսը պիտի բերովի բնմ

Գինով վիճակում, պիտի տեսնեմ մի

Ճշացող տղու³⁷ Կլեոպատրայի

37 Ծերսպիրի ժամանակ՝ շկալին՝ գերասանուհիներ՝ և կանանց՝ դերերը՝ կառաքում՝ էին սիրուն տղաներ:

Հառպիտող գերուամ՝ իբրև մի պոռնիկ:

Իրաս—Բարի՛ աստվածներ:

Ալեսպատրա—Եվ դա ստույգ է:

Իրաս—Երբեք չեմ տեսնի ես այդ, վասնզի

Ես վաստա՞ն եմ, որ իմ մղունգները

Ավելի սուր են, քան իմ աշքերը:

Ալեսպատրա—Ահա միջոցը՝ ձեռ առնելու նրանց

Պատրաստությունը և նվաճելու

Մտադրությունը նրանց արտառոց:

Վերամտնում է Շարմիանը:

Եվ այժմ, Շարմիա՛ն, և տո՛ւք, նաժիշտնե՛րս,

Յուցարկեցի՛ք ինձ գերթ մի թագուհի,

Գնացե՛ք, բերեք իմ գեղեցկագույն

Հանդերձանքները, ահա գնում եմ

Ես նորից Կյուսնոս՝ դիմավորելու

Անտոնիոսին, իրա՛ս, գնա՛ դու:

Ազնի՛վ Շարմիան, մենք պիտի վճռենք,

Եվ եթե երբեք դու կատարես այս

Դործը, ես պիտի տամ քեզ արձակուրդ,

Որ զվարճանաս մինչև դատաստան:

Թե՛ր դու մեր թագը, բե՛ր և ամեն ինչ:

Իրասը գնում է դուրս: Խվանմ է մի աղմուկ:

Ի՞նչ աղմուկ է այս:

Մտնում է պահակներից մեկը:

Պահակ—Կա մի գեղջուկ, որ անհրաժեշտութեն

Յանկանոամ է գալ ձերդ բարձրության

Ներկայությանը: Զեզ թուզ է բերում:

Ալեսպատրա—Թույլ տվեք դա ներս:

Պահակը դուրս է զնում:

Ինչ խեղճ մի փորձիք կարող է անել
Մի առջնիով արարք. նու թերում չ փմ
Ազգական թյունը ից որոշակիք
Տրված չ արգեն և զոնիոմ տշինչ
Կանուացի իւմ մնչ, այժմը պատիմ
Մինչեւ ուր ևս սարսար ևմ Հաստատ,
Հարակամարտի լուսինք³⁸ չէ փմ
Մոլորակն այժմ:

Վերամտնում է պահակը մի գեղջուկի նետ,
ուն իր նետ բերում է, մի կողով:

Պահակ—Ահա արն մարդու:
Կլեոպատրա—Զդի՛ր և գնա:

Պահակը զնում է:

Ունե՞ս դու ախուն որպք նեղոսի,
Որ ապանում է, բայց ցալ չի տալիս:

Գեղջուկ—Ճիշտն ասած՝ ունեմ, բայց ևս չէից ցանկանա, որ դուք Հապեիք-նրան, վասնդի նրա խածնումը մահացու է: Նրանք, որոնք դժանից հիմանդանուամ են, Հաղթականում կամ երրեք շեն-լավանում:

Կլեոպատրա—Դու Ճիշո՞ւմ ես մեկը, որ զրանից մեռած լինի:

Գեղջուկ—Շատ շատերը, թե տղամարդիկ, թե կանայք: Նրանցից մեկի մասին ես լսեցի հենց երեկ, թե ինչպես մի շատ պարկեշտ կին, բայց մի քիչ ստախոսության հակում ունեցող, մի բան, որ կինը շպետք է անի, բայց եթի պարկեշտությամբ, ինչպես մեռել է դրա խածնուանից և ինչպես ցալ է զգացիկ: Ճիշտն ասած՝ այդ կինը լավ տեղեկություն է տալիս որդի մասին, բայց նա, ով Հաղթատում է ինչ որ ասում են, չի կարող երրեք աղատվել կիսովն այն բանից, որ նրանք անում են: Բայց ինչ որ սխալ է, այն է, որ որդը տարօրինակ որդ է:

³⁸ Եգիպտացիները պաշտում էին լուսինը՝ Հանուն եռիսի:

Կլեոպատրա—Գնա, գնաս բարովէ:
Գեղջուկ—Ցանկանում եմ ձեզ որդի բոլոր վայելքը:

Ցած է դնում կողովը:

Կլեոպատրա—Գնաս բարովէ:
Գեղջուկ—Դուք պիտի մտածեք, որ որդը գործադրում է իր բնուկթը:
Կլեոպատրա—Այո՛, այո՛, գնաս բարովէ:
Գեղջուկ—Նայեցե՛ք, որդը միայն փմասուն, հասկացող մարդկանց
ձեռը տաք, վասնզի, ճիշտն առած՝ բարի բան չկա այդ որդի մեջ:
Կլեոպատրա—Հոգս մի քաշիր, զգուշություն կլինի:
Գեղջուկ—Շատ լավէ: Ուտելու ոչինչ մի տաք խնդրում եմ, վասնզի
շարժե կերակրել:
Կլեոպատրա—Ինձ կուտի՞:
Գեղջուկ—Դուք շպեսոք է կարծեք, որ ես այնքան պարզունակ եմ, ես
գիտեմ, որ ինքը սատանան չի ուստի մի կնոջ: Ես գիտեմ, որ կինը
լավ պնակ է աստվածների համար, եթե սատանան չհամեմի
նրան: Բայց, ճիշտն ասած՝ հենց այս պռոնկորոդի սատանաները
մեծ վնաս են հասցնում աստվածներին՝ իրենց կանանց մեջ:
Վասնզի նրանց ստեղծած ամեն մի տասից սատանաները եղծա-
նուամ են հինգը:

Կլեոպատրա—Լա՛վ, գնա՛, գնա՛ս բարովէ:
Գեղջուկ—Այո, հավաստ վկա, ես ցանկանում եմ ձեզ որդի վայելքը:

Դուս է զնում:
Վերամտնում է Իրասը՝ հանդերձանելով, բագով և այլն:

Կլեոպատրա—Տո՛ւր ինձ հագուստն իմ և դի՛ր իմ թագը,
Ես ունեմ անմահ կարուներ իմ մեջ,
Ել Եգիպտոսի խաղողի Հյութը
Չպիտի տամկի այս շրթունքները,
Աշխույժ և արագ, բարի՛ դու Իրա՛ս,
Կարծես լսում եմ, որ Անտոնիոսը
Ինձ ձայն է տալիս, տեսնում եմ նրան,
Որ վեր է կենում ներբռդելու իմ
Աղնիվ արարքը, լսում եմ, որ նա

Ասպրում է, հեղնում Կեսարի բախտը,
Որ աստվածները ստալիս մն մարդկանց
Արդարացնելու ցասումն հետագա,
Աշա գայն մամ, ո՞վ իմ ամուսին,
Այժմ այդ անունին վեմ քաջությունը
Թող ապացուցի վեմ իրավունքը,
Ես հուր եմ և օդ, վամ այլ տարրերը
Ես նովիրում եմ առարին կյանքին
Վերացրի՝ գուրք Ուրամբն եկեք,
Ստացե՛ք շուրջիս հուակ գերմությունը,
Մնա՛ս գու բարով, բարի՛ Շարժիսա՛ն,
Օ՛, իրաս, երկա՛ր մնաս գու բարսվ!

Համբուրում է հանց, Խասն բնկնում է, և մեռնում:

Ունե՞մ ես իժը շրմներիս վրաւ
Ի՞նչ է, ընկնո՞ւմ ես: Եթե բնությունը
Եզ գու կարող մը այսպէս հեշտությամբ
Զատվել իրարեց, մահվան հարվածը
Մի սիրելիանի հորումն է, որ
Ցափեցրնում է, բայց ցանկանում ես:
Խաղաղ պառկո՞ւմ ես: Եթե գու այսպես
Անէանում ես, ասում ես բոլոր
Աշխարհին՝ չարժե առնել հրաժեշտ:
Շարմիան—Լուծվի՛ր, թանձր' ամակ, և կաթի՛ր անձրև,
Որպեսզի ասեմ, որ աստվածները
Իրենք են լալիս:
Կլեոպատրա—Սա ցույց է առիս, որ ես ստոր եմ,
Թէ առաջինը նա հանդիպի իմ
Գանգուր ծամերով Անտոնիոսին,
Նա պիտի անի պահանջ նրանից,
Եզ պիտի մսիմի այն համբուլը, որ
Ինձ կլինի իմ երանությունը:
Արի՛, օ՛, արի՛, մահարեր կախարդ,
Քանդիր հանգույցը իսկուն, այս կյանքի,
Քո ատամներով թունավոր ու սուր:

(Թմին, որ դեռև է կրծքի վրա)։

Խեղճ թունոտ հիմար, զգեցիր ցասում
Եկ վերջացըրո՛ւ: Օ՛, երանի՛ թե
Խոսեիր, որ մա կարողանայի
Լսել քո բերնից, որ մեծ Կեսարն է
Մի կոշա կոպիտ էլ:

Շարմիան—Աստղ արևելյա՞ն:

Կլեոպատրա—Խաղաղ ու համպիստ, դուչե՞ս տեսնում իմ

Մանկիկն իմ կրծքին, որ ծծում է մինչ
Քնի դայակը:

Շարմիան—Ճեղքըվի՛ր, իմ սիրու:

Կլեոպատրա—Այնքան քաղցր, որքան բալասանն, այնքան

Փափուկ, որքան օդն և այնքան պողտրիկ,
Օ՛, Անտոնիոս: Վերցնեմ քե՛զ էլ:

(Մի ուժիշ իժ դեռև է բազի վրա)։

Եվ ինչո՞ւ մնամ —

Մեռնում է:

Շարմիան—Այս շար աշխարհ՞ւմ: Գնա՞ս դու բարով:

Այժըմ պարծեցի՛ր, ո՞վ մահ, դու ոնիս

Մի ամնզուգական, մի չքնաղ աղջիկ:

Այժըմ փակվեցի՛ք, դուք մինուրափափուկ

Ով լուսամուտներ, և թող ոսկեղեն

Արեգին երբեք նորից չնայեն

Այսքան վեհ աշքեր: Թո թագը ծուռ է,

Թող ուղղեմ ես այն և գնամ խաղամ:

Մտնում են պահակները՝ ներս խուժելով:

Առաջին պահակ—Ո՞ւ է թագուհին:

Շարմիան—Ճած խոսի՛ր և մի՛ զարթնեցնիր նրան:

Առաջին պահակ—Կեսարն ուղարկեց —

Շարմիան—Զափազանց դանդաղ մի պատգամարեր:

Դնում է մարմնի վրա մի իծ:

Օ՛, արի՝ արտակ և ջուառով վիճ' բշ տուր,
Ես ակտուամ եմ մասուամք քեզ գդալ

Առաջին պահակ—է՛նէ՛յ, մոդակցի՞ք Ամեն ինչ վատ է:
Կեսարը խարսխած է:

Երկրորդ պահակ—Կեսարն ուղարկել է Դուլարելլային,
Կամչեցի՞ք նրան:

Առաջին պահակ—Ի՞նչ է պատահել այստեղ, Շարմիան:
Եղ լա՞վ է եղիր:

Շարմիան—Շատ լավ է մղել և շատ էլ պատշաճ
Մի փշամնունու՝ սերած այնքան շատ
Թագավորնմերից: Օ՛, դիմովր...

Սենում է:
Վերամտնում է Դուլարելլան:

Դուլարելլա—Հե՛յ, ի՞նչ է անցնում և դառնում այստեղ:
Երկրորդ պահակ—Բոլորը մնուած:

Դուլարելլա—Կեսա՛ր, խո՛հը դիրականացան:

Ահա դալիս ևս անձամբ տեսնելու
Կատարախած ահեղ արարքն այն, որ դու
Զանք էիր թափում խոշընդուահելու:

(Ներսից)

Է՛նէ՛յ, ճանապարհ, Կեսարն է դալիս,

Վերամտնում է Կեսար՝ ամբողջ շբախմբով:

Դուլարելլա—Օ՛, տե՛ր իմ, դուք մի շատ լավ դուշակ եք,
Ինչ բանից որ դուք վախենում էիք,
Արդեն եղել է:

Կեսար—Արփագույնը կլանքի հուսկ պահին,
Նա դուշակեց մեր նպատակները,
Եվ, ունենալով արքայի արյուն,
Քնտրեց իր ուղին: Ինչպէ՞ս են մեռել
Արյուն չեմ տեսնում:

Դուլարելլա—Ո՞վ կար նրանց հետ վերջնական պահին:

Առաջին պահակ—Մի պարզուկ գեղջուկ, որ թուզ էր բերել։
Ահա կողովը։

Կեսար—Ուրեմըն նրանք թունավորած են։

Առաջին պահակ—Այս Շարմիանը, Կեսար, ապրում էր
Դեռ մի քիչ առաջ, ոտի վրա էր

Եվ նա խոսում էր, և գոտա նրան,

Երբ հարդարում էր թագն ու պսակը

Մեռած տիրուհու, նա դողդողում էր

Եվ հանկարծ ընկավ։

Կեսար—Վեհակ տկարություն, թե թույն կուլ տային,

Պիտի երևեր արտաքին ուռով,

Բայց Կլեոպատրան թվում է քնած,

Կարծես ցանկանար նա բռնել մի այլ

Անտոնիոս իր հրապուրանքիւ

Հզոր թակարդում։

Դոլարելլա—Ահա, կրծքի վրա կա արյան մի ցայտք,
Ինչ որ տուած է, նույնը թևի վրա։

Առաջին պահակ—Իժի հետքն է այս, թզատերեւներն

Ունեն լորձնահյութ, այն տեսակը, որ

Իժը թողնում է այս նեղոս գետի

Քարայրների վրա։

Կեսար—Հավանական է այդպես է մեռել,

Վասնզի նրա բժիշկն ինձ ասաց,

Որ որոնում էր անվերջ փորձերով

Դյուրին մեռնելու ճանապարհները։

Վերցրե՛ք մահին իր և տարեք նրա

Նաֆիշտներին դուրս այս դամբարանից։

Կլեոպատրան պետք է թաղվի իր

Անտոնիոսի հետ, ո՞չ մի գերեզման

Այս երկրի վրա իր մեջ շպիտի

Ընդգրկի մի գույգ այսքան անվանիւ

Մեծ դիպվածները, ինչպես սրանք են,

Շանթահարում են նրանց, որոնք այդ

Մեծ դիպվածները առաջացնում են։

Նրանց պատմությունն այնքան ստոր չէ

Կարեկցության մեջ, որքան փառքը նրա,

Որ առաջ բերեց սպրի հնմակա
Այս դիպվածները եզլ մեր բանակը
Եքեղ հանողիսով արեաք է որ ներկա
Լինի այս թաղման, ապա գեզի Հոռմ:
Օ՛, Գոբարելլա՛, արի՛ և հոգ տար,
Որ վսեմ կարգով տեղի տնինա
Հանգիսությունն այս:

Գուրս են զեռմ:

Վ Ե Բ Զ

Վերջացած 1936 թ. ապրիլի 20-ին,
վերամշակված մայիս, հունիս, հուլիս, 1936 թ.,

ՎԱՀԱՆ ՔՈԲՈՅԱՆՑ